   1) $(6;+\infty)$ 2) $[6;+\infty)$ 3) $(5;6]$ 4) $(5;6)$

12. Լուծել անհավասարումը.

1. $2^{\sqrt{5-x}}>-2$:

   1) $(-\infty;+\infty)$ 2) $\varnothing$ 3) $(-\infty;4)$ 4) $(-\infty;5]$

2. $x^2-|x|-12<0$:

   1) $(-\infty;-3)\cup(4;+\infty)$ 2) $(-4;4)$
   3) $(-\infty;-4)\cup(4;+\infty)$ 4) $(-3;4)$

3. $\log_{0,7}(6-x)>0$:

   1) $(5;+\infty)$ 2) $(5;6)$ 3) $(-\infty;6)$ 4) $(-\infty;5)$

4. $(x^2-9)(ctg^2x+2)<0$:

   1) $(-3;0)\cup(0;3)$ 2) $(-3;3)$
   3) $(-\infty;-3)\cup(3;+\infty)$ 4) $(-\infty;3)$

www.atc.am

13. Լուծել անհավասարումը.

1. $3(x+1) \le 5(x-1)$:

1) $(-\infty; -1]$ 2) $[1; +\infty)$ 3) $(-\infty; 4]$ 4) $[4; +\infty)$

2. $|x-1| < 1$:

1) $(0; 2)$ 2) $(-\infty; 0)$ 3) $(-\infty; 2)$ 4) $(1; 2)$

3. $3^x \ge \frac{1}{3}$:

1) $(-\infty; -1]$ 2) $[-1; +\infty)$ 3) $(-\infty; +\infty)$ 4) $[1; +\infty)$

4. $\frac{(x-4)^2}{x(9-x)} \le 0$:

1) $(0; 4) \cup (4; 9)$ 2) $(0; 9)$
3) $(-\infty; 0) \cup (9; +\infty)$ 4) $(-\infty; 0) \cup \{4\} \cup (9; +\infty)$

14. Տրված են $6 < a < 12$ և $-3 < b < -2$ անհավասարությունները:

1. Գտնել $a+b$ գումարի բոլոր հնարավոր արժեքների բազմությունը:

1) $(3; 10)$ 2) $(9; 14)$ 3) $(8; 15)$ 4) $(9; 10)$

2. Գտնել $a-b$ տարբերության բոլոր հնարավոր արժեքների բազմությունը:

1) $(9; 14)$ 2) $(8; 15)$ 3) $(9; 10)$ 4) $(3; 10)$

3. Գտնել ab արտադրյալի բոլոր հնարավոր արժեքների բազմությունը:

1) $(-24; -18)$ 2) $(12; 36)$ 3) $(-36; -12)$ 4) $(3; 10)$

4. Գտնել $\frac{a}{|b|}$ հարաբերության բոլոր հնարավոր արժեքների բազմությունը:

1) $(2; 6)$ 2) $(3; 4)$ 3) $(-6; -2)$ 4) $(-4; -3)$

www.atc.am

15. Լուծել անհավասարումը.

1. $5x > x^2$:

1) $(0;5)$ 2) $[5;+\infty)$ 3) $(-\infty;0)$ 4) $[0;5]$

2. $\sqrt{2-x} \le \sqrt{5}$:

1) $(-3;2)$ 2) $(-\infty;2]$ 3) $[-3;+\infty)$ 4) $[-3;2]$

3. $\left(\frac{1}{2}\right)^x < \frac{1}{8}$:

1) $(-\infty;3)$ 2) $(3;+\infty)$ 3) $[3;+\infty)$ 4) $(1;3)$

4. $\log_{0,25}\left(\frac{1}{4}x+2\right) \le 1$:

1) $(-\infty;-7]$ 2) $(-8;-7]$ 3) $[-7;+\infty)$ 4) $(-8;+\infty)$

16. Լուծել անհավասարումը.

1. $x^2 > 1$:

1) $(-\infty;+\infty)$ 2) $(1;+\infty)$ 3) $(-1;1)$ 4) $(-\infty;-1)\cup(1;+\infty)$

2. $\frac{3}{x} < \frac{5}{x}$:

1) $\varnothing$ 2) $(-\infty;0)$ 3) $(0;+\infty)$ 4) $(3;5)$

3. $\frac{2x+6}{\sqrt{x+2}} \le 0$:

1) $(-\infty;-3]$ 2) $[-3;-2)$ 3) $(-2;+\infty)$ 4) $\varnothing$

4. $3^{x^2+1} \le 2$:

1) $\varnothing$ 2) $(-\infty;\log_3 2-1]$

3) $[\log_3 2-1;+\infty)$ 4) $\left[-\sqrt{1-\log_3 2};\sqrt{1-\log_3 2}\right]$

www.atc.am

17. Լուծել անհավասարումը.

1. $\frac{x^2-4x}{2} \le -2$:

1) 2 2) $(-\infty; 2]$ 3) $\varnothing$ 4) $(-\infty; +\infty)$

2. $\left(2-\log_2 3\right)^{2-x} > 1$:

1) $(-2; +\infty)$ 2) $(2; +\infty)$ 3) $(-\infty; 2)$ 4) $(-\infty; -2)$

3. $\sin\frac{8\pi}{7}\cdot\left(\sqrt{3-x}+1\right) < 0$:

1) $(-\infty; 3]$ 2) $\varnothing$ 3) $(2; +\infty)$ 4) $(-\infty; 2)$

4. $3^{|x-3|} \ge 3$:

1) $[2; 4]$ 2) $(-\infty; +\infty)$ 3) $\varnothing$ 4) $(-\infty; 2]\cup[4; +\infty)$

18. Լուծել անհավասարումը.

1. $\frac{x-4}{3} \le \frac{4x-1}{2}$:

1) $\left(-\infty; -\frac{1}{2}\right]$ 2) $\left(-\frac{1}{2}; +\infty\right)$ 3) $\left[\frac{1}{2}; +\infty\right)$ 4) $\left[-\frac{1}{2}; +\infty\right)$

2. $\sqrt{-x} \ge \sqrt{x+4}$:

1) $(-\infty; -2]$ 2) $(-\infty; -2)$ 3) $(-4; -2]$ 4) $[-4; -2]$

3. $(0{,}125)^x \le \frac{1}{64}$:

1) $(-\infty; -2]$ 2) $[2; +\infty)$ 3) $(2; +\infty)$ 4) $[0; +\infty)$

4. $\log_9(x-7) > \log_4 2$:

1) $(7; +\infty)$ 2) $(9; +\infty)$ 3) $(10; +\infty)$ 4) $[10; +\infty)$

www.atc.am

19. Լուծել անհավասարումը.

1. $5(x+3)<2x$:

1) $(-\infty;-5)$ 2) $[-5;\ 0)$ 3) $[0;1]$ 4) $(1;+\infty)$

2. $2^{x-1}\cdot 2^{x+1}<1$:

1) $\varnothing$ 2) $(-\infty;0)$ 3) $[0;1)$ 4) $[1;+\infty)$

3. $\log_2(x-1)>2$:

1) $\varnothing$ 2) $(-\infty;1)$ 3) $[1;5]$ 4) $(5;+\infty)$

4. $|x-2|<1$:

1) $(1;3)$ 2) $(-\infty;1)\cup(3;+\infty)$ 3) $(-1;\ 1)$ 4) $(-\infty;3)$

20. Լուծել անհավասարումը.

1. $x+5>5(x+1)$:

1) $(-\infty;0)$ 2) $(0;+\infty)$ 3) $\left(-\infty;-\frac{1}{4}\right)$ 4) $(4;+\infty)$

2. $3^x-2\cdot 3^{x-2}\le 63$:

1) $(-\infty;0)$ 2) $(-\infty;4]$ 3) $(-\infty;2]$ 4) $(-\infty;1]$

3. $|x^2-2x|\ge 3$:

1) $[-3;1]$ 2) $[-1;3]$ 3) $(-\infty;-3]\cup[1;+\infty)$ 4) $(-\infty;-1]\cup[3;+\infty)$

4. $\sqrt{x^2-1}<x$:

1) $(-\infty;-1]$ 2) $[-1;\infty)$ 3) $[1;\infty)$ 4) $(-\infty;+\infty)$

www.atc.am

21. Լուծել անհավասարումը.

1. $\frac{5+4x}{4} \le \frac{x+1}{2}$:

1) $(-\infty; -0,5]$ 2) $(-\infty; 3,5]$ 3) $(-\infty; -1,5]$ 4) $[1,5; +\infty)$

2. $\sqrt{3x-12} \ge 3$:

1) $[4; +\infty)$ 2) $[7; +\infty)$ 3) $[1; +\infty)$ 4) $(7; +\infty)$

3. $\left(\frac{3}{2}\right)^{x+1} \ge \frac{9}{4}$:

1) $[3; +\infty)$ 2) $(1; +\infty)$ 3) $[-1; +\infty)$ 4) $[1; +\infty)$

4. $\lg(2x-6) > 2$:

1) $(53; +\infty)$ 2) $(3; +\infty)$ 3) $(47; +\infty)$ 4) $[53; +\infty)$

22. Կատարել առաջադրանքները.

1. Լուծել $\frac{x-1}{2} \ge 0$ անհավասարումը:

1) $[1; +\infty)$ 2) $(-\infty; -1]$ 3) $[-1; +\infty)$ 4) $(-1; +\infty)$

2. Գտնել $x^2 < 26$ անհավասարմանը բավարարող ամբողջ թվերի քանակը:

1) 5 2) 6 3) 10 4) 11

3. Լուծել $3^{x-5} > 9$ անհավասարումը:

1) $[7; +\infty)$ 2) $(-3; +\infty)$ 3) $(7; +\infty)$ 4) $(-\infty; 7)$

4. Լուծել $\log_5(2x-7) \ge 2$ անհավասարումը:

1) $(16; +\infty)$ 2) $(3,5; +\infty)$ 3) $(19,5; +\infty)$ 4) $[16; +\infty)$

www.atc.am

23. Կատարել առաջադրանքները.

1. Լուծել $x^2 \le 9$ անհավասարումը:

1) $[0; 3]$ 2) $(0; 3)$ 3) $(-3; 3]$ 4) $[-3; 3]$

2. Լուծել $\sqrt{x-5} > 7$ անհավասարումը:

1) $(12; +\infty)$ 2) $(5; +\infty)$ 3) $[54; +\infty)$ 4) $(54; +\infty)$

3. Քանի՞ բնական թիվ է բավարարում $5^{x-7} < 125$ անհավասարմանը:

1) 10 2) 9 3) 7 4) անվերջ

4. Լուծել $\log_4 x \le 3$ անհավասարումը:

1) $(-\infty; 64]$ 2) $[0; 64]$ 3) $(-\infty; 81]$ 4) $(0; 64]$

24. Լուծել անհավասարումը.

1. $x^2 - 5x + 6 \le 0$:

1) $(-\infty; 2] \cup [3; +\infty)$ 2) $(-\infty; 3]$ 3) $[2; 3]$ 4) $[2; +\infty)$

2. $|x+5| \le 0$:

1) $\varnothing$ 2) $\{-5\}$ 3) $[-5; 0]$ 4) $[-5; 5]$

3. $\log_3(x-2) > 2$:

1) $(11; +\infty)$ 2) $(8; +\infty)$ 3) $(9; +\infty)$ 4) $(2; +\infty)$

4. $\sqrt{2x-1} > 3$:

1) $\left(\frac{1}{2}; +\infty\right)$ 2) $(0; +\infty)$ 3) $(2; +\infty)$ 4) $(5; +\infty)$

www.atc.am

25. Լուծել անհավասարումը.

1. $6\left(\frac{1}{2}x-\frac{1}{3}\right)>x$:

   1) $(1;+\infty)$ 2) $(2;+\infty)$ 3) $(-1;+\infty)$ 4) $(-2;+\infty)$

2. $\sqrt[3]{2x-1}\le\sqrt[3]{x+3}$:

   1) $[-3;4]$ 2) $\left[\frac{1}{2};4\right]$ 3) $[4;+\infty)$ 4) $(-\infty;4]$

3. $3^{x^2-2}\ge\frac{1}{3}$:

   1) $[1;+\infty)$ 2) $[-1;1]$ 3) $(-\infty;-1]\cup[1;+\infty)$ 4) $[-1;+\infty)$

4. $\log_2(x+1)^3>6$:

   1) $(-\infty;3)$ 2) $(3;+\infty)$ 3) $(-1;+\infty)$ 4) $(-1;3)$

26. Լուծել անհավասարումը.

1. $-x>x$:

   1) $\varnothing$ 2) $(-\infty;+\infty)$ 3) $(0;+\infty)$ 4) $(-\infty;0)$

2. $\sqrt[4]{x}>-2$:

   1) $(-\infty;+\infty)$ 2) $(16;+\infty)$ 3) $[0;+\infty)$ 4) $\varnothing$

3. $-0,25^x<0,25$:

   1) $(-\infty;+\infty)$ 2) $\varnothing$ 3) $(-1;+\infty)$ 4) $(0;+\infty)$

4. $3^{\log_2 x}<9$:

   1) $(0;+\infty)$ 2) $(4;+\infty)$ 3) $(0;4)$ 4) $(8;+\infty)$

www.atc.am

27. Լուծել անհավասարումը.

1. $3(2-x)>7-3x$:

1) $\left(-\infty;\ \frac{1}{6}\right)$ 2) $(0{,}5;\ +\infty)$ 3) $(-\infty;\ +\infty)$ 4) $\varnothing$

2. $x^6<64$:

1) $(-\infty;\ +2)$ 2) $(0;\ 2)$ 3) $(-2;\ 2)$ 4) $(-\infty;\ -2)\cup(2;\ +\infty)$

3. $\sqrt{x-3}>\sqrt{x-6}$:

1) $(-\infty;\ +\infty)$ 2) $[3;\ 6]$ 3) $\varnothing$ 4) $[6;\ +\infty)$

4. $\log_{0,5}(\log_3 x)<0$:

1) $(0;\ 3)$ 2) $(3;\ +\infty)$ 3) $(-\infty;\ 3)$ 4) $(1;\ 3)$

www.atc.am

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ա/Հ	Ենթաառաջադրանքի համարը			
	1	2	3	4
1	3	4	4	3
2	2	2	1	4
3	3	4	4	4
4	3	2	2	1
5	2	1	3	3
6	3	4	4	3
7	4	2	4	3
8	1	2	2	3
9	4	3	2	3
10	4	3	4	4
11	2	2	2	4
12	4	2	2	1
13	4	1	2	4
14	1	2	3	1
15	1	4	2	3
16	4	3	4	1
17	1	2	1	4
18	4	4	2	3
19	1	2	4	1
20	1	2	4	3
21	3	2	4	1
22	1	4	3	4
23	4	4	2	4
24	3	2	1	4
25	1	4	3	2
26	4	3	1	3
27	4	3	4	2

www.atc.am

ԲԱԺԻՆ 5. ՏԵՔՍՏԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

1. Ավտոմեքենան ճանապարհի առաջին կեսն անցավ 100 կմ/ժ արագությամբ, իսկ երկրորդ կեսը՝ 90 կմ/ժ արագությամբ: Ամբողջ ճանապարհը մեքենան անցնում է 19 ժամում:

1. Ճանապարհի առաջին կեսն անցնելու արագությունը քանի՞ տոկոսով է ավելի երկրորդ կեսն անցնելու արագությունից:

   1) 11 2) $11\frac{1}{9}$ 3) 10 4) 12

2. Ճանապարհի երկրորդ կեսն անցնելիս վայրկյանում քանի՞ մետր էր անցնում մեքենան:

   1) 1500 2) 190 3) 20 4) 25

3. Որքա՞ն է ճանապարհի երկարությունը:

   1) 900 կմ 2) 1800 մ 3) 1800 կմ 4) 900 մ

4. Քանի՞ կմ/ժ էր մեքենայի միջին արագությունն ամբողջ ճանապարհին:

   1) 95 2) 10 3) 190 4) $\frac{1800}{19}$

2. Միաժամանակ շարժումը սկսելուց հետո պարզվեց, որ այն ժամանակահատվածում, երբ հեծանվորդն անցնում է 8 կմ, մոտոցիկլավարն անցնում է 20 կմ:

1. Քանի՞ տոկոսով է հեծանվորդի արագությունը պակաս մոտոցիկլավարի արագությունից:

   1) 50 2) 60 3) 40 4) 30

2. Քանի՞ կիլոմետր էր անցել հեծանվորդն այն պահին, երբ մոտոցիկլավարն անցել էր 15 կմ:

   1) 8 2) 10 3) 6 4) 7

3. Քանի՞ ժամում մոտոցիկլավարը կանցնի այն ճանապարհը, որը հեծանվորդը անցնում է 5 ժամում:

   1) 2 2) 3 3) 4 4) 1

4. Քանի՞ կիլոմետր էր անցել մոտոցիկլավարն այն պահին, երբ նա 30 կմ ավելի էր անցել հեծանվորդից:

   1) 40 2) 60 3) 30 4) 50

www.atc.am

3. Գնացքը A-ից B 600 կմ ճանապարհն ըստ չվացուցակի պետք է անցներ 10 ժամում: Շարժումն սկսելուց 4 ժամ հետո գնացքը C կայարանում հարկադրաբար 1 ժամ կանգնեց, որից հետո ավելացնելով նախատեսված արագությունը՝ժամանակին հասավ B կայարան:

1. Քանի՞ կմ/ժ է գնացքի արագությունն ըստ չվացուցակի:

   1) 50 2) 60 3) 70 4) 80

2. Քանի՞ կմ է AC հեռավորությունը:

   1) 200 2) 240 3) 280 4) 320

3. Գնացքը CB ճանապարհահատվածը քանի՞ կմ/ժ արագությամբ անցավ:

   1) 75 2) 64 3) 68 4) 72

4. Ինչքա՞ն ժամանակ ծախսեց գնացքն AB ճանապարհի առաջին կեսն անցնելու համար:

   1) 4ժ 50ր 2) 5ժ 45ր 3) 5ժ 50ր 4) 5ժ

4. Մարզիկը, որը գնում էր գյուղից դեպի կայարան, առաջին ժամում անցնելով 3 կմ, հաշվեց, որ նույն արագությամբ շարժվելու դեպքում 40 րոպե կուշանա գնացքից: Ուստի մնացած ճանապարհը նա անցավ 4 կմ/ժ արագությամբ և կայարան հասավ գնացքի մեկնելուց 45 րոպե շուտ:

1. Մարզիկը քանի՞ կմ/ժ-ով ավելացրեց արագությունը:

   1) 3 2) 2 3) 1 4) 0,5

2. Արագությունն ավելացնելուց հետո մարզիկը քանի՞ րոպեում հասավ կայարան:

   1) 240 2) 285 3) 300 4) 255

3. Քանի՞ կմ է գյուղից մինչև կայարան հեռավորությունը:

   1) 17 2) 20 3) 25 4) 18

4. Քանի՞ րոպեում մարզիկն անցավ ճանապարհի առաջին կեսը:

   1) 165 2) 200 3) 150 4) 105

www.afc.am

5. Գնացքը պետք է անցներ 2640 կմ: Ճանապարհի առաջին կեսի վրա նա ծախսեց 11 ժամ ավելի, քան նախատեսված էր չվացուցակով և, որպեսզի ժամանակին տեղ հասներ, արագությունը դարձրեց 60 կմ/ժ:

1. Ըստ չվացուցակի գնացքը ճանապարհի առաջին կեսը քանի՞ ժամում պետք է անցներ:

   1) 30 2) 33 3) 40 4) 35

2. Գնացքը քանի՞ կմ/ժ արագությամբ անցավ ճանապարհի առաջին կեսը:

   1) 40 2) 25 3) 30 4) 35

3. Գնացքը քանի՞ կմ/ժ արագությամբ պետք է շարժվեր ըստ չվացուցակի:

   1) 40 2) 30 3) 20 4) 35

4. Քանի՞ ժամ ծախսեց գնացքն ամբողջ ճանապարհի վրա:

   1) 16 2) 60 3) 6 4) 66

6. Եթե ճանապարհի $\frac{1}{3}$ -ը գբոսաշրջիկն անցնի ոտքով, իսկ մնացած մասը՝ հեծանիվով, ապա ամբողջ ճանապարհի վրա նա կծախսի 1,5 ժամ: Իսկ եթե ճանապարհի $\frac{1}{3}$ -ը նա անցնի հեծանիվով, իսկ մնացած մասը՝ ոտքով, ապա ամբողջ ճանապարհի վրա կծախսի 2 ժամ 15 րոպե:

1. Քանի՞ ժամ կծախսի գբոսաշրջիկը, եթե ամբողջ ճանապարհն անցնի ոտքով:

   1) 4 2) 3 3) 3,5 4) 4,5

2. Քանի՞ ժամ կծախսի գբոսաշրջիկը, եթե ամբողջ ճանապարհը նա անցնի հեծանիվով:

   1) 0,75 2) 1 3) 1,2 4) 1,5

3. Քանի՞ ժամ կծախսի գբոսաշրջիկը, եթե ճանապարհի կեսն անցնի ոտքով, իսկ մյուս կեսը՝ հեծանիվով:

   1) 1,8 2) 2 3) 1,875 4) 2,5

4. Հեծանիվով ընթանալու արագությունը քանի՞ անգամ է մեծ ոտքով գնալու արագությունից:

   1) 2,5 2) 3 3) 3,5 4) 4

www.gtc.am

7. Նավակի արագությունը գետի հոսանքի ուղղությամբ 15 կմ/ժ է, իսկ հոսանքին հակառակ ուղղությամբ՝ 10 կմ/ժ:

1. Քանի՞ կմ/ժ է գետի հոսանքի արագությունը:

   1) 2 2) 3 3) 5 4) 2,5

2. Քանի՞ կմ/ժ է նավակի արագությունը կանգնած ջրում:

   1) 12,5 2) 10 3) 13 4) 12

3. Գետի հոսանքի ուղղությամբ նավակի 2 ժամում անցած ճանապարհը քանի՞ անգամ է մեծ նույն ժամանակահատվածում հոսանքին հակառակ ուղղությամբ նրա անցած ճանապարհից:

   1) 2 2) 3 3) 1,5 4) 2,5

4. Քանի՞ ժամ հետո նավակի և լաստի հեռավորությունը կլինի 30 կմ, եթե նրանք շարժվեն միևնույն նավամատույցից նույն ուղղությամբ:

   1) 2 2) $2\frac{2}{5}$ 3) $2\frac{1}{2}$ 4) 3

8. Նավակը գետի հոսանքի ուղղությամբ 90 կմ ճանապարհն անցնում է 3 ժամում, իսկ հոսանքին հակառակ ուղղությամբ 80 կմ ճանապարհը՝ 4 ժամում:

1. Լաստը քանի՞ ժամում կարող է անցնել 35 կմ ճանապարհը:

   1) 8 2) 6 3) 7 4) 11

2. Կանգնած ջրում նավակը քանի՞ ժամում կարող է անցնել 125 կմ ճանապարհը:

   1) 5 2) 2,5 3) 3 4) 6

3. Նավակը գետի հոսանքի հակառակ ուղղությամբ 7 ժամում քանի՞ կմ կարող է անցնել:

   1) 140 2) 110 3) 150 4) 120

4. Եթե նավակը և լաստը միաժամանակ A վայրից շարժվեն հակառակ ուղղություններով, ապա քանի՞ ժամ հետո նրանց հեռավորությունը կլինի 60 կմ:

   1) 2 2) 2,4 3) 2,5 4) 3

www.atc.am

9. Նավակի սեփական արագությունը 10 կմ/ժ է, իսկ գետի հոսանքի արագությունը՝ 2 կմ/ժ:

1. Քանի՞ ժամում նավակը կգնա գետի ափին գտնվող մի նավամատույցից մյուս նավամատույցը և կվերադառնա, եթե նավամատույցների հեռավորությունը 24 կմ է:

   1) 5 2) 4,8 3) 8 4)15

2. Նավակը քանի՞ ժամում կգնա և կվերադառնա 24 կմ ճանապարհը կանգնած ջրում:

   1) 5 ժ 2) 4,8 ժ 3) 4 ժ 4) 5,2 ժ

3. Ջրոսաշրջիկները նավակով ուղևորվեցին գետի հոսանքին հակառակ և վերադարձան: Նրանք քանի՞ կմ կարող են հեռանալ, որպեսզի գնալը և վերադառնալը տևի 10 ժ:

   1) 50 2) 24 3) 48 4) 25

4. Նավակի և լաստի հեռավորությունը 16 կմ է: Քանի՞ ժամում նավակը կհասնի լաստին, եթե շարժվի գետի հոսանքի ուղղությամբ:

   1) 2 2) 1,6 3) 1 4) 1,5

10. Գետափնյա A վայրից հակադիր ուղղություններով միաժամանակ դուրս եկան նավակն ու լաստը: 2 ժ հետո նավակը հասավ B վայրը, 1 ժ դադար տվեց, որից հետո հետ շրջվեց և լողաց դեպի լաստը: Նավակի արագությունը կանգնած ջրում 10 կմ/ժ է, իսկ հոսանքի արագությունը 2 կմ/ժ է:

1. Քանի՞ կմ է AB հեռավորությունը:

   1) 16 2) 20 3) 18 4) 24

2. Նավակի արագությունը հոսանքի ուղղությամբ քանի՞ տոկոսով է մեծ նավակի հոսանքին հակառակ ունեցած արագությունից:

   1) 100 2) 50 3) 40 4) $\frac{100}{3}$

3. Քանի՞ կմ էր նավակի և լաստի միջև հեռավորությունը շարժումը սկսելուց 3 ժ հետո:

   1) 30 2) 28 3) 20 4) 22

4. A-ից դուրս գալուց ինչքա՞ն ժամանակ հետո նավակը կհանդիպի լաստին:

   1) 2,2 ժ 2) 3,2 ժ 3) 5 ժ 12 ր 4) 4 ժ 12 ր

www.etc.am

11. Երկու հետիոտն A և B վայրերից միաժամանակ մեկնեցին միմյանց ընդառաջ: 2 ժամ հետո նրանք հանդիպեցին A-ից 8 կմ և B-ից 6 կմ հեռավորություն ունեցող կետում: Առանց կանգ առնելու նրանք շարունակեցին իրենց ճանապարհները: Առաջին հետիոտնը հասավ B և անմիջապես վերադարձավ, երկրորդ հետիոտնը հասավ A և անմիջապես վերադարձավ:

1. Քանի՞ կմ է A և B վայրերի հեռավորությունը:

   1) 28 2) 2 3) 14 4) 15

2. Քանի՞ կմ/ժ է A-ից դուրս եկած հետիոտնի արագությունը:

   1) 3 2) 4 3) 1 4) 2

3. Երկրորդ հանդիպումը B-ից քանի՞ կմ հեռավորության վրա տեղի ունեցավ:

   1) 6 2) 5 3) 4 4) 10

4. Մեկնելուց քանի՞ ժամ հետո հետիոտները երկրորդ անգամ հանդիպեցին:

   1) 6 2) 4 3) 2 4) 5

12. A և B վայրերի միջև, որոնց հեռավորությունը 62 կմ է, A-ից 30 կմ հեռավորության վրա գտնվում է C կայարանը: Հեծանվորդը A-ից C մեկնեց 12 կմ/ժ արագությամբ: 30 ր անց B-ից C մեկնեց մոտոցիկլավարը:

1. Քանի՞ կմ/ժ արագությամբ պետք է շարժվի մոտոցիկլավարը, որպեսզի 4 ժամ անց հասնի C կայարան:

   1) 128 2) 8 3) 4 4) 18

2. Քանի՞ կմ/ժ արագությամբ պետք է շարժվի մոտոցիկլավարը, որպեսզի C կայարան հասնի հեծանվորդի հետ միաժամանակ:

   1) 16 2) $\frac{64}{5}$ 3) 4 4) 10

3. Քանի՞ կմ/ժ արագությամբ պետք է շարժվի մոտոցիկլավարը, որպեսզի C կայարան հասնի հեծանվորդից 1 ժ 10 ր շուտ:

   1) 18 2) 24 3) $\frac{192}{5}$ 4) 26

4. Ի՞նչ արագությամբ պետք է շարժվի մոտոցիկլավարը, որպեսզի C կայարան հասնի ավելի շուտ, քան հեծանվորդը:

   1) 16 կմ/ժ-ից ավելի 2)16 կմ/ժ-ից պակաս 3) 15 կմ/ժ 4) 16 կմ/ժ

www.aic.am

13. A քաղաքից դեպի B քաղաքը մեկնեց բեռնատար ավտոմեքենան 40 կմ/ժ արագությամբ, իսկ 45 րոպե անց A-ից նույն ուղղությամբ մեկնեց մարդատար ավտոմեքենան՝ 60 կմ/ժ արագությամբ, որը հասավ B քաղաքը և վերադարձավ A: Մարդատարը երկրորդ անգամ հանդիպեց բեռնատարին վերադարձի ճանապարհին, որին մինչև B քաղաք հասնելը մնում էր անցնել 20 կմ:

1. Իր մեկնելուց քանի՞ րոպե հետո մարդատարն առաջին անգամ հանդիպեց բեռնատարին:

   1) 80 2) 70 3) 90 4) 60

2. Քանի՞ կմ է A և B քաղաքների հեռավորությունը:

   1) 130 2) 190 3) 120 4) 150

3. Առաջին հանդիպումից քանի՞ ժամ անց մեքենաները նորից հանդիպեցին:

   1) 2 2) 2,5 3) 1,5 4) $2\frac{3}{4}$

4. A-ից քանի՞ կմ հեռավորության վրա էր գտնվում մարդատարը՝ բեռնատարի B հասնելու պահին:

   1) 120 2) 95 3) 140 4) 185

14. Սայլի առջևի անիվի շրջանագծի երկարությունը 8 դմ է, իսկ հետևի անիվինը՝ 10 դմ:

1. Առջևի անիվի շրջանագծի երկարությունը հետևի անիվի երկարության ո՞ր մասն է:

   1) $\frac{4}{5}$ 2) $\frac{5}{4}$ 3) $\frac{3}{4}$ 4) $\frac{1}{2}$

2. Հետևի անիվի շրջանագծի երկարությունը քանի՞ տոկոսով է մեծ առջևի անիվի շրջանագծի երկարությունից:

   1) 20 2) 25 3) 120 4) 125

3. 40 մետրի վրա առջևի անիվը քանի՞ պտույտ ավելի կկատարի հետևի անիվից:

   1) 1 2) 5 3) 10 4) 12

4. Քանի՞ մետրի վրա առջևի անիվը 30 պտույտ ավելի կկատարի, քան հետևի անիվը:

   1) 30 2) 1200 3) 150 4) 120

www.atc.am

15. 30 էջը մուտքագրելու համար աշխատակիցներից առաջինը ծախսում է 5ժ, իսկ երկրորդը՝ 6ժ:

1. Քանի՞ էջ կարող են նրանք միասին մուտքագրել 1 ժամում:

   1) 6 2) 11 3) 5 4) 10

2. Քանի՞ էջ կմուտքագրի առաջին աշխատակիցը այն ժամանակահատվածում, երբ երկրորդը մուտքագրում է 35 էջ:

   1) 42 2) 40 3) 25 4) 35

3. Քանի՞ էջ է մուտքագրել առաջին աշխատակիցը, եթե նրանք համատեղ մուտքագրել են 88 էջ:

   1) 44 2) 42 3) 48 4) 46

4. Համատեղ աշխատելով նրանք քանի՞ ժամում կմուտքագրեն 165 էջ:

   1) 10 2) 12 3) 14 4) 15

16. Երկու տրակտոր միասին վարեցին դաշտը: Հայտնի է, որ առաջին տրակտորը միայնակ աշխատելու դեպքում դաշտը կվարի 10 օրում, իսկ երկրորդը՝ 15 օրում: Ամբողջ դաշտի մակերեսը 20 հա է:

1. Քանի՞ օրում նրանք վարեցին դաշտը:

   1) 4 2) 6 3) 5 4) 3

2. Քանի՞ հեկտար վարեց երկրորդ տրակտորը:

   1) 9 2) 7 3) 6 4) 8

3. Եթե սկզբում 5 օր վարի միայն առաջին տրակտորը, այնուհետև նրան միանա երկրորդը, ևս քանի՞ օր անց նրանք միասին կավարտեն վարը:

   1) 3 2) 2 3) 1 4) 4

4. Դաշտի կեսը վարելու համար քանի՞ օր կպահանջվեր, եթե սկզբում 3 օր աշխատեր միայն առաջին տրակտորը, իսկ հետո՝ միայն երկրորդ տրակտորը:

   1) 5 2) 3 3) 6 4) 4

www.atc.am

17. Ծորակներից առաջինը ջրավազանը լցնում է 12 ժամում, իսկ երկրորդը՝ 15 ժամում:

1. Դատարկ ավազանի քանի՞ տոկոսը կլցվի, եթե 1 ժամ համատեղ գործեն երկու ծորակները:

   1) 20 2) 25 3)15 4)10

2. Դատարկ ավազանի ո՞ր տոկոսը կլցվի, եթե առաջին ծորակով լցվի 2 ժամ, իսկ երկրորդով՝ 5 ժամ:

   1) 70 2) 60 3) 55 4) 50

3. Քանի՞ րոպեում կլցվի ավազանը, եթե երկու ծորակները բացվեն միաժամանակ:

   1) 400 2)300 3) 350 4)250

4. Դատարկ ավազանը առաջին ծորակով 4 ժամ լցնելուց հետո, ավազանի մնացած մասը քանի՞ ժամում կլցվի միայն երկրորդ ծորակով:

   1) 8 2) 10 3) 12 4) 9

18. Առաջին բրիգադն աշխատանքը կարող է կատարել 20 օրում: Երկրորդ բրիգադն աշխատում է 1,5 անգամ դանդաղ, քան առաջինը:

1. Երկրորդ բրիգադն առաջին բրիգադից քանի՞ տոկոս շատ ժամանակ է ծախսում այդ աշխատանքը կատարելիս:

   1) 30 2) 25 3) 20 4) 50

2. Այդ աշխատանքը քանի՞ օրում կարող է կատարել երկրորդ բրիգադը:

   1) 15 2) 20 3) 25 4) 30

3. Քանի՞ օրում կարող են կատարել աշխատանքը՝ երկու բրիգադը միասին:

   1) 12 2) 50 3) 10 4) 15

4. Քանի՞ օրում կավարտվի աշխատանքը, եթե 16 օր աշխատի առաջին բրիգադը, իսկ աշխատանքի մնացած մասը կատարի միայն երկրորդ բրիգադը:

   1) 20 2) 22 3) 21 4) 18

www.atc.am

19. Առաջին բանվորը մի որոշ աշխատանք կարող է կատարել 20 օրում, երկրորդը՝ 24 օրում, իսկ երրորդը՝ 30 օրում:

1. Աշխատանքի ո՞ր տոկոսը կկատարեն երեք բանվորները՝ 2 օր համատեղ աշխատելով:

   1) 35 2) 20 3) 30 4) 25

2. Քանի՞ օրում ամբողջ աշխատանքը կկատարեն երեք բանվորները՝ համատեղ աշխատելով:

   1) 7 2) 8 3) 6 4) 5

3. Քանի՞ օրում ամբողջ աշխատանքը կկատարեն առաջին և երրորդ բանվորները՝ համատեղ աշխատելով:

   1) 10 2) 11 3) 12 4) 9

4. Եթե առաջին բանվորն աշխատի միայն 5 օր, այնուհետև երկրորդ և երրորդ բանվորները՝ համատեղ աշխատելով քանի՞ օրում կկատարեն աշխատանքի մնացած մասը:

   1) 10 2) 8 3) 6 4) 11

20. Երկու բանվոր մի որոշ աշխատանք համատեղ կարող են կատարել 4 ժամում: Եթե առաջին բանվորն աշխատի 6 ժամ, ապա աշխատանքի մնացած մասը միայն երկրորդ բանվորը կկատարի 1,5 ժամում:

1. Առաջին բանվորի 2 ժամում կատարած աշխատանքը քանի՞ րոպեում կկատարի երկրորդ բանվորը:

   1) 160 2) 140 3) 100 4) 150

2. Քանի՞ ժամում կարող է ամբողջ աշխատանքը կատարել երկրորդ բանվորը:

   1) 10 2) 9 3) 8 4) 7

3. Քանի՞ րոպեում կարող է ամբողջ աշխատանքը կատարել առաջին բանվորը:

   1) 430 2) 480 3) 432 4) 460

4. Քանի՞ ժամում նրանք համատեղ կկատարեն ամբողջ աշխատանքը, եթե առաջինն աշխատի երկու անգամ արագ, իսկ երկրորդը՝ երկու անգամ դանդաղ:

   1) 3,5 2) 2 3) 3 4) 2,5

www.atc.am

21. Համատեղ աշխատելով երկու բանվոր առաջադրանքը կարող են կատարել 12 օրում: Երկրորդ բանվորի արտադրողականությունը երկու անգամ փոքր է առաջինի արտադրողականությունից:

1. Աշխատելով առանձին՝ առաջին բանվորը քանի՞ օրում կկատարի առաջադրանքը:

   1) 8 2) 16 3) 18 4) 36

2. Երկրորդ բանվորը 10 օրում առաջադրանքի ո՞ր մասը կկատարի:

   1) $\frac{5}{8}$ 2) $\frac{5}{16}$ 3) $\frac{5}{18}$ 4) $\frac{5}{36}$

3. Քանի՞ օր է անհրաժեշտ երկրորդ բանվորին՝ առաջադրանքն ավարտելու համար, եթե առաջին բանվորն արդեն աշխատել էր 9 օր:

   1) 9 2) 18 3) 24 4) 36

4. Քանի՞ օրում առաջադրանքի $\frac{4}{15}$ մասը կկատարեն բանվորները միասին, եթե երկրորդ բանվորի արտադրողականությունը մեծանա 20 %-ով:

   1) 3 2) 6 3) 9 4) 12

22. Հեծանվորդը յուրաքանչյուր վայրկյանում անցնում է 4 մ ճանապարհ: Հայտնի է, որ հեծանվի առջևի անիվի շրջանագծի երկարությունը 150 սմ է:

1. Քանի՞ րոպեում հեծանվորդը կանցնի 6 կմ ճանապարհ:

   1) 20 2) 25 3) 30 4) 40

2. Քանի՞ մետր ճանապարհ կանցնի հեծանվորդը, եթե հեծանվի առջևի անիվը կատարի 50 պտույտ:

   1) 65 2) 70 3) 75 4) 80

3. Քանի՞ պտույտ կկատարի առջևի անիվը, եթե հեծանվորդն անցնի 90 մ ճանապարհ:

   1) 50 2) 60 3) 70 4) 80

4. Քանի՞ պտույտ կկատարի հեծանվի առջևի անիվը 2 րոպեում:

   1) 300 2) 320 3) 325 4) 315

www.atc.am

23. 6 մեծ և 4 փոքր պարկերում կա 38 կգ ալյուր, իսկ 4 մեծ և 4 փոքր պարկերում՝ 28 կգ:

1. Քանի՞ կգ ալյուր կա յուրաքանչյուր մեծ պարկում:

   1) 3 2) 4 3) 5 4) 6

2. Քանի՞ կգ ալյուր կա յուրաքանչյուր փոքր պարկում:

   1) 1 2) 2 3) 3 4) 4

3. Փոքր պարկի ալյուրը քանի՞ տոկոսով է քիչ մեծ պարկի ալյուրից:

   1) 25 2) 30 3) 40 4) 60

4. Նվազագույնը քանի՞ պարկ պետք է վերցնել ուղիղ 24 կգ ալյուր ունենալու համար:

   1) 4 2) 5 3) 6 4) 7

24. Ուղղանկյուն եռանկյան էջերի վրա գտնվող A և B կետերից համապատասխանաբար 4 մ/վ և 3 մ/վ արագություններով դեպի եռանկյան C գագաթը միաժամանակ շարժվեցին երկու կետեր:

1. Քանի՞ մետր կլինի կետերի միջև հեռավորությունը 2 վ հետո, եթե $AC=8$ մ, $BC=10$ մ:

   1) 4 2) 3 3) 6 4) 0

2. Քանի՞ մետր կլինի կետերի միջև հեռավորությունը 2 վ հետո, եթե $AC=8$ մ, $BC=6$ մ:

   1) 5 2) 2 3) 3 4) 0

3. Քանի՞ վայրկյան հետո կետերի միջև հեռավորությունը կլինի 0 մ, եթե $AB=10$ մ, $AC=8$ մ:

   1) 1 2) 2 3) 3 4) 4

4. Քանի՞ մետր կլինի կետերի միջև հեռավորությունը 1 վ հետո, եթե $AC=8$ մ, $BC=6$ մ:

   1) 0 2) 5 3) 10 4) 7

www.atc.am

25. Յոթ միատեսակ կոմբայները 490 հա դաշտը կարող են հնձել 7 օրում:

1. Մի կոմբայնը 1 օրում քանի՞ հեկտար կարող է հնձել:

   1) 70 2) 10 3) 49 4) 5

2. Երեք կոմբայնը 3 օրում քանի՞ հեկտար կարող են հնձել:

   1) 90 2) 210 3) 45 4) 147

3. Քանի՞ կոմբայն 40 հա-ը կհնձեն 2 օրում:

   1) 1 2) 5 3) 3 4) 2

4. Քանի՞ օրում 120 հա-ը կհնձեն չորս կոմբայները միասին:

   1) 1 2) 2 3) 3 4) 4

www.atc.am

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ա/Հ	Ենթաառաջադրանքի համարը			
	1	2	3	4
1	2	4	3	4
2	2	3	1	4
3	2	2	4	3
4	3	4	2	1
5	2	3	1	4
6	2	1	3	4
7	4	1	3	2
8	3	1	1	2
9	1	2	3	2
10	1	2	4	3
11	3	2	4	1
12	2	1	3	1
13	3	2	1	3
14	1	2	3	4
15	2	1	3	4
16	2	4	1	3
17	3	4	1	2
18	4	4	1	2
19	4	2	3	1
20	4	2	3	3
21	3	3	2	1
22	2	3	2	2
23	3	2	4	3
24	1	4	2	2
25	2	1	4	3

www.atc.am

ԲԱԺԻՆ 6. ՊՐՈԳՐԵՍԻԱՆԵՐ

1. Կատարել առաջադրանքները.

1. Գտնել (a_n) թվաբանական պրոգրեսիայի այն անդամի համարը, որը հավասար է 100, եթե $a_1=-2,\ a_2=4$:

   1) 17 2) 18 3) 19 4) 20

2. Գտնել (a_n) թվաբանական պրոգրեսիայի 160-ից փոքր անդամների քանակը, եթե $a_1=-2,\ a_2=4$:

   1) 29 2) 28 3) 27 4) 30

3. Գտնել (b_n) երկրաչափական պրոգրեսիայի բոլոր այն անդամների քանակը, որոնք մեծ են 1-ից, եթե $b_2=40,\ b_5=5$:

   1) 5 2) 6 3) 7 4) 8

4. Գտնել (b_n) երկրաչափական պրոգրեսիայի այն անդամի համարը, որը հավասար է 0,625-ի, եթե $b_2=40,\ b_5=5$:

   1)10 2) 7 3) 8 4) 9

2. Աճող թվաբանական պրոգրեսիա կազմող երեք թվերի գումարը 30 է: Եթե երկրորդ թիվը փոքրացնենք 2-ով, ապա կստանանք երկրաչափական պրոգրեսիա:

1. Գտնել թվաբանական պրոգրեսիայի միջին անդամը:

   1) 15 2) 4 3) 6 4) 10

2. Գտնել թվաբանական պրոգրեսիայի տարբերությունը:

   1) 4 2) 6 3) –6 4) –4

3. Գտնել ստացված երկրաչափական պրոգրեսիայի հայտարարը:

   1) 0,5 2) –0,5 3) 2 4) –2

4. Ո՞ր թիվը պետք է գրել ստացված երկրաչափական պրոգրեսիայի երկրորդ և երրորդ անդամների միջև, որ ստացվի թվաբանական պրոգրեսիա:

   1) 15 2) 13 3) 12 4) 14

www.atc.am

3. Կատարել առաջադրանքները.

1. (a_n) հաջորդականությունը թվաբանական պրոգրեսիա է: Գտնել a_5-ը, եթե $a_1 = 8$, իսկ տարբերությունը՝ $d = 3$:

   1) 20 2) 16 3) 22 4) 27

2. a, b, c և 10 թվերը կազմում են թվաբանական պրոգրեսիա, որի տարբերությունը 3 է: Գտնել k բնական թիվն այնպես, որ a, b, c, 10, 13,...,$10+3k$ թվերի գումարը լինի 145:

   1) 4 2) 5 3) 6 4) 7

3. x-ի ո՞ր արժեքի դեպքում 5^{x+17}; 5^x; 25 թվերը կկազմեն երկրաչափական պրոգրեսիա:

   1) 17 2) 19 3) 9,5 4) 18

4. Անվերջ նվազող երկրաչափական պրոգրեսիայի գումարը $\frac{3}{4}$ է, իսկ հայտարարը՝ $\frac{1}{2}$: Գտնել այդ պրոգրեսիայի առաջին անդամը:

   1) $\frac{3}{2}$ 2) $\frac{1}{8}$ 3) $\frac{1}{4}$ 4) $\frac{3}{8}$

4. Կատարել առաջադրանքները.

1. Գտնել $a_1 - 3a_2 + 3a_3 - a_4$ արտահայտության արժեքը, եթե (a_n)-ը թվաբանական պրոգրեսիա է:

   1) 0 2) 1 3) –3 4) 3

2. 1 և 23 թվերի միջև գրված է հինգ թիվ այնպես, որ ստացված հաջորդականությունը թվաբանական պրոգրեսիա է: Գտնել այդ պրոգրեսիայի գումարը:

   1) 60 2) 84 3) 63 4) 120

3. Նշվածներից ո՞րն է երկրաչափական պրոգրեսիա:

   1) 3; 9; 18 2) $\sqrt{5}$; 5; 25 3) 2; –4; –8 4) 0,2; 0,6; 1,8

4. Գտնել $\frac{b_4 - b_2}{b_3 - b_2}$ արտահայտության արժեքը, եթե (b_n)-ը 7 հայտարարով երկրաչափական պրոգրեսիա է:

   1) 3,5 2) 6 3) 7 4) 8

www.atc.am

5. Կատարել առաջադրանքները.

1. Գտնել (a_n) թվաբանական պրոգրեսիայի առաջին անդամը, եթե $3a_5 - a_{13} = 10$:

   1) 5 2) 7 3) 9 4) 10

2. Գտնել 7-ի բազմապատիկ բոլոր երկնիշ թվերի գումարը:

   1) 672 2) 714 3) 728 4) 735

3. Գտնել (b_n) երկրաչափական պրոգրեսիայի այն անդամի համարը, որը հավասար է 48-ի, եթե $b_1 = 3$, $q = 2$:

   1) 2 2) 3 3) 4 4) 5

4. Գտնել x-ը, եթե $\frac{x}{2}+1$, $2x-1$, $6x-8$ հաջորդականությունը երկրաչափական պրոգրեսիա է:

   1) 2,5 2) 3 3) 3,5 4) 4

6. Կատարել առաջադրանքները.

1. Գտնել 16; 14,6; … թվաբանական պրոգրեսիայի ամենամեծ բացասական անդամը:

   1) –1,4 2) –1,6 3) –0,8 4) –0,4

2. Գտնել 4; 6; … թվաբանական պրոգրեսիայի այն անդամի համարը, որի արժեքը 34 է:

   1) 15 2) 16 3) 17 4) 18

3. Գտնել երկրաչափական պրոգրեսիայի չորրորդ անդամը, եթե $b_2 = -2{,}4$, $b_5 = 19{,}2$:

   1) –4,8 2) 17,8 3) 9,6 4) –9,6

4. Անվերջ նվազող երկրաչափական պրոգրեսիայի գումարը 8 է, իսկ երկրորդ անդամը՝ 1,5: Գտնել այդ պրոգրեսիայի հայտարարը:

   1) 0,25 2) 0,75 3) 0,25 և 0,75 4) –0,25

www.atc.am

7. Կատարել առաջադրանքները.

1. $a_1, a_2, a_3, \ldots$ թվաբանական պրոգրեսիայում $a_3 + a_7 = 19$: Գտնել $a_1 + a_4 + a_6 + a_9$ գումարը:

   1)19 2) 57 3) 38 4) 76

2. $b_1, b_2, b_3, \ldots$ երկրաչափական պրոգրեսիայում $b_1 = 1$, $b_{10} = 40$: Գտնել $b_2 \cdot b_9$ արտադրյալը:

   1) 41 2) 40 3) 1600 4) 1681

3. Իրարից տարբեր a_1, a_2, a_3 թվերը կազմում են թվաբանական պրոգրեսիա, իսկ $a_1 \cdot a_2, a_2 \cdot a_3, a_1 \cdot a_3$ թվերը՝ երկրաչափական պրոգրեսիա: Գտնել երկրաչափական պրոգրեսիայի հայտարարը:

   1) 1 2) 2 3) –2 4) 3

4. $a_1, a_2, a_3, \ldots$ հաջորդականությունը թվաբանական պրոգրեսիա է և ցանկացած բնական n թվի դեպքում $S_{2n} = n^2$, որտեղ S_{2n}-ը այդ պրոգրեսիայի առաջին $2n$ անդամների գումարն է: Գտնել $(a_{11} + a_{12})$-ը:

   1) 121 2) 10 3) 100 4) 11

8. Կատարել առաջադրանքները.

1. Գտնել $2; \frac{3}{2}; \ldots$ թվաբանական պրոգրեսիայի ոչ բացասական անդամների քանակը:

   1) 3 2) 4 3) 5 4) 6

2. Գտնել $2; \frac{3}{2}; \ldots$ թվաբանական պրոգրեսիայի ամենամեծ և ամենափոքր դրական անդամների արտադրյալը:

   1) 2 2) 1 3) $\frac{3}{4}$ 4) 0

3. Գտնել $2; \frac{3}{2}; \ldots$ երկրաչափական պրոգրեսիայի հայտարարը:

   1) $\frac{4}{3}$ 2) $-\frac{1}{2}$ 3) $\frac{1}{2}$ 4) $\frac{3}{4}$

4. Գտնել $2; \frac{3}{2}; \ldots$ անվերջ նվազող երկրաչափական պրոգրեսիայի գումարը:

   1) $\frac{4}{3}$ 2) 8 3) 4 4) 6

www.atc.am

9. Կատարել առաջադրանքները.

1. Գտնել $\frac{1}{3}; \frac{1}{2}; \ldots$ թվաբանական պրոգրեսիայի 101-րդ անդամը:

   1) $20\frac{1}{3}$ 2) 18 3) 17 4) $16\frac{2}{3}$

2. Գտնել (a_n) թվաբանական պրոգրեսիայի առաջին 20 անդամների գումարը, եթե $a_1 = -3,\ a_7 = 21$:

   1) 800 2) 840 3) 750 4) 700

3. Գտնել $2^{20}; 2^{17}; \ldots$ երկրաչափական պրոգրեսիայի բոլոր այն անդամների քանակը, որոնք մեծ են 0,125-ից:

   1) 8 2) 7 3) 6 4) 10

4. (b_n) երկրաչափական պրոգրեսիայում $b_5 \cdot b_{11} \cdot b_{14} = 216$: Գտնել այդ պրոգրեսիայի 10-րդ անդամը:

   1) 8 2) 6 3) 5 4) 4

10. Կատարել առաջադրանքները.

1. Գտնել $-13; -10; \ldots$ թվաբանական պրոգրեսիայի 12-րդ անդամը:

   1) 17 2) 20 3) 23 4) 14

2. (a_n) թվաբանական պրոգրեսիայում $a_4 + a_{15} = 15$: Գտնել այդ պրոգրեսիայի 6-րդ և 13-րդ անդամների գումարը:

   1) 11 2) 15 3) 10 4) 4

3. Գտնել x-ը, եթե $-\frac{1}{5}, 10, -x$ հաջորդականությունը երկրաչափական պրոգրեսիա է:

   1) 500 2) –250 3) 2 4) $\frac{1}{50}$

4. Գտնել (b_n) երկրաչափական պրոգրեսիայի հայտարարը, եթե $b_8 \cdot b_{11} = 3(b_9)^2$:

   1) $\pm\frac{1}{2}$ 2) 2 3) $\frac{1}{3}$ 4) 3

www.atc.am

11. Կատարել առաջադրանքները.

1. Գտնել 18; 16,4; … թվաբանական պրոգրեսիայի ամենամեծ բացասական անդամը:

   1) –1,6 2) –1,2 3) –2,4 4) –4

2. Գտնել 3; 5; … թվաբանական պրոգրեսիայի այն անդամի համարը, որի արժեքը 33 է:

   1) 17 2) 14 3) 15 4) 16

3. Գտնել երկրաչափական պրոգրեսիայի չորրորդ անդամը, եթե $b_3 = -8,4$, $b_6 = 67,2$:

   1) 16,8 2) 4,2 3) –33,6 4) –8,4

4. Անվերջ նվազող երկրաչափական պրոգրեսիայի գումարը 4 է, իսկ երկրորդ անդամը՝ 1: Գտնել այդ պրոգրեսիայի հայտարարը:

   1) –0,25 2) 0,25 3) –0,5 4) 0,5

12. Կատարել առաջադրանքները.

1. Գտնել (a_n) թվաբանական պրոգրեսիայի 41-րդ անդամը, եթե $a_1 = 1$, $d = 3$:

   1) 110 2) 121 3) 124 4) 127

2. Գտնել (a_n) թվաբանական պրոգրեսիայի առաջին հիսուն անդամների գումարը, եթե $a_1 = 0,5$, $d = \frac{1}{7}$:

   1) 100 2) 120 3) 200 4) 400

3. Գտնել $\frac{1}{16}; \frac{1}{8}; \ldots$ երկրաչափական պրոգրեսիայի այն անդամի համարը, որը հավասար է 2:

   1) 7 2) 4 3) 5 4) 6

4. Գտնել (b_n) երկրաչափական պրոգրեսիայի 6-րդ անդամը, եթե $b_1 = 81$, $q = \frac{1}{3}$:

   1) 1 2) $\frac{1}{3}$ 3) 3 4) 9

www.atc.am

13. Կատարել առաջադրանքները.

1. Գտնել (a_n) թվաբանական պրոգրեսիայի բացասական անդամների քանակը, եթե $a_{15}=14,\ d=2$:

1) 8 2) 7 3) 6 4) 5

2. Գտնել $\frac{1}{3};\ \frac{7}{3};\ \frac{13}{3}\ldots$ թվաբանական պրոգրեսիայի 10-րդ և 2-րդ անդամների տարբերությունը:

1) $\frac{49}{3}$ 2) 16 3) 49 4) 28

3. Գտնել անվերջ նվազող երկրաչափական պրոգրեսիայի գումարը, եթե $b_1=\frac{3}{2},\ q=\frac{1}{2}$:

1) 1 2) $\frac{1}{2}$ 3) $\frac{2}{3}$ 4) 3

4. Գտնել $\frac{3}{2};\ \frac{3}{4};\ \ldots$ երկրաչափական պրոգրեսիայի յոթերորդ անդամը:

1) $\frac{1}{3}$ 2) $\frac{3}{32}$ 3) $\frac{3}{128}$ 4) 0,125

14. Կատարել առաջադրանքները.

1. Գտնել (a_n) թվաբանական պրոգրեսիայի տարբերությունը, եթե $a_5=17,\ a_{10}=37$:

1) 2 2) 3 3) 4 4) 6

2. Գտնել (a_n) թվաբանական պրոգրեսիայի 11-րդից մինչև 20-րդ անդամների գումարը, եթե $a_2=5,\ d=4$:

1) 570 2) 820 3) 550 4) 590

3. Գտնել դրական անդամներով (b_n) երկրաչափական պրոգրեսիայի առաջին անդամը, եթե $b_6=8,\ b_{10}=128$:

1) 2 2) $\frac{1}{2}$ 3) 3 4) $\frac{1}{4}$

4. Գտնել (b_n) դրական անդամներով երկրաչափական պրոգրեսիայի բոլոր այն անդամների քանակը, որոնք չեն գերազանցում 600-ը, եթե $b_1=\frac{1}{4},\ b_3=1$:

1) 15 2) 10 3) 12 4) 9

www.atc.am

15. (a_n) **թվաբանական պրոգրեսիայում** $d=3$, $S_5=40$:

1. Գտնել այդ պրոգրեսիայի առաջին անդամը:

1) $\frac{1}{2}$ 2) 4 3) 2 4) 1

2. Գտնել այդ պրոգրեսիայի 101-րդ անդամը:

1) 290 2) 320 3) 306 4) 302

3. Գտնել այդ պրոգրեսիայի առաջին 16 անդամների գումարը:

1) 840 2) 392 3) 360 4) 320

4. Գտնել այն ամենամեծ երկնիշ թիվը, որն այդ պրոգրեսիայի անդամ է:

1) 95 2) 99 3) 98 4) 96

16. Կատարել առաջադրանքները.

1. Գտնել 100; 97; ⋯ թվաբանական պրոգրեսիայի 25-րդ անդամը:

1) 24 2) 30 3) 28 4) 26

2. Գտնել 31; 27; ⋯ թվաբանական պրոգրեսիայի բոլոր դրական անդամների գումարը:

1) 150 2) 140 3) 132 4) 136

3. Գտնել $b_1=256$ առաջին անդամով և $q=\frac{1}{2}$ հայտարարով երկրաչափական պրոգրեսիայի բոլոր այն անդամների քանակը, որոնք ամբողջ թվեր են:

1) 15 2) 10 3) 12 4) 9

4. (b_n) երկրաչափական պրոգրեսիայում $b_7=8$, Գտնել $b_1\cdot b_{13}$ արտադրյալը:

1) 64 2) 80 3) 72 4) 60

www.atc.am

17. Կատարել առաջադրանքները.

1. Գտնել $0;\ \frac{1}{5};\ \cdots$ թվաբանական պրոգրեսիայի 101-րդ անդամը:

   1) 100 2) 25 3) 20 4) 18

2. Գտնել 49-ը չգերազանցող բոլոր կենտ բնական թվերի գումարը:

   1) 500 2) 625 3) 620 4) 575

3. (b_n) երկրաչափական պրոգրեսիայում $b_2 = 243$, $b_5 = 9$:
   Գտնել b_7-ը:

   1) 3 2) 2 3) 1 4) $\frac{1}{9}$

4. Գտնել $\frac{1}{3};\ \frac{1}{27};\ \cdots$ անվերջ նվազող երկրաչափական պրոգրեսիայի գումարը:

   1) $\frac{3}{4}$ 2) $\frac{2}{9}$ 3) $\frac{5}{3}$ 4) $\frac{3}{8}$

18. Հաջորդականությունը տրված է $a_1 = 4$, $a_{n+1} = \frac{1}{2}a_n$ առնչությամբ:

1. Գտնել այդ հաջորդականության 3-րդ անդամը:

   1) 1 2) $\frac{1}{2}$ 3) 8 4) 6

2. Գտնել այդ հաջորդականության 4-րդ և 3-րդ անդամների հարաբերությունը:

   1) 2 2) $\frac{1}{2}$ 3) 3,5 4) 5

3. Գտնել այդ հաջորդականության այն բոլոր անդամների քանակը, որոնք մեծ են $\frac{1}{100}$-ից:

   1) 7 2) 11 3) 9 4) 10

4. Գտնել այդ հաջորդականության առաջին 7 անդամների գումարը:

   1) $\frac{127}{16}$ 2) $\frac{63}{8}$ 3) 12 4) 10

www.atc.am

19. Կատարել առաջադրանքները.

1. Գտնել (a_n) թվաբանական պրոգրեսիայի տարբերությունը, եթե $a_{10}-a_7=12$:

   1) 3 2) 4 3) 2 4) 5

2. Գտնել $5; 8; \cdots$ թվաբանական պրոգրեսիայի 11 անդամների գումարը:

   1) 157 2) 185 3) 220 4) 260

3. Գտնել $3; 6; \cdots$ երկրաչափական պրոգրեսիայի 500-ից փոքր անդամների քանակը:

   1) 6 2) 7 3) 8 4) 9

4. Գտնել անվերջ նվազող երկրաչափական պրոգրեսիայի առաջին անդամը, եթե նրա հայտարարը հավասար է $\frac{2}{3}$-ի, իսկ գումարը՝ 6:

   1) 2 2) 4 3) 6 4) 9

20. Կատարել առաջադրանքները.

1. Գտնել $4; 9; \cdots$ թվաբանական պրոգրեսիայի այն անդամի համարը, որը հավասար է 49-ի:

   1) 8 2) 9 3) 10 4) 11

2. Գտնել (a_n) թվաբանական պրոգրեսիայի յոթերորդ անդամը, եթե $S_{13}=65$:

   1) 5 2) 6 3) 7 4) 8

3. Գտնել $2; 6; \cdots$ երկրաչափական պրոգրեսիայի առաջին 6 անդամների գումարը:

   1) 72 2) 344 3) 728 4) 1496

4. Գտնել (b_n) երկրաչափական պրոգրեսիայի առաջին անդամը, եթե $b_5=8$, $b_7=16$:

   1) 1 2) 2 3) 3 4) 4

www.atc.am

21. Տրված է 7; a_2; 7; a_4; a_5; … հաջորդականությունը:

1. Գտնել a_2-ը, եթե (a_n) հաջորդականությունը թվաբանական պրոգրեսիա է:

   1) 0 2) –7 3) 7 4) 14

2. Գտնել a_2-ը, եթե (a_n) հաջորդականությունը երկրաչափական պրոգրեսիա է:

   1) 0 2) 7 և –7 3) 1 4) գոյություն չունի

3. Գտնել a_2-ը, եթե (a_n) հաջորդականությունը երկրաչափական պրոգրեսիա է և $S_{11} = 7$:

   1) –7 2) 7 3) 0 4) 14

4. Գտնել a_{2018}-ը, եթե (a_n) հաջորդականությունը և՛ թվաբանական, և՛ երկրաչափական պրոգրեսիա է:

   1) 1 2) 6 3) –7 4) 7

22. Թվաբանական պրոգրեսիան տրված է $a_n = 4n - 3$ բանաձևով:

1. Գտնել հաջորդականության առաջին երեք անդամների գումարը:

   1) 9 2) 10,5 3) 15 4) 30

2. Գտնել թվաբանական պրոգրեսիայի տարբերությունը:

   1) 3 2) –4 3) –3 4) 4

3. Գտնել x-ը, եթե a_1, a_2, x-ը երկրաչափական պրոգրեսիա է:

   1) 25 2) 9 3) 10 4) 5

4. Գտնել n-ի ամենափոքր արժեքը, որի դեպքում a_n-ը բաժանվում է 2017-ի:

   1) 2522 2) 505 3) 666 4) չունի

www.atc.am

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ա/Հ	Ենթաառաջադրանքի համարը			
	1	2	3	4
1	2	3	3	3
2	4	2	3	3
3	1	3	2	4
4	1	2	4	4
5	1	3	4	2
6	3	2	4	3
7	3	2	3	4
8	3	2	4	2
9	3	4	1	2
10	2	2	1	4
11	2	4	1	4
12	2	3	4	2
13	2	2	4	3
14	3	4	4	3
15	3	4	2	3
16	3	4	4	1
17	3	2	3	4
18	1	2	3	1
19	2	3	3	1
20	3	1	3	2
21	3	2	1	4
22	3	4	1	2

www.atc.am

ԲԱԺԻՆ 7. ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐ

1. Տրված է $f(x)=x^2-\frac{16}{x}$ ֆունկցիան:

1. Գտնել f ֆունկցիայի զրոները:

1) $2\sqrt[3]{2}$ 2) 4 3) 4 և $\sqrt[3]{16}$ 4) –4 և 4

2. Գտնել f ֆունկցիայի ածանցյալը:

1) $2x+16x^2$ 2) $2x-\frac{16}{x^2}$ 3) $2x-16x^2$ 4) $2x+\frac{16}{x^2}$

3. Գտնել f ֆունկցիայի արժեքը մինիմումի կետում:

1) –15 2) –4 3) 4 4) 12

4. Գտնել f ֆունկցիայի նվազման միջակայքը:

1) $[-2;\,0)$ 2) $(0;\,+\infty)$ 3) $(-\infty;\,-2]$ 4) $(-\infty;\,0)$

2. Տրված է $f(x)=\log_{\frac{1}{5}}x$ ֆունկցիան:

1. Գտնել $y=-2$ ուղղի և f ֆունկցիայի գրաֆիկի հատման կետի աբսցիսը:

1) 0 2) 25 3) $\frac{1}{25}$ 4) $-\sqrt[5]{2}$

2. x-ի ի՞նչ արժեքների դեպքում է ֆունկցիայի գրաֆիկը գտնվում Ox առանցքից ներքև:

1) $(1;\,+\infty)$ 2) $(0;\,+\infty)$ 3) $(-\infty;\,1)$ 4) $(0;\,1)$

3. $f(1),\,f(2),\,f(3)$ թվերը դասավորել նվազման կարգով:

1) $f(1),\,f(2),\,f(3)$ 2) $f(3),\,f(1),\,f(2)$
3) $f(2),\,f(1),\,f(3)$ 4) $f(3),\,f(2),\,f(1)$

4. Գտնել $F(x)=f(x^2)$ ֆունկցիայի որոշման տիրույթը:

1) $(0;\,+\infty)$ 2) $(-\infty;\,+\infty)$
3) $(-\infty;0)\cup(0;\,+\infty)$ 4) $(0;\,1)\cup(1;\,+\infty)$

www.atc.am

3. Տրված են $f(x)=\dfrac{x+1}{x-2}$ և $g(x)=\log_{0,2} x$ ֆունկցիաները:

1. Նշված թվերից ո՞րը f ֆունկցիայի արժեք չէ.

1) 0 2) –1 3) 2 4) 1

2. Նշված միջակայքերից որու՞մ է g ֆունկցիայի գրաֆիկը գտնվում $y=-1$ ուղղից վերև.

1) $(2;+\infty)$ 2) $(5;+\infty)$ 3) $(0;5)$ 4) $(-\infty;5)$

3. Գտնել $f+g$ ֆունկցիայի որոշման տիրույթը:

1) $(2;+\infty)$ 2) $(0;2)\cup(2;+\infty)$ 3) $[0;2)$ 4) $[1;2)$

4. Գտնել a-ի բոլոր այն արժեքները, որոնց դեպքում $y=a$ ուղիղը հատում է g ֆունկցիայի գրաֆիկը:

1) $(-\infty;+\infty)$ 2) $[0;+\infty)$ 3) $(-\infty;0)\cup(0;+\infty)$ 4) $(0;+\infty)$

4. Տրված է $f(x)=\dfrac{4x-1}{x-2}$ ֆունկցիան:

1. Գտնել f ֆունկցիայի որոշման տիրույթը:

1) $(-\infty;+\infty)$ 2) $(-\infty;2)\cup(2;+\infty)$ 3) $(2;+\infty)$ 4) $[1;+\infty)$

2. Գտնել f ֆունկցիայի ածանցյալը:

1) $-\dfrac{7}{(x-2)^2}$ 2) $\dfrac{-9}{(x-2)^2}$ 3) $\dfrac{4x+1}{(x-2)^2}$ 4) $\dfrac{4}{x-2}$

3. Գտնել f ֆունկցիայի կրիտիկական կետերը:

1) 2 2) 9 3) չունի 4) 4

4. Գտնել f ֆունկցիայի նվազման միջակայքերը:

1) $(-\infty;2)\cup(2;+\infty)$ 2) $(-\infty;0)$ 3) չունի 4) $(-\infty;2)$ և $(2;+\infty)$

www.atc.am

5. Տրված է $f(x)=2x^2-\ln x$ ֆունկցիան:

1. Գտնել f ֆունկցիայի որոշման տիրույթը:

1) $(0;+\infty)$ 2) $(-\infty;+\infty)$ 3) $[0;+\infty)$ 4) $(1;+\infty)$

2. Գտնել f ֆունկցիայի ածանցյալը $x=\frac{1}{4}$ կետում:

1) $\frac{3}{4}$ 2) $\frac{1}{8}+\ln 4$ 3) $-\frac{3}{4}$ 4) -3

3. Գտնել f ֆունկցիայի կրիտիկական կետերը:

1) $-\frac{1}{2};\ \frac{1}{2}$ 2) $\frac{1}{2}$ 3) 2 4) 4

4. Գտնել f ֆունկցիայի նվազման միջակայքը:

1) $\left[\frac{1}{2};+\infty\right)$ 2) $\left[-\frac{1}{2};\frac{1}{2}\right]$ 3) $\left(0;\frac{1}{2}\right]$ 4) $\left[0;\frac{1}{2}\right]$

6. Տրված է $f(x)=2^x+2^{-x}$ ֆունկցիան:

1. Լուծել $f(x)=f(-x)$ հավասարումը:

1) $\varnothing$ 2) 0 3) $(-\infty;+\infty)$ 4) –2 և 2

2. Գտնել f ֆունկցիայի ածանցյալը:

1) $x\cdot 2^{x-1}-x\cdot 2^{-x-1}$ 2) $2^x\ln 2+2^{-x}\ln 2$
3) $2^x\ln 2-2^{-x}\ln 2$ 4) $2^x\ln x+2^{-x}\ln x$

3. Գտնել f ֆունկցիայի նվազման միջակայքը:

1) չունի 2) $(0;+\infty)$ 3) $(-\infty;0]$ 4) $(-\infty;+\infty)$

4. Նշվածներից ո՞րն է ճիշտ պնդում f ֆունկցիայի համար.

1) կրիտիկական կետ չունի 2) ունի փոքրագույն արժեք
3) ո՛չ զույգ է, ո՛չ էլ՝ կենտ 4) աճող է

www.atc.am

7. Տրված է $f(x)=e^{2x}$ ֆունկցիան:

1. Գտնել ֆունկցիայի արժեքը $x=\ln 5$ կետում:

   1) 10 2) e^{10} 3) 25 4) e^{25}

2. Գտնել ֆունկցիայի որոշման տիրույթը:

   1) $[0;+\infty)$ 2) $(0;+\infty)$ 3) $(-\infty;+\infty)$ 4) $(e;+\infty)$

3. Գտնել ֆունկցիայի ածանցյալը:

   1) e^{2x} 2) $e^{2x}\ln 2$ 3) $2e^{x}$ 4) $2e^{2x}$

4. Գտնել f ֆունկցիայի գրաֆիկին նրա $x_0=0$ աբսցիսն ունեցող կետում տարված շոշափողի հավասարումը:

   1) $y=2x+1$ 2) $y=x+1$ 3) $y=0$ 4) $y=1$

8. Տրված է $f(x)=tgx+x$ ֆունկցիան:

1. Գտնել f ֆունկցիայի ածանցյալը:

   1) $\frac{1}{\cos^2 x}+x$ 2) $\frac{1}{\cos^2 x}$ 3) $\frac{1}{\cos^2 x}+1$ 4) $ctgx+1$

2. Գտնել $y=x$ և f ֆունկցիաների գրաֆիկների հատման կետերի աբսցիսները:

   1) $\pi k,\ k\in Z$ 2) $\frac{\pi}{2}+\pi k,\ k\in Z$

   3) $2\pi k,\ k\in Z$ 4) $\frac{\pi}{4}+2\pi k,\ k\in Z$

3. Գտնել f-ի որոշման տիրույթը:

   1) R 2) $\left(-\frac{\pi}{2}+\pi k;\frac{\pi}{2}+\pi k\right),\ k\in Z$ միջակայքերի միավորումը

   3) $\varnothing$ 4) $\left(-\infty;\frac{\pi}{2}\right)\cup\left(\frac{\pi}{2};+\infty\right)$

4. f ֆունկցիայի համար ճշված պնդումներից ո՞րն է ճիշտ.

   1) պարբերական է 2) զույգ է 3) կենտ է 4) նվազող է

www.atc.am

9. Տրված է $f(x)=\sin x+1$ ֆունկցիան:

1. Գտնել f ֆունկցիայի ածանցյալը:

1) $-\cos x$ 2) $-\cos x+1$ 3) $\cos x$ 4) $-\sin x$

2. Գտնել f ֆունկցիայի գրաֆիկի և $y=1,5$ ուղղի հատման կետերի աբսցիսները:

1) $\frac{\pi}{6}$ 2) $\frac{\pi}{6}+\pi k;\ k\in Z$

3) $(-1)^k\cdot\frac{\pi}{3}+2\pi k;\ k\in Z$ 4) $(-1)^k\cdot\frac{\pi}{6}+\pi k;\ k\in Z$

3. Գտնել f ֆունկցիայի փոքրագույն արժեքը:

1) 1 2) –1 3) 0 4) չունի

4. Հետևյալ թվերից ո՞րն է f ֆունկցիայի պարբերություն.

1) π 2) 3π 3) 2 4) 4π

10. Տրված է $f(x)=\cos 2x-2x$ ֆունկցիան:

1. Գտնել ֆունկցիայի ածանցյալը:

1) $\sin 2x-2$ 2) $-\sin 2x-2$ 3) $-2\sin 2x-2$ 4) $-2\sin 2x$

2. Գտնել ֆունկցիայի կրիտիկական կետերը:

1) $\pm\frac{\pi}{4}+2\pi k, k\in Z$ 2) $-\frac{\pi}{4}+\pi k, k\in Z$

3) $-\frac{\pi}{2}+2\pi k, k\in Z$ 4) $\frac{\pi}{2}+\pi k, k\in Z$

3. Տրված թվերից ո՞րը ֆունկցիայի կրիտիկական կետ չէ:

1) $-\frac{\pi}{4}$ 2) $\frac{3\pi}{4}$ 3) $-\frac{5\pi}{4}$ 4) $\frac{9\pi}{4}$

4. f ֆունկցիան $[-2\pi;\ 2\pi]$ միջակայքում քանի՞ կրիտիկական կետ ունի:

1) 1 2) 2 3) 3 4) 4

www.atc.am

11. Տրված է $f(x)=\frac{x^2}{2}-\ln x$ ֆունկցիան:

1. Գտնել ֆունկցիայի որոշման տիրույթը:

1) $(1;+\infty)$ 2) $(-\infty;+\infty)$ 3) $[0;+\infty)$ 4) $(0;+\infty)$

2. Գտնել ֆունկցիայի ածանցյալը $x=\frac{1}{3}$ կետում:

1) $\frac{10}{3}$ 2) $\frac{1}{18}+\ln 3$ 3) $-\frac{8}{3}$ 4) 0


3. Գտնել ֆունկցիայի կրիտիկական կետերը:

1) –1 և 1 2) 1 3) 1 և 3 4) 1 և $-\frac{1}{3}$

4. Գտնել ֆունկցիայի նվազման միջակայքը:

1) $(0;1]$ 2) $[-1;1]$ 3) $[1;+\infty)$ 4) $[0;1]$

12. Նկարում պատկերված է $f(x)=x^2+px+q$ ֆունկցիայի գրաֆիկը.



1. Գտնել q գործակիցը:

1) –2 2) 2 3) –1 4) 1

2. Գտնել p գործակիցը:

1) –2 2) 2 3) 3 4) –3

3. Գտնել f ֆունկցիայի փոքրագույն արժեքը:

1) 2 2) 3 3) 1 4) –3

4. Գտնել f ֆունկցիայի ածանցյալը $x=1$ կետում:

1) 2 2) 0 3) –1 4) 1

www.atc.am

13. Տրված է $f(x)=\sqrt{x}$ ֆունկցիան:

1. Գտնել տրված ֆունկցիայի որոշման տիրույթը:

   1) $(0;+\infty)$ 2) $(-\infty;0]$ 3) $[0;+\infty)$ 4) $(-\infty;0)$

2. $A(36;-6)$, $B(-81;-9)$, $C(4;16)$, $D(49;7)$ կետերից ո՞րն է պատկանում տրված ֆունկցիայի գրաֆիկին:

   1) A 2) B 3) C 4) D

3. Գտնել ֆունկցիայի գրաֆիկի այն կետի աբսցիսը, որում ֆունկցիայի գրաֆիկին տարված շոշափողը զուգահեռ է $y=x-3$ ուղղին:

   1) $\frac{1}{4}$ 2) $\frac{1}{3}$ 3) 3 4) 4

4. Գտնել այն ֆունկցիայի բանաձևը, որի գրաֆիկը ստացվում է տրված ֆունկցիայի գրաֆիկն օրդինատների առանցքի ուղղությամբ 2 միավոր վերև տեղաշարժելիս:

   1) $y=\sqrt{x-2}$ 2) $y=\sqrt{x}+2$ 3) $y=\sqrt{x+2}$ 4) $y=\sqrt{x}-2$

14. Տրված է $f(x)=\frac{1}{4}x^4-\frac{9}{2}x^2$ ֆունկցիան:

1. Գտնել $f'(-2)$-ը:

   1) – 26 2) –5 3) –14 4) 10

2. Գտնել ֆունկցիայի մինիմումի կետերը:

   1) –3 և 0 2) 0 և 3 3) –3 4) –3 և 3

3. Գտնել ֆունկցիայի աճման միջակայքերը:

   1) $[-3;0]$ և $[3;+\infty)$ 2) $(-\infty;-3]\cup[0;3]$
   3) $[-3;3]$ 4) $(-\infty;-3]$ և $[3;+\infty)$

4. Գտնել ֆունկցիայի փոքրագույն արժեքը:

   1) –40,5 2) 0 3) –20,25 4) 60,75

www.atc.am

15. Տրված են $p(x)=x^4+3x^2-1$ և $q(x)=x-1$ բազմանդամները:

1. Գտնել $p(x)$ բազմանդամի իրական արմատների քանակը:

   1) 1 2) 2 3) 3 4) 4

2. Գտնել $p(x)$ բազմանդամի իրական արմատների միջին թվաբանականը:

   1) 0 2) 1 3) –3 4) 3

3. Գտնել $p(x)\cdot(q(x))^3$ բազմանդամի աստիճանը:

   1) 8 2) 6 3) 12 4) 7

4. Գտնել $p(x)$-ը $q(x)$-ի բաժանելիս ստացվող մնացորդը:

   1) 1 2) 2 3) 3 4) 4

16. Տրված է $f(x)=\dfrac{4x}{x^2+4}$ ֆունկցիան:

1. Գտնել f ֆունկցիայի ածանցյալը:

   1) $\dfrac{2}{x}$ 2) 2 3) $\dfrac{4\left(4-x^2\right)}{\left(x^2+4\right)^2}$ 4) $\dfrac{3x^2+4}{\left(x^2+4\right)^2}$

2. Գտնել f ֆունկցիայի կրիտիկական կետերի քանակը:

   1) 1 2) 2 3) 3 4) 4

3. Գտնել f ֆունկցիայի աճման միջակայքերը:

   1) $[-2,2]$ 2) $(-\infty,-2]$ և $[2,+\infty)$ 3) $[-2,+\infty)$ 4) $(-\infty,2]$

4. Գտնել f ֆունկցիայի մեծագույն արժեքը:

   1) –1 2) 1 3) 4 4) 2

www.atc.am

17. Տրված է $f(x)=\frac{2x}{x^2+1}$ ֆունկցիան:

1. Գտնել f ֆունկցիայի որոշման տիրույթը:

1) $(-\infty;-1)\cup(-1;+\infty)$ 2) $(-\infty;0)\cup(0;+\infty)$
3) $(-\infty;+\infty)$ 4) $(-\infty;2)\cup(2;+\infty)$

2. Գտնել f ֆունկցիայի ածանցյալը:

1) $\frac{1}{x}$ 2) $\frac{2}{2x+1}$ 3) $\frac{2(1-x^2)}{x^2+1}$ 4) $\frac{2(1-x^2)}{(1+x^2)^2}$

3. Գտնել f ֆունկցիայի աճման միջակայքը:

1) $[0;+\infty)$ 2) $[-1;1]$ 3) $(0;+\infty)$ 4) $(-\infty;1]$

4. Գտնել f ֆունկցիայի մեծագույն արժեքը:

1) 1 2) 4 3) 0,8 4) 2

18. Տրված է $f(x)=\frac{4}{x}$ ֆունկցիան:

1. Գտնել f ֆունկցիայի որոշման տիրույթը:

1) $(-\infty;+\infty)$ 2) $(-\infty;0)$ 3) $(0;+\infty)$ 4) $(-\infty;0)\cup(0;+\infty)$

2. Գտնել f ֆունկցիայի ածանցյալը:

1) $-\frac{1}{x^2}$ 2) 4 3) $-\frac{4}{x^2}$ 4) $-4x^2$

3. Գտնել f ֆունկցիայի կրիտիկական կետերը:

1) 0 2) –4 և 4 3) –2 և 2 4) չունի

4. Գտնել f ֆունկցիայի մեծագույն արժեքը $[1;4]$ միջակայքում:

1) 4 2) $-\frac{1}{4}$ 3) 16 4) 1

www.atc.am

19. Տրված է $f(x)=3^{x+1}$ ֆունկցիան:

1. Գտնել f ֆունկցիայի որոշման տիրույթը:

1) $(-\infty;+\infty)$ 2) $(0;+\infty)$ 3) $(3;+\infty)$ 4) $(1;+\infty)$

2. Գտնել f ֆունկցիայի արժեքների բազմությունը:

1) $(-\infty;+\infty)$ 2) $(-\infty;0]$ 3) $(0;+\infty)$ 4) $[3;+\infty)$

3. Գտնել f ֆունկցիայի ածանցյալը:

1) $(x+1)\cdot 3^x$ 2) 3 3) 0 4) $3^{x+1}\ln 3$

4. Գտնել f ֆունկցիայի աճման միջակայքերը:

1) $(-\infty;1)$ 2) $(-\infty;+\infty)$ 3) $(3;+\infty)$ 4) $(0;+\infty)$

20. Տրված է $f(x)=3x-6$ ֆունկցիան:

1. Գտնել f ֆունկցիայի արժեքը 1 կետում:

1) 0 2) –3 3) 3 4) 9

2. Գտնել f ֆունկցիայի կրիտիկական կետերը:

1) 2 2) 0 3) $(-\infty;+\infty)$ 4) չունի

3. Գտնել f ֆունկցիայի զրոները:

1) –6 2) 0 3) 2 4) –2

4. Գտնել f ֆունկցիայի գրաֆիկի $x=1$ աբսցիսն ունեցող կետում տարված շոշափողի հավասարումը:

1) $y=-6$ 2) $y=3x-3$ 3) $y=3x-6$ 4) $y=-3$

www.atc.am

21. Տրված է $f(x)=\frac{2}{3}x^{\frac{3}{2}}-3x$ ֆունկցիան:

1. Գտնել f ֆունկցիայի որոշման տիրույթը:

1) $(0;+\infty)$ 2) $[0;+\infty)$ 3) $(-\infty;+\infty)$ 4) $[1;+\infty)$

2. Գտնել f ֆունկցիայի ածանցյալը:

1) $x-3$ 2) $\sqrt{x}$ 3) $\sqrt{x}-3$ 4) $x^{\frac{3}{2}}-3$

3. Գտնել f ֆունկցիայի կրիտիկական կետերը:

1) 2 2) 3 3) 6 4) 9

4. Գտնել f ֆունկցիայի աճման միջակայքը:

1) $[0;3]$ 2) $[9;+\infty)$ 3) $[0;9]$ 4) $[0;+\infty)$

22. Տրված է $f(x)=2\sqrt{x-3}$ ֆունկցիան:

1. Գտնել f ֆունկցիայի որոշման տիրույթը:

1) $(-\infty;+\infty)$ 2) $[2;+\infty)$ 3) $[3;+\infty)$ 4) $(3;+\infty)$

2. Գտնել f ֆունկցիայի ածանցյալը:

1) $\frac{2}{\sqrt{x-3}}$ 2) $\frac{1}{\sqrt{x-3}}$ 3) $-\frac{2}{\sqrt{x-3}}$ 4) $-\frac{1}{\sqrt{x-3}}$

3. Գտնել f ֆունկցիայի մեծագույն արժեքը $[5;7]$ միջակայքում:

1) $2\sqrt{2}$ 2) 3 3) 4 4) 8

4. Գտնել f ֆունկցիայի գրաֆիկի $x_0=7$ աբսցիսն ունեցող կետում տարված շոշափողի հավասարումը:

1) $y=0,5x+0,5$ 2) $y=x+4$ 3) $y=0,5x+4$ 4) $y=x+0,5$

www.atc.am

23. Տրված է $f(x)=x^2-\frac{2}{x}$ ֆունկցիան:

1. Գտնել f ֆունկցիայի որոշման տիրույթը:

1) $(-\infty;+\infty)$ 2) $(-\infty;0)\cup(0;+\infty)$ 3) $[-2;2]$ 4) $(8;+\infty)$

2. Գտնել f ֆունկցիայի ածանցյալը:

1) $2x-2$ 2) $2x+2$ 3) $2x+\frac{2}{x^2}$ 4) $2x-\frac{2}{x^2}$

3. Գտնել f ֆունկցիայի աճման միջակայքերը:

1) $[1;+\infty)$ 2) $[-1;+\infty)$
3) $(-\infty;0)$ և $(0;1]$ 4) $[-1;0)$ և $(0;+\infty)$

4. Գտնել f ֆունկցիայի էքստրեմումները:

1) $f_{\min}=3$ 2) $f_{\min}=-1$ 3) $f_{\max}=0$ 4) չունի

24. Տրված է $f(x)=x-\ln x$ ֆունկցիան:

1. Գտնել f ֆունկցիայի որոշման տիրույթը:

1) $[0;+\infty)$ 2) $(-\infty;+\infty)$ 3) $(0;+\infty)$ 4) $(-\infty;e)\cup(e;+\infty)$

2. Գտնել f ֆունկցիայի ածանցյալը $x=1$ կետում:

1) 1 2) 2 3) 3 4) 0

3. Գտնել f ֆունկցիայի կրիտիկական կետերը:

1) 1 2) 0 և 1 3) –1 4) չունի

4. Գտնել f ֆունկցիայի աճման միջակայքերը:

1) $(-\infty;0)$ և $[1;+\infty)$ 2) $[1;+\infty)$
3) $(0;1]$ 4) $(-\infty;-1)$ և $(0;+\infty)$

www.atc.am

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ա/Հ	Ենթաառաջադրանքի համարը			
	1	2	3	4
1	1	4	4	3
2	2	1	1	3
3	4	3	2	1
4	2	1	3	4
5	1	4	2	3
6	3	3	3	2
7	3	3	4	1
8	3	1	2	3
9	3	4	3	4
10	3	2	4	4
11	4	3	2	1
12	1	1	4	2
13	3	4	1	2
14	4	4	1	3
15	2	1	4	3
16	3	2	1	2
17	3	4	2	1
18	4	3	4	1
19	1	3	4	2
20	2	4	3	3
21	2	3	4	2
22	3	2	3	1
23	2	3	4	1
24	3	4	1	2

www.atc.am

ԲԱԺԻՆ 8. ՀԱՐԹԱՀԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ

1. Հավասարասրուն եռանկյանն արտագծած շրջանագծի շառավիղը 6 սմ է և հավասար է եռանկյան սրունքին:

1. Գտնել եռանկյան փոքր անկյունը:

1) 15^0 2) 60^0 3) 30^0 4) 75^0

2. Գտնել եռանկյան հիմքի երկարությունը:

1) $12\sqrt{3}$ սմ 2) 12 սմ 3) $6\sqrt{3}$ սմ 4) 10,39 սմ

3. Գտնել եռանկյան մակերեսը:

1) 9 սմ^2 2) 15,52 սմ^2 3) $9\sqrt{3}$ սմ^2 4) $18\sqrt{3}$ սմ^2

4. Գտնել եռանկյան փոքր բարձրության երկարությունը:

1) 4 սմ 2) 3 սմ 3) 5,19 սմ 4) $3\sqrt{3}$ սմ

2. Հավասարասրուն եռանկյան հիմքին առընթեր անկյան սինուսը $\frac{1}{3}$ է, իսկ արտագծած շրջանագծի շառավիղը 3 սմ-ով մեծ է սրունքից:

1. Գտնել եռանկյանն արտագծած շրջանագծի շառավղի երկարությունը:

1) 6 սմ 2) 3 սմ 3) 9 սմ 4) 5 սմ

2. Գտնել հիմքին տարված բարձրության երկարությունը:

1) $\sqrt{3}$ սմ 2) 2 սմ 3) 6 սմ 4) 4 սմ

3. Գտնել եռանկյան մակերեսը:

1) 9 սմ^2 2) 11,31 սմ^2 3) $8\sqrt{2}$ սմ^2 4) $8\sqrt{3}$ սմ^2

4. Գտնել եռանկյանն արտագծած շրջանագծի կենտրոնի հեռավորությունը հիմքին տարված բարձրության միջնակետից:

1) 9 սմ 2) 8 սմ 3) 7 սմ 4) 6 սմ

www.atc.am

3. Շրջանագիծը, որի շառավիղը 6 սմ է, շոշափում է կանոնավոր եռանկյան կողմերից մեկը և մյուս երկու կողմերի շարունակությունները:

1. Գտնել եռանկյան բարձրության երկարությունը:

Այս առաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է գրել կարճ պատասխանը՝ նախատեսված հորիզոնական երեք վանդակներից յուրաքանչյուրում գրելով մեկ թվանշան: Առաջադրանքի պատասխան կարող է լինել 0-ից 999-ը ամբողջ թվերից որևէ մեկը (չափման միավորը չի նշվում): Եթե պատասխանը միանիշ թիվ է, ապա այն պետք է լրացնել նշված երեք վանդակներից վերջինում՝ բաց թողնելով առաջին և երկրորդ վանդակները, երկնիշ պատասխանը պետք է լրացնել երկրորդ և երրորդ վանդակներում՝ բաց թողնելով առաջին վանդակը: Օրինակ՝ եթե 42-րդ առաջադրանքի պատասխանը 55 երկնիշ թիվն է, ապա այն պետք է լրացնել հետևյալ ձևով՝



www.atc.am

ԲԱԺԻՆ 1. ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՇՎՈՒՄ

1. Գտնել արտահայտության արժեքը.

1. $\dfrac{\left(5-2\sqrt{6}\right)\cdot\left(\sqrt{3}+\sqrt{2}\right)}{\sqrt{3}-\sqrt{2}}$:
2. $\dfrac{x_1}{x_2}+\dfrac{x_2}{x_1}$, եթե x_1-ը և x_2-ը $x^2+6x+2=0$ հավասարման արմատներն են:
3. $\sqrt{3}\left(tg255^0-tg195^0\right)$:
4. $\left(3^{2+\log_3 5}-9\right)^{\log_6 5}$:

2. Գտնել արտահայտության արժեքը.

1. $\sqrt{\sqrt{2}-1}\cdot\sqrt[4]{3+2\sqrt{2}}$:
2. $\sqrt[4]{27}\cdot\sqrt[8]{3}:3^{-\frac{1}{8}}$:
3. $\dfrac{\sin 2\alpha+\sin 4\alpha}{\cos 2\alpha+\cos 4\alpha}$, եթե $ctg3\alpha=\dfrac{1}{5}$:
4. $7^{\log_7 63-1}+8\log_9 3\sqrt{3}$:

3. Գտնել արտահայտության արժեքը.

1. $\left(\sqrt{2}-1\right)\cdot\sqrt[3]{5\sqrt{2}+7}$:
2. $\sqrt[4]{8}\cdot\sqrt[3]{2}:2^{\frac{1}{12}}$:
3. $\dfrac{\cos 2\alpha-\sin 2\alpha}{\cos 2\alpha+\sin 2\alpha}$, եթե $tg\alpha=3$:
4. $10^{\lg 80-1}-4\log_{25}5\sqrt{5}$:

www.atc.am

4. Գտնել արտահայտության արժեքը.

1. $|2x+5|+|1-x|-3x$, եթե $x>1$:

2. $\dfrac{\sqrt{50}}{\sqrt{32}-\sqrt{18}}$:

3. $\dfrac{1}{\sin 50^0}+\dfrac{\sqrt{3}}{\cos 50^0}$:

4. $\dfrac{\log_3 15\cdot\log_2 6\cdot\log_6 16}{2+\log_3 25}$:

5. Գտնել արտահայտության արժեքը.

1. $-\dfrac{3a}{4b}$-ն, եթե $a^2+8ab+16b^2=0,\ b\neq 0$:

2. $\dfrac{2\sin\alpha-\sin 2\alpha}{2\sin\alpha+\sin 2\alpha}$, եթե $tg\,\dfrac{\alpha}{2}=2$:

3. $3^{1+\log_{27}8}+\log_4(\log_2 16)$:

4. $5f(1)+3g(2)$, եթե f-ը և g-ն $(-\infty;+\infty)$-ում որոշված համապատասխանաբար զույգ և կենտ ֆունկցիաներ են, ընդ որում՝ $\begin{cases} f(1)-2g(-2)=-3 \\ 3f(-1)-g(2)=10 \end{cases}$:

6. Գտնել արտահայտության արժեքը.

1. $\log_3(\log_3 4\cdot\log_4 5\cdot\log_5 27)$:

2. $\sqrt{(20-x)(10+x)}$, եթե $\sqrt{20-x}-\sqrt{10+x}=4$:

3. $\sin^2 75^0+\sin^2 195^0$:

4. $f(-2)$-ը, եթե f-ը $(-\infty,+\infty)$-ում որոշված, 6 հիմնական պարբերությամբ ֆունկցիա է, ընդ որում՝ $f^2(4)-10f(4)+25=0$:

www.atc.am

7. Գտնել արտահայտության արժեքը.

1. $(a-25)$-ը, եթե $x^2-12x+a=0$ հավասարման արմատների հարաբերությունը 3 է:
2. $2\sqrt{3}\cdot\left(1+\sqrt{3}\right)\cdot\sqrt{12-6\sqrt{3}}$:
3. $16\cos\frac{\pi}{9}\cdot\cos\frac{2\pi}{9}\cdot\cos\frac{4\pi}{9}$:
4. $3^{1+\log_2 5}\cdot 5^{-\log_4 9}$:

8. Գտնել արտահայտության արժեքը.

1. x^2+y^2, եթե $x+y=\sqrt{10}$, $x-y=\sqrt{8}$:
2. $25\sin 2\alpha$, եթե $\cos\alpha=-0,6$; $\pi<\alpha<\frac{3}{2}\pi$:
3. $\log_{3^2}16\cdot\log_{4^2}3+\log_3 45-\log_3 5$:
4. $\left(p^3+70\right)$-ը, եթե $x^2+px-2=0$ հավասարման արմատների քառակուսիների գումարը 20 է և $p<0$:

9. Գտնել արտահայտության արժեքը.

1. $\frac{a^4+3a^2-4}{(a-1)\cdot\left(a^2+4\right)}-a$:
2. $\frac{2\sqrt{\cos^2\alpha}+\cos\alpha}{2\sin^2\frac{\alpha}{2}-1}$, եթե $\frac{\pi}{2}<\alpha<\pi$:
3. $\log_{ac} b$-ն, եթե $\log_a b=6$, $\log_c a=2$:
4. $4a+b$, եթե $P(x)=ax^3+4x^2+bx-12$ բազմանդամը $(x-2)$-ի բաժանելիս ստացվում է 8 մնացորդ:

www.atc.am

10. Գտնել արտահայտության արժեքը.

1. $\frac{1}{\sqrt[4]{3}-1}-\frac{1}{\sqrt[4]{3}+1}-\frac{2}{\sqrt{3}+1}$:
2. $\sqrt{x^2-4x+4}+x+3$, եթե $x=\sqrt{3}$:
3. $4tg\left(2arctg\frac{1}{3}\right)$:
4. $\log_c\frac{b}{a}$-ն, եթե $\log_a c=\frac{1}{5}$, $\log_a b=4$:

11. Գտնել արտահայտության արժեքը.

1. $2^x+3\cdot 2^{-x}$, եթե $4^x+9\cdot 4^{-x}=30$:
2. $\frac{\sqrt{x}+3}{x^2-9}\cdot\frac{3+x}{1+3\left(\sqrt{x}\right)^{-1}}:\frac{1}{\sqrt{x}}$, եթե $x=6$:
3. $tg\frac{\pi}{12}+ctg\frac{\pi}{12}$:
4. $\frac{\log_b a^6\cdot\log_3 b^7}{\log_3 a^2}$:

12. Գտնել արտահայտության արժեքը.

1. $5^x+4\cdot 5^{-x}$, եթե $25^x+16\cdot 25^{-x}=73$:
2. $\left(\sqrt{xy}-\frac{xy}{x+\sqrt{xy}}\right):\frac{1}{y+\sqrt{xy}}$, եթե $x=\frac{2}{7}$, $y=21$:
3. $ctg\frac{\pi}{8}-tg\frac{\pi}{8}$:
4. $\frac{\log_a b^4\cdot\log_3 a^5}{\log_3 b^2}$:

www.atc.am

13. Գտնել արտահայտության արժեքը.

1. $(3m+2n)$-ը, եթե 1 և 2 թվերը $x^2+(m-5)x+n=0$ հավասարման արմատներն են:
2. $\sqrt{(1-x)^2}\cdot\left(\left(\sqrt{x}-1\right)^{-1}-\left(\sqrt{x}+1\right)^{-1}\right)$, եթե $x>3$:
3. $\dfrac{\sin^2\alpha-tg^2\alpha}{\cos^2\alpha-ctg^2\alpha}$, եթե $tg\alpha=\sqrt{2}$:
4. $\log_2 1{,}6+\log_2 10-2^{\log_2\sqrt{3}\cdot\log_3 4}$:

14. Գտնել արտահայտության արժեքը.

1. $(5m+2n)$-ը, եթե 2 և 3 թվերը $x^2+(m-7)x+n=0$ հավասարման արմատներն են:
2. $\sqrt{3(3-a)^2}\cdot\left(\left(\sqrt{a}-\sqrt{3}\right)^{-1}-\left(\sqrt{a}+\sqrt{3}\right)^{-1}\right)$, եթե $a>5$:
3. $8\sin\alpha\cdot\cos\alpha\cdot\left(\cos^2\alpha-\sin^2\alpha\right)$, եթե $\alpha=\dfrac{\pi}{8}$:
4. $\dfrac{\ln 32}{\ln\sqrt{2}}\cdot 10^{1-\lg 5}+\log_2 7\cdot\log_7 8$:

15. Գտնել արտահայտության արժեքը.

1. $\left(x_2-x_1\right)^2$, եթե x_1-ը և x_2-ը $x^2+6x+3=0$ հավասարման արմատներն են:
2. $\dfrac{7\sqrt{5}+\sqrt{98}}{7\sqrt{5}-\sqrt{98}}\cdot\left(7-2\sqrt{10}\right)$:
3. $\cos^2 75^0+\cos^2 15^0$:
4. $27^{\log_3 2}+\log_{\sqrt{5}} 6\cdot\log_6 25$:

www.atc.am

16. Գտնել արտահայտության արժեքը.

1. $\dfrac{\sqrt{ab^3}+\sqrt{a^3b}}{-a\sqrt{ab}}$, եթե $a=-\dfrac{1}{3}, b=-\dfrac{2}{3}$:
2. $48xy^2-64y^3-12x^2y+x^3$, եթե $x=4$ և $y=-0,25$:
3. $a^2+16bc+8c^2-(2b+3c)^2+2$, եթե a, b, c հաջորդականությունը թվաբանական պրոգրեսիա է:
4. $6\sin^2\left(\dfrac{1}{2}\arccos\dfrac{2}{3}\right)$:

17. Գտնել արտահայտության արժեքը.

1. $\left(\dfrac{2323}{6464}-\dfrac{23}{64}\right)\cdot\dfrac{64}{23}$:
2. $\dfrac{12\sqrt{6}-32\sqrt{2}}{\sqrt{3}-2}:\dfrac{7+2\sqrt{3}}{\sqrt{2}}$:
3. $8^{1+\frac{2}{\log_3 4}}\cdot\log_7 9\cdot\log_{\sqrt{3}}\sqrt{7}$:
4. $\dfrac{3-4\cos 10^0+\cos 20^0}{4\sin^4 5^0}+4$:

18. Գտնել արտահայտության արժեքը.

1. $16\sin 9^0\cdot\sin 81^0\cdot\sin 54^0$:
2. $2^{\log_{2\sqrt{3}}2}\cdot 3^{\log_{12}288}$:
3. $\dfrac{\arccos(-1)}{\arcsin\dfrac{1}{3}+\arccos\dfrac{1}{3}}$:
4. $\left(2\sqrt[4]{3}+5\right)\left(\dfrac{2\sqrt{3}+5\sqrt[4]{3}}{4\sqrt{3}+20\sqrt[4]{3}+25}-\dfrac{\sqrt[4]{3}-5}{2\sqrt[4]{3}+5}\right)$:

www.atc.am

19. Գտնել արտահայտության արժեքը.

1. $\sqrt{7+4\sqrt{3}}+\sqrt{7-4\sqrt{3}}$:
2. $\left(3\cdot 2^{\log_{\frac{2}{2}}3}-2\cdot 3^{\log_2 3}\right)^{\log_3 2}$:
3. $4\left(\cos\frac{\pi}{5}-\cos\frac{2\pi}{5}\right)$:
4. $3\pi-\arcsin(\sin 9)$:

20. Գտնել արտահայտության արժեքը.

1. p^2+q^2, եթե $p-q=10$, $pq=20$:
2. $\frac{1}{\sqrt{2}-1}-2^{0,2}\cdot\frac{1-2^{0,5}}{2^{-0,3}}$:
3. $3\cos\alpha+16\sin\beta$, եթե $3\sin\beta-2\cos\alpha=5$:
4. $10\cdot 49^{1-0,25\log_7 25}$:

21. Գտնել արտահայտության արժեքը.

1. $-3tg\left(2arctg2\right)$:
2. $x_1^3+x_2^3$, եթե x_1-ը և x_2-ը $x^2-5x+2=0$ հավասարման արմատներն են:
3. $\frac{15\left(\sqrt{7}+\sqrt{2}\right)}{\left(2\sqrt{14}+9\right)\sqrt{\left(\sqrt{2}-\sqrt{7}\right)^2}}$:
4. $\log_{80}81\cdot\left(\log_3 20+\log_3 4\right)-6^{\log_{36}16}$:

22. Գտնել արտահայտության արժեքը.

1. $\left(2-x^{\frac{1}{2}}\right)\left(x+2x^{\frac{1}{2}}+4\right)+\sqrt{x^3}$:
2. $\sin^2 x$, եթե $\sin^{10}x-\cos^{12}x=1$:
3. $81^{\frac{1}{2\log_2^3}}+27^{\log_9^4}$:
4. x^3-3x, եթե $x=\sqrt[3]{2+\sqrt{3}}+\sqrt[3]{2-\sqrt{3}}$:

www.atc.am

23. Գտնել արտահայտության արժեքը ($[a]$-ն a թվի ամբողջ մասն է՝ ամենամեծ ամբողջ թիվը, որը չի գերազանցում a-ն).

1. $\left[\dfrac{1}{5\sqrt{2}-7}\right]$:
2. $[3\log_2 3]$:
3. $[4\arccos(\cos 4)]$:
4. $\left[2ctg^2\dfrac{\pi}{12}\right]$:

24. Գտնել արտահայտության արժեքը.

1. $\dfrac{14^{1,4}\cdot\sqrt{8^3}}{2^{-0,1}\cdot\sqrt[5]{49}}$:
2. $\sqrt{x+17}+\sqrt{x-7}$, եթե $\sqrt{x+17}-\sqrt{x-7}=3$:
3. 2^x, եթե $x=\dfrac{\log_5 2+\log_3 6-1}{\log_5 2\cdot\log_3 6-\log_5 2}$:
4. $\dfrac{9\sin\alpha}{\sin^3\alpha+\cos^3\alpha}$, եթե $tg\alpha=2$:

25. Գտնել արտահայտության արժեքը.

1. $(2a-3)$, եթե $P(x)=x^4-ax^2-19$ բազմանդամը (x^2+3)-ի բաժանելիս ստացվում է 20 մնացորդ:
2. $\sqrt{a+15-6\sqrt{a+6}}+\dfrac{a-3}{\sqrt{a+6}+3}$, եթե $a=\sqrt{3}$:
3. $\log_2\left|\log_{0,5}25\right|+\log_2\left|\log_{0,2}4\right|$:
4. $\dfrac{9-\arccos(\cos 9)}{\arcsin(\sin 0,9\pi)}$:

www.atc.am

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ա/Հ	Ենթաառաջադրանքի համարը			
	1	2	3	4
1	1	16	6	25
2	1	3	5	15
3	1	2	7	5
4	4	5	4	2
5	3	4	7	4
6	1	7	1	5
7	2	12	2	3
8	9	24	6	6
9	1	1	4	2
10	2	5	3	15
11	6	2	4	21
12	9	6	2	10
13	10	2	8	2
14	22	6	2	23
15	24	3	1	12
16	3	125	2	1
17	0	8	432	6
18	2	18	2	5
19	4	3	2	9
20	140	3	13	98
21	4	95	3	0
22	8	1	12	4
23	14	4	9	27
24	448	8	15	10
25	17	0	2	20

www.atc.am

ԲԱԺԻՆ 2. ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ

1. Տրված է $x^4-18x^2+b=0$ հավասարումը (b-ն պարամետր է):

1. b-ի ի՞նչ արժեքի դեպքում $x=-\sqrt{3}$ թիվը կլինի հավասարման արմատ:
2. Գտնել հավասարման արմատների գումարը $b=15$ արժեքի դեպքում:
3. b-ի ի՞նչ արժեքի դեպքում հավասարումն ունի ճիշտ երեք արմատ:
4. Գտնել b-ի ամենամեծ բնական արժեքը, որի դեպքում հավասարումն ունի չորս արմատ:

2. Տրված է $\sqrt{100-x^2}=x-a$ հավասարումը (a-ն պարամետր է):

1. Քանի՞ ամբողջ թիվ է պարունակում հավասարման ԹԱԲ-ը:
2. a-ի քանի՞ բնական արժեքի դեպքում հավասարումն ունի արմատ:
3. a-ի քանի՞ ամբողջ արժեքի դեպքում հավասարումն ունի արմատ:
4. a-ի քանի՞ ամբողջ արժեքի դեպքում հավասարումն ունի ճիշտ երկու արմատ:

3. Տրված է $\sqrt{30x-x^2}\left(\cos x-\sin x\right)=0$ հավասարումը:

1. Քանի՞ ամբողջ թիվ է պարունակում հավասարման ԹԱԲ-ը:
2. Ո՞րն է հավասարման ամենամեծ արմատը:
3. Ո՞րն է հավասարման ամենափոքր արմատը:
4. Քանի՞ արմատ ունի հավասարումը:

4. Տրված է $\sqrt{70-x^2}\left(\sin\pi x-2\cos\frac{\pi x}{2}\right)=0$ հավասարումը:

1. Քանի՞ ամբողջ թիվ է պարունակում հավասարման ԹԱԲ-ը:
2. Ո՞րն է հավասարման ամենամեծ ամբողջ արմատը:
3. Քանի՞ ամբողջ արմատ ունի հավասարումը:
4. Քանի՞ արմատ ունի հավասարումը:

5. Տրված է $\log_3\left(x^2-12x+63\right)=b$ հավասարումը (b-ն պարամետր է):

1. b-ի ո՞ր արժեքի դեպքում հավասարումը կունենա ճիշտ մեկ արմատ:
2. Գտնել հավասարման արմատների գումարը $b=3,7$ արժեքի դեպքում:
3. Գտնել b-ի ամենափոքր ամբողջ արժեքը, որի դեպքում հավասարումն ունի երկու արմատ:
4. Գտնել հավասարման արմատների արտադրյալը $b=\log_3 56$ արժեքի դեպքում:

www.atc.am

6. Տրված է $\sqrt{\left(x-\sqrt{26}\right)\left(30-x\right)}\left(\sin\frac{\pi x}{4}-\cos\frac{\pi x}{4}\right)=0$ **հավասարումը:**

1. Քանի՞ ամբողջ թիվ է պարունակում հավասարման ԹԱԲ-ը:
2. Ո՞րն է հավասարման ամենամեծ արմատը:
3. Ո՞րն է հավասարման ամենափոքր ամբողջ արմատը:
4. Քանի՞ արմատ ունի հավասարումը:

7. Տրված է $\sqrt{ax-x^2}=\sqrt{\lg\left(\cos 3\pi x\right)}$ **հավասարումը (**a**-ն պարամետր է):**

1. Քանի՞ տարր ունի հավասարման ԹԱԲ-ը $a=3$ արժեքի դեպքում:
2. Գտնել հավասարման դրական արմատը $a=2$ արժեքի դեպքում:
3. Քանի՞ արմատ ունի հավասարումը $a=13$ արժեքի դեպքում:
4. Քանի՞ արմատ ունի հավասարումը $a=\frac{10}{3}$ արժեքի դեպքում:

8. Տրված է $\left|\lg x\right|+\left(x-1\right)^2=a$ **հավասարումը (**a**-ն պարամետր է):**

1. Գտնել հավասարման արմատը $a=0$ արժեքի դեպքում:
2. Գտնել հավասարման ամբողջ արմատը $a=82$ արժեքի դեպքում:
3. Քանի՞ արմատ ունի հավասարումը $a=0,5$ արժեքի դեպքում:
4. Ամենաշատը քանի՞ արմատ կարող է ունենալ տրված հավասարումը:

9. Տրված է $2^{|x|}+x^2=a$ **հավասարումը (**a**-ն պարամետր է):**

1. Լուծել հավասարումը $a=1$ արժեքի դեպքում:
2. Գտնել հավասարման դրական արմատը $a=32$ արժեքի դեպքում:
3. Քանի՞ արմատ ունի հավասարումը $a=9$ արժեքի դեպքում:
4. Գտնել հավասարման արմատների միջին թվաբանականը $a=10$ արժեքի դեպքում:

10. Տրված է $\log_7\left(14x-x^2\right)=\cos^2\pi x+\frac{1}{\cos^2\pi x}$ **հավասարումը:**

1. Քանի՞ ամբողջ թիվ է պարունակում հավասարման ԹԱԲ-ը:
2. Գտնել հավասարման աջ մասի արտահայտության փոքրագույն արժեքը:
3. Գտնել հավասարման ձախ մասի արտահայտության մեծագույն արժեքը:
4. Գտնել հավասարման արմատը:

www.atc.am

11. Տրված է $\begin{cases} ax+18y=13a-a^2 \\ 5x+(a-1)y=15 \end{cases}$ **համակարգը** (a-ն պարամետր է)**:**

1. Գտնել x_0+y_0 մեծության արժեքը, որտեղ $(x_0;\ y_0)$-ն համակարգի լուծումն է $a=0$ դեպքում:
2. a-ի ի՞նչ արժեքի դեպքում համակարգն ունի անթիվ բազմությամբ լուծումներ:
3. Գտնել a-ի այն արժեքի մոդուլը, որի դեպքում համակարգը լուծում չունի:
4. $|a|\le 10$ պայմանին բավարարող քանի՞ ամբողջ a-երի դեպքում համակարգն ունի միակ լուծում:

12. Տրված է $\begin{cases} x^2+y^2=10 \\ \sin^2\pi x+\sin^2\pi y=0 \end{cases}$ **համակարգը:**

1. Համակարգի առաջին հավասարումն x և y բնական թվերով քանի՞ լուծում ունի:
2. Համակարգի երկրորդ հավասարումը $|x|\le 1$ և $|y|\le 1$ պայմաններին բավարարող քանի՞ լուծում ունի:
3. Ամբողջ թվերով քանի՞ $(x;y)$ թվազույգ է բավարարում համակարգի առաջին հավասարմանը:
4. Քանի՞ լուծում ունի համակարգը:

13. Տրված է $\begin{cases} |x|+|y|=2 \\ \cos^2\pi x+\cos^2\pi y=2 \end{cases}$ **համակարգը:**

1. Ոչ բացասական x և y ամբողջ թվերով քանի՞ $(x;\ y)$ թվազույգ է բավարարում համակարգի առաջին հավասարմանը:
2. Ամբողջ թվերով քանի՞ $(x;\ y)$ թվազույգ է բավարարում համակարգի առաջին հավասարմանը:
3. $|x|\le 1$ և $|y|\le 1$ պայմաններին բավարարող քանի՞ $(x;\ y)$ թվազույգ է բավարարում համակարգի երկրորդ հավասարմանը:
4. Քանի՞ լուծում ունի համակարգը:

www.atc.am

14. Տրված է $|2x-25| \le 6-|a|$ անհավասարումը (a-ն պարամետր է):

1. Քանի՞ ամբողջ թիվ է բավարարում անհավասարմանը $a=-2$ արժեքի դեպքում:
2. Գտնել a-ի ամենամեծ արժեքը, որի դեպքում անհավասարումը լուծում ունի:
3. Քանի՞ ամբողջ a-երի դեպքում անհավասարումը լուծում ունի:
4. Ամենաշատը քանի՞ ամբողջ թիվ կարող է պարունակել անհավասարման լուծումների բազմությունը:

15. Տրված է $\sqrt{x^2-12x+36} < 50-a^2$ անհավասարումը (a-ն պարամետր է):

1. Քանի՞ ամբողջ թիվ է բավարարում անհավասարմանը $a=6$ արժեքի դեպքում:
2. Գտնել a-ի ամենամեծ ամբողջ արժեքը, որի դեպքում անհավասարումը լուծում ունի:
3. Քանի՞ ամբողջ a-երի համար անհավասարումը լուծում ունի:
4. a-ի ի՞նչ ամբողջ արժեքի դեպքում անհավասարման լուծումների բազմությունը կպարունակի ամենաշատ քանակով ամբողջ թվեր:

16. Տրված է $\sqrt{3x-7}+\sqrt{13-2x} < x+1$ անհավասարումը:

1. Գտնել անհավասարման ԹԱՔ-ին պատկանող ամբողջ թվերի քանակը:
2. Գտնել անհավասարման լուծումների բազմությանը պատկանող ամենափոքր ամբողջ թիվը:
3. Գտնել անհավասարման լուծումների բազմությանը պատկանող ամենամեծ ամբողջ թիվը:
4. Քանի՞ ամբողջ թիվ է պարունակում անհավասարման լուծումների բազմությունը:

17. Տրված է $\sqrt{x^2+4x}+\sqrt{40-x^2} < 7-3x$ անհավասարումը:

1. Քանի՞ ամբողջ թիվ է պարունակում անհավասարման ԹԱՔ-ը:
2. Ո՞րն է անհավասարման լուծումների բազմությանը պատկանող ամենամեծ ամբողջ թիվը:
3. Ինչի՞ է հավասար անհավասարման լուծումների բազմությանը պատկանող ամենափոքր ամբողջ թվի մոդուլը:
4. Քանի՞ ամբողջ թիվ է պարունակում անհավասարման լուծումների բազմությունը:

www.aic.am

18. Տրված է $\sqrt{4+3x-x^2}+\sqrt[3]{x+6}>3$ անհավասարումը:

1. Քանի՞ ամբողջ թիվ է պարունակում անհավասարման ԹԱԲ-ը:
2. Ո՞րն է անհավասարմանը բավարարող ամենամեծ ամբողջ թիվը:
3. Ո՞րն է անհավասարմանը բավարարող ամենափոքր ամբողջ թիվը:
4. Քանի՞ ամբողջ թիվ է պարունակում անհավասարման լուծումների բազմությունը:

19. Տրված է $\log_3\frac{5x-21}{8}<2$ անհավասարումը:

1. Ո՞րն է անհավասարման ԹԱԲ-ին պատկանող ամենափոքր ամբողջ թիվը:
2. Գտնել անհավասարման լուծումների բազմությանը պատկանող ամենամեծ ամբողջ թիվը:
3. Գտնել անհավասարման լուծումների բազմությանը պատկանող ամբողջ թվերի քանակը:
4. Գտնել անհավասարմանը բավարարող պարզ թվերի քանակը:

20. Տրված է $\sqrt{2^x-5}\le 65-x^2$ անհավասարումը:

1. Գտնել անհավասարման ԹԱԲ-ին պատկանող ամենափոքր ամբողջ թիվը:
2. Գտնել անհավասարմանը բավարարող ամենափոքր ամբողջ թիվը:
3. Գտնել անհավասարմանը բավարարող ամենամեծ ամբողջ թիվը:
4. Գտնել անհավասարման լուծումների բազմությանը պատկանող բոլոր ամբողջ թվերի քանակը:

21. Տրված է $\log_{a-7,5}\left(67-x^2\right)\le\log_{a-7,5}\left(x-5\right)$ անհավասարումը (a-ն պարամետր է): Հայտնի է, որ $x=6,5$ թիվը բավարարում է այդ անհավասարմանը:

1. Գտնել a-ի ամբողջ արժեքը:
2. Գտնել անհավասարման ԹԱԲ-ին պատկանող ամբողջ թվերի քանակը:
3. Գտնել անհավասարման լուծումների բազմությանը պատկանող ամենափոքր ամբողջ թիվը:
4. Գտնել անհավասարման լուծումների բազմությանը պատկանող ամբողջ թվերի քանակը:

www.atc.am

22. Տրված է $\begin{cases}(8-x)(3+x)>0\\ 2x-a\le 3\end{cases}$ **համակարգը (a-ն պարամետր է):**

1. Ամբողջ թվերի բազմությունում քանի՞ լուծում ունի համակարգի առաջին անհավասարումը:
2. Ամբողջ թվերով քանի՞ լուծում ունի համակարգը $a=2$ արժեքի դեպքում:
3. Ոչ բացասական ամբողջ թվերով քանի՞ լուծում ունի համակարգը, երբ $a=12$:
4. Ամբողջ թվերով քանի՞ լուծում ունի համակարգը, երբ $a=6$:

23. Տրված է $\begin{cases}\sqrt{3+x}\le 4\\ \sin\pi x=\sqrt{5}\cos\dfrac{\pi x}{2}\end{cases}$ **համակարգը:**

1. Գտնել համակարգի անհավասարմանը բավարարող բոլոր ամբողջ թվերի քանակը:
2. Քանի՞ արմատ ունի համակարգի հավասարումը $[0;\,10]$ միջակայքում:
3. Քանի՞ լուծում ունի համակարգը $[0;\,20]$ միջակայքում:
4. Քանի՞ լուծում ունի համակարգը:

24. Տրված է $\begin{cases}x^2-12xy+20y^2\le 0\\ x+y=10\end{cases}$ **համակարգը:**

1. Ոչ բացասական ամբողջ թվերի քանի՞ թվազույգ է բավարարում համակարգի հավասարմանը:
2. Գտնել $\dfrac{x}{y}$ հարաբերության ամենամեծ արժեքը, որտեղ $(x;\,y)$ թվազույգը համակարգի անհավասարման լուծում է:
3. Գտնել $\dfrac{x}{y}$ հարաբերության ամենափոքր արժեքը, որտեղ $(x;\,y)$ թվազույգը համակարգի անհավասարման լուծում է:
4. Բնական թվերով քանի՞ լուծում ունի համակարգը:

www.aic.am

25. Տրված է $\sqrt{x-7} \geq \sqrt{2x-a}$ անհավասարումը (a-ն պարամետր է):

1. Գտնել a-ի այն ամենամեծ բնական արժեքը, որի դեպքում անհավասարումը լուծում չունի:
2. Գտնել a-ի այն արժեքը, որի դեպքում անհավասարումն ունի միակ լուծում:
3. Քանի՞ բնական թիվ է պարունակում անհավասարման լուծումների բազմությունը $a = 25$ դեպքում:
4. Գտնել a-ի այն բնական արժեքների քանակը, որոնց դեպքում 15-ը անհավասարման լուծում է:

26. Տրված է $\sqrt{8-2x-x^2} \geq |x-2|$ անհավասարումը:

1. Գտնել անհավասարման ԹԱԲ-ին պատկանող ամբողջ թվերի քանակը:
2. x-ի ի՞նչ բնական արժեքի դեպքում տրված անհավասարման մեջ տեղի կունենա հավասարության դեպքը:
3. Քանի՞ ամբողջ թիվ է պարունակում անհավասարման լուծումների բազմությունը:
4. Գտնել անհավասարմանը չբավարարող ամենափոքր բնական թիվը:

27. Կատարել առաջադրանքները.

1. Գտնել $\frac{tg3x}{tgx} = 0$ հավասարման արմատների քանակը $[0;\, 2\pi]$ միջակայքում:
2. Գտնել $x^2 + \left(\sqrt{x}\right)^2 - 2 = 0$ հավասարման արմատների քանակը:
3. Գտնել $\left(x^2 + x - 2\right)\left(x^2 + x - 12\right) = 144$ հավասարման բնական արմատը:
4. Գտնել $x|x| - 5x - 6 = 0$ հավասարման արմատների արտադրյալը:

28. Տրված է $ax^2 - 2x - a - 1 = 0$ հավասարումը (a-ն պարամետր է):

1. Գտնել a-ի ամենամեծ միանիշ արժեքը, որի դեպքում հավասարումն արմատ ունի:
2. Գտնել a-ի այն արժեքների քանակը, որոնց դեպքում հավասարումն ունի միակ արմատ:
3. Գտնել a-ի ամբողջ արժեքների քանակը, որոնց դեպքում հավասարումն ունի երկու արմատ, մեկը մեծ 2-ից, իսկ մյուսը փոքր է 2-ից:
4. Գտնել $a = 1,\ a = 2,\ \ldots,\ a = 20$ արժեքների համար ստացված քսան հավասարումների բոլոր արմատների արտադրյալը:

www.atc.am

29. Տրված է $\sqrt{x+4}+\sqrt{5-x}=3$ հավասարումը:

1. Քանի՞ ամբողջ թիվ է պարունակում հավասարման ԹԱԲ-ը:
2. Գտնել հավասարման ամենամեծ արմատը:
3. Քանի՞ արմատ ունի հավասարումը:
4. Գտնել հավասարման ձախ մասի արտահայտության արժեքների բազմությանը պատկանող ամենամեծ ամբողջ թիվը:

30. Տրված է $x+\frac{25}{x}=a$ հավասարումը (a-ն պարամետր է):

1. a-ի ի՞նչ արժեքի դեպքում $6-\sqrt{11}$ թիվը կլինի հավասարման արմատ:
2. Գտնել a պարամետրի այն դրական արժեքը, որի դեպքում հավասարումն ունի ճիշտ մեկ արմատ:
3. Գտնել a պարամետրի այն ամբողջ արժեքների քանակը, որոնցից յուրաքանչյուրի դեպքում հավասարումն արմատ չունի:
4. Գտնել a-ի ամենափոքր բնական արժեքը, որի դեպքում հավասարման արմատներից մեկը փոքր է 5-ից, իսկ մյուսը՝ մեծ 7-ից:

31. Տրված է a պարամետրով $8\cos x-\cos 2x=a$ հավասարումը:

1. a-ի ի՞նչ արժեքի դեպքում $x=2\pi k\ (k\in Z)$ տեսքի յուրաքանչյուր թիվ կլինի այդ հավասարման արմատ:
2. Գտնել a պարամետրի ամենամեծ բնական արժեքը, որի դեպքում հավասարումն արմատ ունի:
3. Գտնել a պարամետրի ամենամեծ բացասական ամբողջ թվի մոդուլը, որի դեպքում հավասարումն արմատ չունի:
4. Գտնել a պարամետրի այն ամբողջ արժեքների քանակը, որոնցից յուրաքանչյուրի դեպքում հավասարումն արմատ ունի:

32. Տրված է $x^2+2px+p^2-4=0$ հավասարումը, որտեղ p-ն պարամետր է:

1. Գտնել հավասարման տարբերիչը (դիսկրիմինանտը):
2. Գտնել p-ի այն դրական արժեքը, որի դեպքում 1-ը հավասարման արմատ է:
3. Գտնել p-ի այն դրական արժեքը, որի դեպքում հավասարման արմատների արտադրյալը հավասար է 12-ի:
4. Գտնել p-ի այն դրական արժեքը, որի դեպքում հավասարման արմատների քառակուսիների տարբերության մոդուլը հավասար է 80-ի:

www.atc.am

33. Տրված է $\sqrt{4-(x-1)^2}=x+a$ հավասարումը, որտեղ a -ն պարամետր է:

1. Գտնել հավասարման ԹԱՔ -ին պատկանող ամբողջ թվերի քանակը:
2. Քանի՞ արմատ ունի հավասարումը $a=-2$ դեպքում:
3. Գտնել a-ի այն ամենափոքր բնական արժեքը, որի դեպքում հավասարումն արմատ չունի:
4. Գտնել a-ի այն արժեքը, որի դեպքում հավասարման արմատները հակադիր թվեր են:

34. Տրված է $4\log_{(x-1)}(x+5)\le a$ անհավասարումը (a-ն պարամետր է):

1. Գտնել անհավասարման ԹԱՔ-ին պատկանող ամենափոքր ամբողջ թիվը:
2. Գտնել a-ի ամենափոքր բնական արժեքը, որի դեպքում 5-ը անհավասարման լուծում է:
3. Գտնել այն միջակայքի երկարությունը, որն անհավասարման լուծումների բազմությունն է $a=0$ դեպքում:
4. Գտնել անհավասարման լուծումների բազմությանը պատկանող միանիշ թվերի քանակը $a=8$ դեպքում:

35. Տրված է $\begin{cases} x^4-6x^2+5<0 \\ x^2\le 1 \end{cases}$ համախումբը:

1. Քանի՞ ամբողջ թիվ է պարունակում համախմբի երկրորդ անհավասարման լուծումների բազմությունը:
2. Գտնել համախմբի առաջին անհավասարման լուծումների բազմությանը պատկանող ամենամեծ բնական թիվը:
3. Գտնել համախմբի առաջին անհավասարման լուծումների բազմությանը պատկանող ամբողջ թվերի գումարը:
4. Քանի՞ ամբողջ թիվ է պարունակում համախմբի լուծումների բազմությունը:

www.atc.am

36. Տրված է $\begin{cases} x^2-8|x|+15<0 \\ \sqrt{x+2}\le 2 \end{cases}$ **համախումբը:**

1. Քանի՞ բացասական ամբողջ թիվ է պարունակում համախմբի երկրորդ անհավասարման լուծումների բազմությունը:
2. Գտնել համախմբի առաջին անհավասարման լուծումների բազմությանը պատկանող բնական թիվը:
3. Քանի՞ ամբողջ թիվ է պարունակում համախմբի առաջին անհավասարման լուծումների բազմությունը:
4. Քանի՞ բնական թիվ է պարունակում համախմբի լուծումների բազմությունը:

37. Տրված է $\begin{cases} |x|+2\sqrt{x}-8=0 \\ x^2-4x-5<0 \end{cases}$ **համախումբը:**

1. Քանի՞ լուծում ունի համախմբի հավասարումը:
2. Գտնել համախմբի անհավասարման լուծման միջակայքի երկարությունը:
3. Քանի՞ բնական թիվ կա համախմբի անհավասարման լուծումների բազմության մեջ:
4. Քանի՞ ամբողջ թիվ կա համախմբի լուծումների բազմության մեջ:

38. Տրված է $\begin{cases} x-\sqrt{x+1}-11\le 0 \\ |x+1|=2 \end{cases}$ **համախումբը:**

1. Գտնել համախմբի հավասարման ամենամեծ արմատը:
2. Գտնել համախմբի անհավասարման լուծումներից մեծագույնը:
3. Քանի՞ բնական թիվ կա համախմբի անհավասարման լուծումների բազմության մեջ:
4. Քանի՞ ամբողջ լուծում ունի համախումբը:

www.atc.am

39. Տրված է a պարամետրով $\begin{cases} x-5 \geq 2a \\ x+1 \leq 5a \end{cases}$ հավասարումների համակարգը:

1. a-ի ի՞նչ արժեքի դեպքում համակարգն ունի միակ լուծում:
2. a-ի ի՞նչ արժեքի դեպքում համակարգի լուծումների բազմությունը 12 երկարությամբ միջակայք է:
3. Գտնել a-ի այն բնական արժեքների քանակը, որոնց դեպքում 19-ը համակարգի լուծում է:
4. Գտնել a-ի այն ամենամեծ բնական արժեքը, որի դեպքում 19-ը համակարգի լուծում է, իսկ 25-ը՝ ոչ:

40. Տրված է a պարամետրով x^2-8x+a քառակուսային եռանդամը:

1. Գտնել a-ի այն արժեքը, որի դեպքում տրված եռանդամի փոքրագույն արժեքը հավասար է 11-ի:
2. Գտնել a-ի այն արժեքը, որի դեպքում տրված եռանդամն առանց մնացորդի բաժանվում է $(x-2)$-ի:
3. Գտնել a-ի այն արժեքը, որի դեպքում $x^2-8x+a<0$ անհավասարման լուծումների բազմությունը 6 երկարությամբ միջակայք է:
4. Գտնել $x_1^2+8x_2$ արտահայտության արժեքը, որտեղ x_1-ը և x_2-ը տրված եռանդամի արմատներն են $a=5$ դեպքում:

41. Տրված է $|2x-a|<a-11$ անհավասարումը:

1. Գտնել a-ի ամենափոքր ամբողջ արժեքը, որի դեպքում անհավասարումը լուծում ունի:
2. Գտնել a-ի այն բնական արժեքը, որի դեպքում անհավասարման լուծումների բազմությունը 6 երկարությամբ միջակայք է:
3. Գտնել a-ի ամենափոքր բնական արժեքը, որի դեպքում 7-ը բավարարում է տրված անհավասարմանը:
4. a-ի ի՞նչ բնական արժեքի դեպքում անհավասարման լուծումների բազմությունը պարունակում է ճիշտ հինգ ամբողջ թիվ:

www.atc.am

42. Տրված է $\sqrt{25-x^2}\lg(2x+8)>0$ անհավասարումը:

1. Գտնել տրված անհավասարման ԹԱԲ-ին պատկանող ամբողջ թվերի քանակը:
2. Գտնել անհավասարման լուծումների բազմությանը պատկանող ամենափոքր ամբողջ թվի մոդուլը:
3. Գտնել անհավասարման լուծումների բազմությանը պատկանող ամենամեծ ամբողջ թիվը:
4. Գտնել անհավասարման լուծումների բազմությանը պատկանող ամբողջ թվերի քանակը:

43. Տրված է $\log_3^2 x^2 \le 16$ անհավասարումը:

1. Գտնել անհավասարմանը բավարարող բոլոր ամբողջ թվերի գումարը:
2. Գտնել անհավասարման ԹԱԲ-ին չպատկանող թվերի քանակը:
3. Գտնել անհավասարմանը բավարարող ամենամեծ ամբողջ թիվը:
4. Գտնել անհավասարման լուծումների բազմությանը պատկանող բոլոր ամբողջ թվերի քանակը:

44. Տրված է $\log_2(x+7)\le a$ անհավասարումը (a-ն պարամետր է):

1. Գտնել անհավասարման լուծումների բազմությանը պատկանող ամբողջ թվերի քանակը $a=0$ դեպքում:
2. Գտնել a-ի ամենափոքր արժեքը, որի դեպքում 1-ից փոքր ցանկացած դրական թիվ անհավասարման լուծում է:
3. Գտնել a-ի այն բնական արժեքը, որի դեպքում անհավասարման լուծումների բազմությունը պարունակում է ճիշտ 4 ամբողջ թիվ:
4. Գտնել a-ի ամենափոքր արժեքը, որի դեպքում անհավասարման լուծում է 10-ից փոքր ցանկացած բնական թիվ:

45. Տրված է $tg\frac{\pi x}{2}\sqrt{-x^2+20x-19}=0$ հավասարումը:

1. Քանի՞ ամբողջ թիվ է պարունակում հավասարման ԹԱԲ-ը:
2. Ո՞րն է հավասարման ամենափոքր արմատը:
3. Ո՞րն է հավասարման ամենամեծ արմատը:
4. Քանի՞ արմատ ունի հավասարումը:

www.atc.am

46. Տրված է $(a-1)\cdot 4^{-|x|}-10\cdot 2^{-|x|}+1=0$ հավասարումը (a-ն պարամետր է):

1. Գտնել a-ի այն արժեքը, որի դեպքում $\log_2 3$ թիվը հավասարման արմատ է:
2. Գտնել a-ի այն բնական արժեքների քանակը, որոնց դեպքում հավասարումը ունի ճիշտ երկու արմատ:
3. Գտնել a-ի այն արժեքը, որի դեպքում հավասարումը ունի ճիշտ երեք արմատ:
4. Գտնել a-ի այն բնական արժեքների քանակը, որոնց դեպքում հավասարումը ունի ճիշտ չորս արմատ:

47. Տրված է $x\left|x-2\sqrt{a-7}\right|=9$ հավասարումը (a-ն պարամետր է):

1. Գտնել a-ի այն բնական արժեքների քանակը, որոնց դեպքում հավասարումը ունի ճիշտ մեկ արմատ:
2. Գտնել a-ի այն արժեքը, որի դեպքում հավասարումը ունի ճիշտ երկու արմատ:
3. Գտնել a-ի այն ամենափոքր բնական արժեքը, որի դեպքում հավասարումը ունի ճիշտ երեք արմատ:
4. Գտնել հավասարման բոլոր արմատների գումարը $a=23$-ի դեպքում:

www.arc.am

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ա/Հ	Ենթաառաջադրանքի համարը			
	1	2	3	4
1	45	0	0	80
2	21	10	25	5
3	31	30	0	12
4	17	7	8	10
5	3	12	4	7
6	25	30	9	8
7	5	2	1	2
8	1	10	2	2
9	0	4	2	0
10	13	2	2	7
11	3	10	9	19
12	2	9	8	8
13	3	8	9	8
14	4	6	13	6
15	27	7	15	0
16	4	4	6	3
17	10	0	6	4
18	6	3	0	4
19	5	18	14	5
20	3	3	7	5
21	8	3	6	3
22	10	5	8	7
23	17	5	7	9
24	11	10	2	3
25	13	14	6	9
26	7	2	4	3
27	4	1	4	36
28	9	1	1	21
29	10	5	2	4
30	12	10	19	11
31	7	7	10	17
32	16	1	4	10
33	5	1	2	1
34	3	7	1	6
35	3	2	0	5
36	2	4	2	3
37	1	6	4	5
38	1	15	15	18
39	2	6	4	5
40	27	12	7	59
41	12	17	13	16
42	9	3	4	8
43	0	1	9	18
44	1	3	2	4
45	9	2	18	9
46	22	10	10	15
47	9	16	17	17

www.aic.am

ԲԱԺԻՆ 3. ՏԵՔՍՏԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

1. Ավտոբուսը ժամը 9^{30}-ին դուրս էր եկել A վայրից և նախատեսել էր ժամը 14^{30}-ին հասներ A-ից 250 կմ հեռավորության վրա գտնվող B վայր:

1. Քանի՞ կմ/ժ արագությամբ պետք է ընթանա ավտոբուսը՝ ժամանակին B վայրը հասնելու համար:
2. A վայրից քանի՞ կմ հեռավորության վրա կգտնվի ավտոբուսը ժամը 11^{00}-ին:
3. Շարժումը սկսելուց քանի՞ րոպե հետո ավտոբուսը կգտնվի A-ից 80 կմ հեռավորության վրա:
4. Եթե ժամը 11^{30}-ին ավտոբուսը կես ժամ կանգ առներ, այնուհետև քանի՞ կմ/ժ արագությամբ պետք է շարունակեր ճանապարհը, որպեսզի ժամանակին հասներ B վայրը:

2. A և B քաղաքներից, որոնց հեռավորությունը 600 կմ է, միաժամանակ իրար ընդառաջ դուրս եկան մարդատար և ապրանքատար գնացքները՝ համապատասխանաբար 90 կմ/ժ և 60 կմ/ժ արագություններով:

1. Քանի՞ կիլոմետր կլինի գնացքների հեռավորությունը շարժումը սկսելուց կես ժամ անց:
2. Մինչև հանդիպելը քանի՞ ժամ հետո գնացքների միջև հեռավորությունը կլինի 150 կմ:
3. Քանի՞ ժամ հետո գնացքները կհանդիպեն:
4. A քաղաքից քանի՞ կմ հեռավորության վրա կգտնվի ապրանքատար գնացքը՝ մարդատարի B քաղաք հասնելու պահին:

3. A վայրից B վայրը, որոնց հեռավորությունը 360 կմ է, միաժամանակ ուղևորվեցին երկու մեքենա 90 կմ/ժ և 80 կմ/ժ արագություններով:

1. Քանի՞ ժամում առաջին մեքենան կհասնի B վայրը:
2. Երկրորդ մեքենան առաջինից քանի՞ րոպե ուշ կհասնի B վայրը:
3. B-ից քանի՞ կմ հեռավորության վրա կգտնվի երկրորդ մեքենան՝ առաջին մեքենայի B հասնելու պահին:
4. Ճանապարհի ո՞ր տոկոսը կմնա անցնելու առաջին մեքենային այն պահին, երբ երկրորդն անցել էր ճանապարհի $\frac{2}{3}$-ը:

www.afc.am

4. M վայրից դեպի N վայրը շարժվեց հեծանվորդը, միաժամանակ N-ից դեպի M շարժվեց հետիոտնը: Շարժումը սկսելուց 1 ժամ հետո հետիոտնը հանդիպեց հեծանվորդին և շարունակելով ճանապարհը, 2,5 ժամ անց հասավ M վայրը:

1. Շարժումը սկսելուց քանի՞ րոպե հետո հեծանվորդը հանդիպեց հետիոտնին:
2. Հետիոտնի արագությունը հեծանվորդի արագության ո՞ր տոկոսն է կազմում:
3. Քանի՞ րոպեում հեծանվորդն անցավ MN ճանապարհը:
4. Ճանապարհի ո՞ր տոկոսն էր մնում անցնելու հետիոտնին՝ հեծանվորդի N հասնելու պահին:

5. A և B կետերից, որոնց հեռավորությունը 18 կմ է, միաժամանակ շարժվեցին երկու հեծանվորդ: Եթե նրանք շարժվեն միմյանց ընդառաջ, ապա կհանդիպեն մեկնելուց 40 ր հետո, իսկ եթե շարժվեն միևնույն ուղղությամբ, ապա A-ից դուրս եկած հեծանվորդը B-ից դուրս եկած հեծանվորդին կհասնի 6 ժ հետո:

1. Քանի՞ կմ/ժ է B-ից դուրս եկած հեծանվորդի արագությունը:
2. B կետից քանի՞ կմ հեռավորության վրա կհանդիպեն հեծանվորդները, եթե շարժվեն միմյանց ընդառաջ:
3. Միմյանց ընդառաջ շարժվելու դեպքում հանդիպման պահին A-ից դուրս եկած հեծանվորդը B-ից դուրս եկած հեծանվորդից քանի՞ կմ ավելի ճանապարհ կանցնի:
4. Միևնույն ուղղությամբ շարժվելու դեպքում հեծանվորդները B-ից քանի՞ կմ հեռավորության վրա կհանդիպեն:

6. Մոտոցիկլավարը 1 կիլոմետրն անցնում է 4 րոպեով ավելի շուտ, քան հեծանվորդը, իսկ 5 ժ-ում անցնում է 100 կմ ավելի, քան հեծանվորդը:

1. Մեկ ժամում մոտոցիկլավարը հեծանվորդից քանի՞ կմ է ավելի անցնում:
2. Քանի՞ ժամ հետո մոտոցիկլավարը կանցնի 40 կմ ավելի, քան հեծանվորդը:
3. 90 կմ ճանապարհի վրա հեծանվորդը քանի՞ ժամ ավելի կծախսի, քան մոտոցիկլավարը:
4. Քանի՞ կմ/ժ է հեծանվորդի արագությունը:

www.atc.am

7. Երկու զբոսաշրջիկ միաժամանակ իրար ընդառաջ դուրս են եկել երկու քաղաքներից, որոնց միջակա հեռավորությունը 36 կմ է, և հանդիպեցին 4ժ հետո: Հայտնի է, որ առաջինը հանդիպման պահին 4 կմ ավելի էր անցել, քան երկրորդը:

1. Քանի՞ կիլոմետր էր անցել երկրորդը՝ հանդիպման պահին:
2. Առաջինը երկրորդից քանի՞ տոկոսով ավելի ճանապարհ էր անցել:
3. Քանի՞ կմ/ժ արագությամբ էր գնում երկրորդ զբոսաշրջիկը:
4. Շարժումը սկսելու պահից 3 ժ անց քանի՞ կիլոմետր կլինի նրանց միջև հեռավորությունը:

8. Երկու մեքենա A քաղաքից պետք է գնան B քաղաքը, որոնց հեռավորությունը 840 կմ է, ընդ որում՝ այդ հեռավորությունը մեքենաներից մեկը մյուսից 2 ժ-ով պակաս ժամանակում է անցնում: Այն ժամանակահատվածում, երբ առաջին մեքենան անցնում է 63 կմ, երկրորդն անցնում է 54 կմ:

1. Քանի՞ կմ/ժ է առաջին մեքենայի արագությունը:
2. Քանի՞ ժամում առաջին մեքենան կանցնի ամբողջ ճանապարհը:
3. Եթե մեքենաները միաժամանակ շարժվեն A -ից, ապա քանի՞ ժամ հետո նրանց միջև հեռավորությունը կլինի առավելագույնը:
4. Ճանապարհի կեսին հասնելուց հետո քանի՞ կմ/ժ արագությամբ պետք է գնա երկրորդ մեքենան, որպեսզի B հասնի առաջին մեքենայի հետ միաժամանակ, եթե նրանք A -ից մեկնարկել են միաժամանակ:

9. Շոգենավը հոսանքի ուղղությամբ 2 ժամում անցնում է 110 կմ, իսկ հոսանքին հակառակ ուղղությամբ 3 ժամում ՝ 25 կմ ավելի:

1. Քանի՞ կմ/ժ է շոգենավի արագությունը հոսանքի ուղղությամբ:
2. Քանի՞ կմ/ժ է շոգենավի արագությունը հոսանքի հակառակ ուղղությամբ:
3. Քանի՞ կմ/ժ է գետի հոսանքի արագությունը:
4. Կանգնած ջրում քանի՞ կիլոմետր կանցնի շոգենավը 2,5 ժամում:

10. Գետի հոսանքի ուղղությամբ 70 կմ ճանապարհը նավն անցնում է 5 ժամում և վերադառնում՝ 7 ժամում:

1. Նավակի արագությունը գետի հոսանքի ուղղությամբ քանի՞ կմ/ժ-ով է ավելի նրա՝ հոսանքին հակառակ ուղղությամբ շարժվելու արագությունից:
2. Քանի՞ կմ/ժ է նավակի սեփական արագությունը:
3. Գետի արագությունը քանի՞ անգամ է փոքր նավակի սեփական արագությունից:
4. Քանի՞ ժամում լաստը կանցնի այդ նույն հեռավորությունը:

www.aip.am

11. Գետափնյա A վայրից առաջին նավակի գետն ի վար շարժվելու պահից 1 ժամ հետո B-ից նրան ընդառաջ դուրս եկավ երկրորդ նավակը: Հանդիպման պահին պարզվեց, որ նրանցից յուրաքանչյուրն անցել է 36 կմ: Առաջին նավակի սեփական արագությունը 10 կմ/ժ է, իսկ հոսանքի արագությունը՝ 2 կմ/ժ:

1. Քանի՞ կմ ճանապարհ անցավ առաջին նավակը շարժումը սկսելուց 1 ժ հետո:
2. Քանի՞ ժամ տևեց երկրորդի ուղևորությունը մինչև հանդիպումը:
3. Քանի՞ կմ/ժ է երկրորդի սեփական արագությունը:
4. Երկրորդի սեփական արագությունը քանի՞ տոկոսով է ավելի առաջինի սեփական արագությունից:

12. A և B քաղաքների հեռավորությունը 160 կմ է: Երկու հեծանվորդ այդ քաղաքներից մեկնելով միմյանց ընդառաջ հանդիպեցին կես ճանապարհին և շարունակեցին շարժվել նույն ուղղություններով: B-ից դուրս եկած հեծանվորդը մեկնել է մյուսից 2 ժամ շուտ, իսկ A-ից դուրս եկած հեծանվորդի արագությունը 2 անգամ ավելի է B-ից դուրս եկած հեծանվորդի արագությունից:

1. Քանի՞ կմ/ժ է A-ից դուրս եկած հեծանվորդի արագությունը:
2. B-ից դուրս եկած հեծանվորդը քանի՞ ժամում անցավ AB ճանապարհը:
3. Քանի՞ ժամ հետո A-ից դուրս եկած հեծանվորդը հանդիպեց մյուս հեծանվորդին:
4. A-ից դուրս եկած հեծանվորդի B հասնելու պահին մյուս հեծանվորդը A-ից քանի՞ կիլոմետր հեռավորության վրա էր գտնվում:

13. Երկու գնացք շարժվում են միմյանց ընդառաջ, առաջինը՝ 36 կմ/ժ, իսկ երկրորդը՝ 48 կմ/ժ արագությամբ: Առաջին գնացքը սյան մոտով անցավ 20 վայրկյանում: Առաջին գնացքում նստած ուղևորի մոտով երկրորդ գնացքն անցավ 6 վայրկյանում:

1. Քանի՞ մետր է առաջին գնացքի երկարությունը:
2. Քանի՞ մետր է կամրջի երկարությունը, եթե առաջին գնացքը նրա վրայով անցնում է 25 վայրկյանում:
3. Քանի՞ մետր է երկրորդ գնացքի երկարությունը:
4. Քանի՞ վայրկյանում երկրորդ գնացքը կանցնի իր երկարությունից 15 անգամ մեծ երկարությամբ կամրջի վրայով:

www.atc.am

14. Գնացքը 450 մ երկարությամբ կամուրջն անցավ 45 վայրկյանում, իսկ սյան մոտով՝ 15 վայրկյանում:

1. Քանի՞ մետր է գնացքի երկարությունը:
2. Քանի՞ մ/վ է գնացքի արագությունը:
3. Քանի՞ մ/վ արագությամբ պետք է շարժվի գնացքը, որպեսզի 450 մ երկարությամբ կամուրջն անցնի 15 վայրկյանում:
4. Քանի՞ վայրկյանում գնացքը կանցնի իր երկարությանը հավասար կամրջի վրայով:

15. Երկու քաղաքներից միաժամանակ միմյանց ընդառաջ դուրս եկան երկու ավտոմեքենա: Առաջինը 3 ժամում անցավ քաղաքների միջև հեռավորության $\frac{3}{25}$ մասը, իսկ երկրորդը 2,5 ժամում՝ քաղաքների միջև հեռավորության 0,2 մասը: Սինչև հանդիպման վայրը առաջին մեքենան անցավ 600 կմ:

1. Քանի՞ ժամում առաջին մեքենան մի քաղաքից կհասնի մյուսը:
2. Քանի՞ անգամ է երկրորդ մեքենայի արագությունը մեծ առաջին մեքենայի արագությունից:
3. Քանի՞ կմ/ժ է առաջին մեքենայի արագությունը:
4. Քանի՞ կմ է քաղաքների հեռավորության $\frac{1}{5}$ մասը:

16. A վայրից 36 կմ հեռավորության վրա գտնվող B վայր տանող ճանապարհը բաղկացած է AC վերելքից և CB վայրէջքից: Հեծանվորդը A-ից B ճանապարհն անցնում է 2ժ 40 րոպեում: Վերելքներում նրա արագությունը 12 կմ/ժ է, իսկ վայրէջքներում՝ 18 կմ/ժ:

1. Քանի՞ կմ է AC ճանապարհի երկարությունը:
2. Քանի՞ կմ է CB ճանապարհի երկարությունը:
3. C-ից A ուղղությամբ հեծանվորդը քանի՞ րոպեում կանցնի CA ճանապարհը:
4. B-ից A վերադառնալիս հեծանվորդը քանի՞ րոպե պակաս ժամանակ է ծախսում քան A-ից B գնալիս:

www.atc.am

17. Միմյանցից 30 կմ հեռավորության վրա գտնվող A և B վայրերից միաժամանակ միմյանց ընդառաջ մեկնեցին երկու հեծանվորդ: A-ից մեկնած հեծանվորդը B հասավ նրանց հանդիպումից 4, 5 ժամ անց, իսկ B-ից մեկնածը A հասավ հանդիպումից 2 ժամ անց:

1. Քանի՞ ժամ հետո հանդիպեցին հեծանվորդները:
2. Քանի՞ ժամ տևեց B-ից մեկնած հեծանվորդի ուղևորությունը:
3. Առաջին հեծանվորդի 3 ժամում անցած ճանապարհը քանի՞ ժամում կանցնի երկրորդ հեծանվորդը:
4. Քանի՞ կմ/ժ է B-ից մեկնած հեծանվորդի արագությունը:

18. Սայլի առջևի անիվի շրջանագծի երկարությունը 2,5 մ է, իսկ հետևի անիվինը՝ 3,5 մ:

1. Քանի՞ պտույտ կկատարի առջևի անիվը, եթե սայլն անցնի 120 մ ճանապարհ:
2. Քանի՞ մետր ճանապարհ կանցնի սայլը, եթե հետևի անիվը կատարի 70 պտույտ:
3. Քանի՞ պտույտ կկատարի հետևի անիվն այն ժամանակահատվածում, երբ առջևի անիվը կատարի 28 պտույտ:
4. Քանի՞ մետր ճանապարհ կանցնի սայլը, եթե առջևի անիվը 20 պտույտ ավելի կատարի, քան հետևի անիվը:

19. 54 մ երկարությամբ ճանապարհով գլորվելիս անիվներից մեկը մյուսից 6 պտույտ ավելի է կատարում: Անիվների տրամագծերը հարաբերում են, ինչպես 3:1:

1. Քանի՞ անգամ է մեծ անիվի շրջանագծի երկարությունը ավելի փոքր անիվի շրջանագծի երկարությունից:
2. Քանի՞ մետր է մեծ անիվի շրջանագծի երկարությունը:
3. Քանի՞ պտույտ կկատարի փոքր անիվը՝ ճանապարհով 72 մ գլորվելիս:
4. Քանի՞ պտույտ կկատարի մեծ անիվը այն ճանապարհահատվածում, որտեղ փոքր անիվը գլորվելիս կատարում է 15 պտույտ:

www.atc.am

20. A կետից նույն ուղղությամբ միաժամանակ շարժվում են երկու մարմին, որոնցից առաջինը 15 մ/վ հաստատուն արագությամբ: Երկրորդն առաջին վայրկյանում անցնում է 5 մ, իսկ յուրաքանչյուր հաջորդ վայրկյանում 2 մ ավելի, քան նախորդում:

1. 3 վայրկյան հետո առաջինը A կետից քանի՞ մետր հեռավորության վրա կգտնվի:
2. 10 րոպե հետո առաջինը A կետից քանի՞ կիլոմետր հեռավորության վրա կգտնվի:
3. Քանի՞ մետր ճանապարհ է անցնում երկրորդ մարմինն ութերորդ վայրկյանում:
4. Քանի՞ վայրկյան հետո մարմինները կհանդիպեն, եթե հայտնի է, որ այդ ժամանակը վայրկյաններով արտահայտվում է բնական թվով:

21. 315 մ երկարությամբ շրջանագծի A և B կետերի միջև գտնվող փոքր աղեղի երկարությունը 105 մետր է: A կետից շարժվող մարմնի արագությունը 20 մ/ր է, իսկ B կետից շարժվող մարմնի արագությունը՝ 15 մ/ր:

1. Քանի՞ րոպե անց մարմինները կհանդիպեն, եթե նրանք միմյանց ընդառաջ շարժվեն փոքր աղեղով:
2. Քանի՞ րոպե անց մարմինները կհանդիպեն, եթե նրանք շարժվեն նույն ուղղությամբ և A-ից շարժվող մարմինը հետապնդի B-ից շարժվող մարմնին՝ մեծ աղեղով:
3. Քանի՞ րոպե անց մարմինները կհանդիպեն, եթե նրանք շարժվեն տարբեր ուղղություններով և մեծ աղեղով:
4. Առաջին հանդիպումից քանի՞ րոպե անց մարմինները նորից կհանդիպեն, եթե նրանք շարժվեն նույն ուղղությամբ:

22. Դուրս գալով միևնույն կետից՝ երկու մարմին սկսեցին հավասարաչափ շարժվել 150 մ երկարությամբ շրջանագծով: Առաջինի արագությունը 10 մ/վրկ է, իսկ երկրորդինը՝ 15 մ/վրկ:

1. Քանի՞ վայրկյանը մեկ կհանդիպեն մարմինները, եթե շարժվեն հակառակ ուղղություններով:
2. Քանի՞ վայրկյանը մեկ կհանդիպեն մարմինները, եթե շարժվեն միևնույն ուղղությամբ:
3. Շարժվելով հակառակ ուղղություններով՝մարմինները նվազագույնը քանի՞ վայրկյան հետո կգտնվեն տրամագծորեն հակադիր կետերում:
4. Քանի՞ մետր կլինի մարմինների միջև հեռավորությունը շարժումը սկսելուց 30 վրկ հետո:

www.atc.am

23. A վայրից դեպի B վայրն ուղևորվեց 20 կմ/ժ արագությամբ շարժվող հեծանվորդը: 30 րոպե անց A-ից դուրս եկավ 30 կմ/ժ արագությամբ շարժվող մոտոցիկլավարը, որը հասնելով հեծանվորդին, անմիջապես հետ շրջվեց և A վերադարձավ այն պահին, երբ հեծանվորդը հասավ B:

1. Քանի՞ րոպեում մոտոցիկլավարը կարող է անցնել հեծանվորդի 60 րոպեում անցած ճանապարհը:
2. Հեծանվորդը քանի՞ րոպեում A վայրից հասավ B վայրը:
3. Քանի՞ կմ է A և B վայրերի հեռավորությունը:
4. Շարժումը սկսելուց քանի՞ ժամ հետո մոտոցիկլավարը հասավ հեծանվորդին:

24. Երկու քաղաքներից միաժամանակ իրար ընդառաջ շարժվեցին երկու մեքենա: Առաջին մեքենան այդ քաղաքների միջև եղած ճանապարհն անցնում է 1 ժամ 30 րոպեում, իսկ երկրորդը՝ 1 ժամում:

1. Քանի՞ րոպեում առաջին մեքենան կանցնի այդ ճանապարհի կեսը:
2. Այդ ճանապարհի քանի՞ տոկոսը կանցնի երկրորդ մեքենան 15 րոպեում:
3. Քանի՞ րոպեում երկրորդ մեքենան կանցնի առաջին մեքենայի մեկ ժամում անցած ճանապարհը:
4. Շարժումը սկսելուց քանի՞ րոպե հետո այդ մեքենաները կհանդիպեն:

25. A քաղաքից դեպի B քաղաք շարժվեց մարդատար ավտոմեքենան՝ 60 կմ/ժ արագությամբ: Միաժամանակ B քաղաքից դեպի A քաղաք շարժվեց ավտոբուսը՝ 40 կմ/ժ արագությամբ: A և B քաղաքների հեռավորությունը 600 կմ է:

1. Քանի՞ ժամ հետո մարդատար ավտոմեքենան և ավտոբուսը կհանդիպեն:
2. Քանի՞ ժամ կպահանջվի ավտոբուսին հանդիպման վայրից A հասնելու համար:
3. Քանի՞ կիլոմետր կմնա մարդատարին B հասնելու համար՝ հանդիպումից 2 ժամ հետո:
4. Քանի՞ կիլոմետր կլինի մեքենաների միջև հեռավորությունը այն պահին, երբ մարդատար ավտոմեքենան անցնի ճանապարհի $\frac{4}{5}$ մասը:

www.atc.am

26. Երկու վայրերի միջև եղած ճանապարհը մարդը՝ քայլելով անցնում 4 ժամում, իսկ հեծանվով՝ 2,4 անգամ քիչ ժամանակում: Հեծանվով ընթանալիս նրա արագությունը 7կմ/ժ-ով ավելի է, քան քայլելիս:

1. Քանի՞ րոպեում է նա հեծանվով անցնում այդ ճանապարհը:
2. Գտնել նրա արագությունը հեծանվով ընթանալիս՝ արտահայտած կմ/ժ-ով:
3. Քանի՞ կմ է այդ ճանապարհը:
4. Քանի՞ րոպեում նա կանցնի այդ ճանապարհը, եթե ճանապարհի 8 կիլոմետրն անցնի հեծանվով, իսկ մնացած մասը՝ քայլելով:

27. Առաջին բրիգադն ամբողջ դաշտը կարող է հնձել 10 օրում, իսկ երկրորդ բրիգադին նույն աշխատանքը կատարելու համար հարկավոր է այդ ժամանակի 150 %-ը:

1. Քանի՞ օրում դաշտը կհնձի երկրորդ բրիգադը:
2. Քանի՞ օրում դաշտը կհնձեն երկու բրիգադները միասին:
3. Երկրորդ բրիգադի 6 օրում կատարած աշխատանքը քանի՞ տոկոսով է ավելի առաջին բրիգադի 2 օրում կատարած աշխատանքից:
4. Քանի՞ օր կտևի հունձը, եթե սկզբում 5 օր աշխատի միայն երկրորդ բրիգադը, իսկ մնացածը հնձեն միասին:

28. Առաջին բանվորը աշխատանքը կարող է կատարել 40 օրում, իսկ երկրորդը՝ 60 օրում:

1. Համատեղ աշխատելով նրանք քանի՞ օրում կավարտեն այդ աշխատանքը:
2. Աշխատանքը քանի՞ օրում կկատարեն երկու բանվորը միասին, եթե առաջին բանվորն աշխատի 1,5 անգամ դանդաղ:
3. Աշխատանքը քանի՞ օրում կկատարեն երկու բանվորը միասին, եթե նրանցից յուրաքանչյուրն աշխատի 20 տոկոս ավելի արտադրողականությամբ:
4. Քանի՞ օրում կավարտվի աշխատանքը, եթե սկզբում աշխատանքի կեսը կատարի միայն առաջին բանվորը, իսկ երկրորդ կեսը՝ միայն երկրորդ բանվորը:

www.atc.am

29. Վարպետը և աշակերտը, միասին աշխատելով, պատը կարող են շարել 8 օրում: Հայտնի է, որ վարպետն աշակերտից 2 անգամ ավելի արագ է աշխատում:

1. Աշխատելով առանձին, աշակերտը քանի՞ օրում կարող է պատը շարել:
2. Մեկ ժամում վարպետն աշակերտից քանի՞ տոկոսով ավելի աշխատանք կկատարի:
3. Ընդամենը քանի՞ օրում նրանք կշարեն պատը, եթե սկզբում 3 օր աշխատի միայն աշակերտը, իսկ մնացած մասն ավարտեն միասին:
4. Քանի՞ օրում նրանք կշարեն պատը, եթե վարպետը սկսի աշխատել 2 անգամ ավելի դանդաղ, իսկ աշակերտը 3 անգամ ավելի արագ:

30. Երկու ծորակների համատեղ գործելու դեպքում ջրավազանը լցվում է 8 ժամում: Մեկ ժամում առաջին ծորակից հոսում է 1,25 անգամ ավելի ջուր, քան երկրորդից:

1. Մեկ ժամում երկրորդ ծորակից քանի՞ տոկոսով է պակաս ջուր հոսում, քան առաջինից:
2. Միայն երկրորդ ծորակով քանի՞ ժամում կարող է լցվել ջրավազանը:
3. Առաջին ծորակով քանի՞ ժամում կարող է լցվել այդպիսի հինգ ջրավազան:
4. Քանի՞ ժամում կարող է լցվել ջրավազանը, եթե 4 ժամ գործի միայն առաջին ծորակը, իսկ մնացած մասը լցվի միայն երկրորդ ծորակով:

31. Ավազանին միացված են երկու խողովակ՝ առաջինը լցնող, երկրորդը դատարկող: Երկրորդ խողովակը 1,5 անգամ արագագործ է առաջինից: Առաջինը դատարկ ավազանը կարող է լցնել 12 ժ-ում:

1. Երկրորդ խողովակը քանի՞ ժամում կդատարկի լիքը ավազանը:
2. Եթե դատարկ ավազանի դեպքում առաջին խողովակն աշխատի 6ժ, այն փակելուց հետո քանի՞ ժամում երկրորդը կդատարկի ավազանը:
3. Լիքը ավազանը երկու խողովակների համատեղ աշխատելու դեպքում քանի՞ ժամում կդատարկվի:
4. Եթե խողովակների սկզբնական հզորությունները կրկնապատկվեն, քանի՞ ժամում կդատարկվի լիքը ավազանը՝ երկու խողովակների համատեղ աշխատելու դեպքում:

www.atc.am

32. Առաջին ծորակը ավազանը լցնում է 5 ժամում: Սկզբում 2 ժ բացեցին առաջին ծորակը, այնուհետև ավազանի մնացած մասը լցրին միայն երկրորդ ծորակով: Պարզվեց, որ ավազանի առաջին կեսը երկրորդ կեսից 1 ժամով պակաս ժամանակում է լցվել:

1. Ավազանի ո՞ր տոկոսը լցրեց առաջին ծորակը:
2. Քանի՞ ժամում կլցնի ավազանը երկրորդ ծորակից երկու անգամ պակաս հզորությամբ ծորակը:
3. Առաջին ծորակի արտադրողականությունը քանի՞ տոկոսով է ավելի երկրորդ ծորակի արտադրողականությունից:
4. Քանի՞ ժամում է լցվում ավազանը առաջին և երկրորդ ծորակների համատեղ գործելու դեպքում:

33. Բանվորն 8 ժամում շարել էր 13 մ^2 պատ, ընդ որում, առաջին 4 մ^2 շարելուց հետո նրա արտադրողականությունն ընկել էր 25 %-ով:

1. Մինչև արտադրողականությունն ընկնելը բանվորը 1 ժամում քանի՞ մ^2 պատ էր շարում:
2. Քանի՞ ժամ աշխատեց բանվորն արտադրողականությունն ընկնելուց հետո:
3. Քանի՞ ժամում բանվորը շարեց պատի առաջին 7 մ^2-ն:
4. Քանի՞ մ^2 շարեց բանվորն առաջին 6 ժամում:

34. Հինգ միատեսակ տրակտորներից կազմված խումբն առաջին դաշտը կարող է հերկել 14 օրում: Նույնատիպ երկրորդ դաշտի մակերեսը առաջինից մեծ է 80 %-ով:

1. Այդպիսի 7 տրակտորներից բաղկացած խումբն առաջին դաշտը քանի՞ օրում կհերկի:
2. Այդպիսի քանի՞ տրակտոր է անհրաժեշտ երկրորդ դաշտը 18 օրում հերկելու համար:
3. Քանի՞ տոկոսով ավելի արտադրողականությամբ պետք է աշխատի 5 տրակտորներից բաղկացած խումբը, որպեսզի երկրորդ դաշտը հերկի 15 օրում:
4. Այդպիսի քանի՞ տրակտոր է անհրաժեշտ առաջին և երկրորդ դաշտերը 7 օրում հերկելու համար, եթե տրակտորներն աշխատեն 20 % պակաս արտադրողականությամբ:

www.atc.am

35. 100 հա մակերեսով դաշտը վարելու համար 5 օր աշխատեց միևնույն հզորությամբ տրակտորների մի խումբ: Այնուհետև նրանց միացավ նույն հզորությամբ մի տրակտոր, որի շնորհիվ խմբի արտադրողականությունը մեծացավ 25 %-ով, և աշխատելով ևս 6 օր նրանք ավարտեցին աշխատանքը:

1. Աշխատանքի սկզբում քանի՞ տրակտոր էր աշխատում:
2. Մի տրակտորն օրական քանի՞ հեկտար էր վարում:
3. Առաջին չորս օրվա ընթացքում դաշտի ո՞ր տոկոսը վարեց բրիգադը:
4. Առաջին վեց օրվա ընթացքում քանի՞ հեկտար վարեց բրիգադը:

36. 10 բանվորից բաղկացած բրիգադը նախատեսել էր մի որոշ առաջադրանք ավարտել 12 օրում:

1. Քանի՞ օր կտևեր առաջադրանքի կատարումը, եթե աշխատեին միայն բանվորներից 8-ը:
2. Քանի՞ օրում բրիգադը կկատարեր առաջադրանքը, եթե բրիգադի արտադրողականությունն ավելանար $\frac{1}{3}$ մասով:
3. Քանի՞ օր կտևեր նախատեսված առաջադրանքի կատարումը, եթե բրիգադի արտադրողականությունն ընկներ 20 % -ով:
4. Եթե բրիգադն օրվա կեսն աշխատեր նախատեսվածից երկու անգամ ավելի դանդաղ, իսկ երկրորդ կեսը՝ նախատեսվածից երկու անգամ ավելի արագ, ապա տրված ժամկետում քանի՞ տոկոսով կգերակատարեր առաջադրանքը:

37. Յոթ միատեսակ կոմբայններից կազմված բրիգադը կարող է դաշտը հնձել 10 օրում:

1. Քանի՞ օրում կհնձեն դաշտը, եթե աշխատի միայն հինգ կոմբայն:
2. Քանի՞ օր է անհրաժեշտ դաշտը հնձելու համար, եթե կոմբայններն աշխատեն 60 % -ով պակաս արտադրողականությամբ:
3. Քանի՞ օրում կավարտվի հունձը, եթե կոմբայններն աշխատեն 25% -ով ավել արտադրողականությամբ:
4. Քանի՞ օրում կավարտվի հունձը, եթե աշխատանքային օրվա կեսը կոմբայններն աշխատեն երկու անգամ արագ, իսկ կեսօրից հետո՝ երկու անգամ դանդաղ:

www.atc.am

38. Աշխատանքը կատարելու համար բանվորներից առաջինին անհրաժեշտ է 4 օրից ոչ պակաս ժամանակ, իսկ երկրորդը այդ աշխատանքը կարող է կատարել 2 անգամ ավելի շատ ժամանակում, քան առաջինը: Երկուսով միասին աշխատանքը կատարելու համար բանվորներին անհրաժեշտ է 3 օրից պակաս ժամանակ: Հայտնի է, որ բանվորներից յուրաքանչյուրն այդ աշխատանքը կարող է կատարել ամբողջ թվով օրերում:

1. Քանի՞ օրում կարող է կատարել այդ աշխատանքն առաջին բանվորը:
2. Առաջին բանվորի 3 օրում կատարած աշխատանքը քանի՞ օրում կարող է կատարել երկրորդ բանվորը:
3. Աշխատանքի ո՞ր տոկոսը կկատարեն բանվորները, եթե առաջինն աշխատի 2 օր, իսկ երկրորդը՝ 4 օր:
4. Քանի՞ օրում բանվորները միասին կարող են կատարել այդ աշխատանքը, եթե նրանք աշխատեն 3 անգամ ցածր արտադրողականությամբ:

39. Երկու ամաններից յուրաքանչյուրը պարունակում է սպիրտի տարբեր տոկոսանոց լուծույթներ: Երբ առաջին ամանի լուծույթի $\frac{1}{4}$-ը լցրին երկրորդ ամանի մեջ, ապա երկրորդ ամանում ստացվեց 240 գ 25 %-անոց լուծույթ, իսկ առաջինում մնաց 120 գ 70 %- անոց լուծույթ:

1. Ընդհանուրը քանի՞ գրամ սպիրտ կար երկու ամանների սկզբնական լուծույթներում:
2. Քանի՞ գրամ էր առաջին ամանի սկզբնական լուծույթը:
3. Քանի՞ գրամ սպիրտ կար առաջին ամանի սկզբնական լուծույթում:
4. Քանի՞ տոկոսանոց էր երկրորդ ամանի սկզբնական լուծույթը:

40. Եթե ամանում եղած սպիրտի լուծույթին ավելացնեն 20 գ մաքուր սպիրտ, ապա կստացվի 40 %-անոց սպիրտի լուծույթ, իսկ եթե ավելացնեն 60 գ թորած ջուր, ապա կստացվի 10 %- անոց լուծույթ:

1. Քանի՞ գրամ է այդ լուծույթը:
2. Քանի՞ գրամ սպիրտ կա այդ լուծույթում:
3. Քանի՞ գրամ սպիրտ պետք է ավելացնել այդ լուծույթին, որպեսզի նրանում ջուրը և սպիրտը լինեն հավասար:
4. Քանի՞ տոկոսանոց սպիրտի լուծույթ պետք է ավելացնել այդ լուծույթին, որպեսզի ստացվի 100 գ 30 %-անոց սպիրտի լուծույթ:

www.aic.am

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ա/Հ	Ենթաառաջադրանքի համարը			
	1	2	3	4
1	50	75	96	60
2	525	3	4	200
3	4	30	40	25
4	60	40	84	60
5	12	8	2	72
6	20	2	6	10
7	16	25	4	9
8	70	12	12	84
9	55	45	5	125
10	4	12	6	35
11	12	2	20	100
12	40	8	2	40
13	200	50	140	168
14	225	15	45	30
15	25	2	72	360
16	24	12	80	20
17	3	5	2	6
18	48	245	20	175
19	3	18	12	5
20	45	9	19	11
21	3	42	6	63
22	6	30	3	0
23	40	150	50	1
24	45	25	40	36
25	6	9	120	200
26	100	12	20	184
27	15	6	100	9
28	24	30	20	50
29	24	100	10	6
30	20	18	72	17
31	8	4	24	12
32	40	15	50	3
33	2	6	4	10
34	10	7	68	35
35	4	2	32	50
36	15	9	15	25
37	14	25	8	8
38	4	6	100	8
39	144	160	112	16
40	60	12	36	45

www.atc.am

ԲԱԺԻՆ 4. ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐ

1. Տրված են $f(x)=x^3+x^2+\ln(x-2)$ և $g(x)=3x^2+1$ ֆունկցիաները:

1. Գտնել $y=f(x)\cdot g(x)$ ֆունկցիայի որոշման տիրույթին պատկանող ամենափոքր բնական զույգ թիվը:
2. Հաշվել $f(3)$-ը:
3. Գտնել g ֆունկցիայի գրաֆիկին նրա $x_0=0$ աբսցիսան ունեցող կետում տարված շոշափողի և օրդինատների առանցքի կազմած անկյան աստիճանային չափը:
4. Գտնել f ֆունկցիայի փոքրագույն արժեքը $[3;10]$ միջակայքում:

2. Տրված է $f(x)=\sqrt{23-x}+\sqrt{x-5}$ ֆունկցիան:

1. f ֆունկցիայի որոշման տիրույթը քանի՞ ամբողջ թիվ է պարունակում:
2. Գտնել $f^2(x)$ արտահայտության փոքրագույն արժեքը:
3. Գտնել f ֆունկցիայի մեծագույն արժեքը:
4. f ֆունկցիայի արժեքների տիրույթը քանի՞ ամբողջ թիվ է պարունակում:

3. Տրված է $f(x)=x-\frac{4}{x^2}$ ֆունկցիան:

1. Գտնել f ֆունկցիայի արժեքը $x=2^{\frac{2}{3}}$ կետում:
2. Գտնել $|f(x_1)|$-ը, որտեղ x_1-ը f ֆունկցիայի մաքսիմումի կետ է:
3. Գտնել f ֆունկցիայի գրաֆիկի $x_0=2$ աբսցիսան ունեցող կետում տարված շոշոփողի անկյունային գործակիցը:
4. Գտնել f ֆունկցիայի նվազման միջակայքի երկարությունը:

www.atc.am

4. Տրված է $f(x)=26-\sqrt{30-5x^2}$ ֆունկցիան:

1. Գտնել f ֆունկցիայի մինիմումի կետը:
2. Գտնել f ֆունկցիայի գրաֆիկի $x_0=1,5$ աբսցիսն ունեցող կետում տարված շոշափողի և աբսցիսների առանցքի կազմած անկյան աստիճանային չափը:
3. Գտնել f ֆունկցիայի գրաֆիկի $x_0=-1$ աբսցիսն ունեցող կետով տարված շոշափողի և կոորդինատային առանցքներով սահմանափակված պատկերի մակերեսը:
4. Գտնել f ֆունկցիայի գրաֆիկի այն կետի աբսցիսը, որում տարված շոշափողը զուգահեռ է $y=x+\ln 5$ ուղղին:

5. Տրված են $f(x)=\lg\left(x^2+1000\right)$ և $g(x)=-x^2+4x+20$ ֆունկցիաները:

1. Գտնել f ֆունկցիայի փոքրագույն արժեքը:
2. Գտնել g ֆունկցիայի մեծագույն արժեքը:
3. f ֆունկցիայի արժեքների տիրույթը քանի՞ միանիշ թիվ է պարունակում:
4. f և g ֆունկցիաների արժեքների տիրույթները քանի՞ ընդհանուր ամբողջ թիվ ունեն:

6. Տրված է $f(x)=|x|(6-x)$ ֆունկցիան:

1. Հաշվել ֆունկցիայի արժեքը $x=3-\sqrt{10}$ կետում:
2. Քանի՞ հատման կետ ունեն $y=9$ ուղիղը և f ֆունկցիայի գրաֆիկը:
3. Գտնել ֆունկցիայի մեծագույն արժեքը $[2;\,4,5]$ միջակայքում:
4. Գտնել a պարամետրի բոլոր այն ամբողջ արժեքների քանակը, որոնց դեպքում $y=a$ ուղիղը f ֆունկցիայի գրաֆիկը հատում է ճիշտ երեք կետում:

7. Տրված է $f(x)=\dfrac{4-x}{x+1}$ ֆունկցիան:

1. Գտնել x-ի բոլոր այն ամբողջ արժեքների քանակը, որոնց դեպքում ֆունկցիայի արժեքները բացասական չեն:
2. Գտնել f ֆունկցիայի էքստրեմումի կետերի քանակը:
3. Գտնել բոլոր այն թվերի քանակը, որոնք ֆունկցիայի արժեք չեն:
4. Գտնել $y=f\left(|x|\right)$ ֆունկցիայի մեծագույն արժեքը:

www.atc.am

8. Տրված է $f(x)=12\sin\frac{\pi x}{3}+5\cos\frac{\pi x}{3}$ ֆունկցիան:

1. Գտնել f ֆունկցիայի հիմնական պարբերությունը:
2. Գտնել f ֆունկցիայի մեծագույն արժեքը:
3. Քանի՞ ամբողջ թիվ է պարունակում f ֆունկցիայի արժեքների բազմությունը:
4. Գտնել $F(x)=|f(x)|$ ֆունկցիայի փոքրագույն արժեքը:

9. Տրված են $f(x)=\frac{3-2x^2}{1+x^2}$ և $g(x)=3\lg\left(\sqrt{x}+10\right)$ ֆունկցիաները:

1. Գտնել f ֆունկցիայի մեծագույն արժեքը:
2. Գտնել g ֆունկցիայի փոքրագույն արժեքը:
3. Գտնել f և g ֆունկցիաների գրաֆիկների հատման կետի աբսցիսը:
4. Գտնել բոլոր այն միանիշ թվերի քանակը, որոնց դեպքում f ֆունկցիայի արժեքը չի գերազանցում g ֆունկցիայի համապատասխան արժեքից:

10. Տրված է $f(x)=18\ln x-3\ln^2 x$ ֆունկցիան:

1. Գտնել f ֆունկցիայի զրոների քանակը:
2. Գտնել f ֆունկցիայի ածանցյալը $x=1$ կետում:
3. Գտնել f ֆունկցիայի մեծագույն արժեքը:
4. Գտնել f ֆունկցիայի փոքրագույն արժեքը $\left[e;\,e^4\right]$ միջակայքում:

11. Տրված է $f(x)=4\left(x-1+\sqrt{1-x}\right)$ ֆունկցիան:

1. Քանի՞ կետում է ֆունկցիայի գրաֆիկը հատում աբսցիսների առանցքը:
2. Գտնել ֆունկցիայի մեծագույն արժեքը:
3. Գտնել ֆունկցիայի փոքրագույն արժեքը $\left[0;\,\frac{3}{4}\right]$ հատվածում:
4. Գտնել ֆունկցիայի կրիտիկական կետերի քանակը:

www.atc.am

12. Տրված է $f(x)=|x-1|(x+3)$ ֆունկցիան:

1. Գտնել ֆունկցիայի արժեքը $\left(-1+\sqrt{2}\right)$ կետում:
2. Գտնել ֆունկցիայի նվազման միջակայքի ամբողջ թվերի քանակը:
3. Գտնել ֆունկցիայի մեծագույն արժեքը $\left[-2;\sqrt{7}-2\right]$ հատվածում:
4. Գտնել a պարամետրի այն ամբողջ արժեքների քանակը, որոնց դեպքում $y=a$ ուղիղը f ֆունկցիայի գրաֆիկը հատում է ճիշտ երեք կետում:

13. Տրված է $f(x)=\frac{x^4}{4}-\frac{x^2}{2}+4$ ֆունկցիան:

1. Գտնել f ֆունկցիայի ածանցյալը $x=0$ կետում:
2. Գտնել f ֆունկցիայի նվազման միջակայքերին պատկանող ոչ բացասական ամբողջ թվերի գումարը:
3. Գտնել f ֆունկցիայի մինիմումի կետերի միջև եղած հեռավորությունը:
4. Գտնել f ֆունկցիայի էքստրեմումներից մեծագույնը:

14. Տրված է $f(x)=\log_5\sqrt{25-x^2}+\frac{1}{1+|x|}$ ֆունկցիան:

1. Գտնել f ֆունկցիայի որոշման տիրույթին չպատկանող ամենափոքր բնական թիվը:
2. Գտնել f ֆունկցիայի նվազման միջակայքին պատկանող ամբողջ թվերի միջին թվաբանականը:
3. Գտնել f ֆունկցիայի մեծագույն արժեքը:
4. Գտնել այն k ամբողջ թվերի քանակը, որոնց դեպքում $f(k)<f(3)$:

15. Տրված է $f(x)=\sqrt{3-x}+x^2-6x+16$ ֆունկցիան:

1. Գտնել f ֆունկցիայի որոշման տիրույթի ամենամեծ թիվը:
2. Գտնել f ֆունկցիայի ամենափոքր արժեքը:
3. Գտնել f ֆունկցիայի ամենամեծ արժեքը $[-1;\,2]$ միջակայքում:
4. Քանի՞ ամբողջ արժեք է ընդունում f ֆունկցիան $[-1;\,3]$ միջակայքում:

www.atc.am

16. Տրված է $f(x)=\frac{x^4}{4}-2x^2$ ֆունկցիան:

1. Գտնել ֆունկցիայի ածանցյալը $x=4$ կետում:
2. Գտնել ֆունկցիայի կրիտիկական կետերի քանակը:
3. Գտնել $[0;3]$ միջակայքում ֆունկցիայի մեծագույն արժեքի քառապատիկը:
4. Գտնել $x=2$ աբսցիսն ունեցող կետում ֆունկցիայի գրաֆիկին տարված շոշափողի անկյունային գործակիցը:

17. $T=2$ հիմնական պարբերությամբ f ֆունկցիան որոշված է $(-\infty;+\infty)$ միջակայքում և $f(1)=5$:

1. Գտնել $2f(3)+f(-1)$ արտահայտության արժեքը:
2. Գտնել $f\left(\frac{9}{4}\right)-f\left(\frac{1}{4}\right)+4$ արտահայտության արժեքը:
3. Գտնել $F(x)=2f(-2x)$ ֆունկցիայի հիմնական պարբերությունը:
4. Գտնել $H(x)=f(g(x))$ ֆունկցիայի արժեքը $x=-\sqrt{3}$ կետում, որտեղ $g(x)=-x^2$:

18. Տրված է $f(x)=x^2+6x+10$ ֆունկցիան:

1. Գտնել f ֆունկցիայի փոքրագույն արժեքը:
2. Գտնել $F(x)=f(f(x))$ ֆունկցիայի արժեքների տիրույթին պատկանող փոքրագույն զույգ թիվը:
3. Գտնել $G(x)=f(\sin x)$ ֆունկցիայի մեծագույն արժեքը:
4. Գտնել $H(x)=\sin(f(x))$ ֆունկցիայի արժեքների տիրույթին պատկանող ամբողջ թվերի քանակը:

19. Տրված է $f(x)=|x^2-4x|$ ֆունկցիան:


1. Գտնել f ֆունկցիայի արժեքը 2 կետում:
2. Գտնել f ֆունկցիայի ածանցյալը 1 կետում:
3. Գտնել f ֆունկցիայի մեծագույն արժեքը $[-1;1]$ միջակայքում:
4. Գտնել f ֆունկցիայի էքստրեմումի կետերի քանակը:

www.alc.am

20. Տրված է $f(x)=-x^2+4|x|$ ֆունկցիան:

1. Գտնել f ֆունկցիայի արժեքը –2 կետում:
2. Գտնել f ֆունկցիայի ածանցյալը –3 կետում:
3. Գտնել f ֆունկցիայի մեծագույն արժեքը $[-5;-3]$ միջակայքում:
4. Գտնել f ֆունկցիայի էքստրեմումի կետերի քանակը:

21. Տրված է $[-3;7]$ որոշման տիրույթով f ֆունկցիայի գրաֆիկը:



1. Գտնել $f\big(f(-2)\big)-f\big(f(6)\big)$ արտահայտության արժեքը:
2. Գտնել $f'(5)\cdot f(x)\ge f'(2)$ անհավասարման ամբողջ լուծումների գումարը:
3. Գտնել $f\circ f$ ֆունկցիայի որոշման տիրույթին պատկանող ամենափոքր բնական թիվը:
4. Գտնել $f\circ f$ ֆունկցիայի արժեքների տիրույթին պատկանող ամբողջ թվերի քանակը:

22. Տրված է $f(x)=12x+5\sqrt{1-x^2}$ ֆունկցիան:

1. Գտնել ֆունկցիայի որոշման տիրույթին պատկանող ամբողջ թվերի գումարը:
2. Գտնել $\dfrac{2f(\sin\alpha)}{12\sin\alpha+5\cos\alpha}$ արտահայտության արժեքը, եթե $\alpha\in\left[-\dfrac{\pi}{2};\dfrac{\pi}{2}\right]$:
3. Գտնել ֆունկցիայի մեծագույն արժեքը:
4. Գտնել ֆունկցիայի արժեքների տիրույթին պատկանող ամբողջ թվերի քանակը:

www.atc.am

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ա/Հ	Ենթաառաջադրանքի համարը			
	1	2	3	4
1	4	36	90	36
2	19	18	6	2
3	0	3	2	2
4	0	60	200	1
5	3	24	7	22
6	1	2	9	8
7	5	0	1	4
8	6	13	27	0
9	3	3	0	10
10	2	18	27	15
11	2	1	0	1
12	2	3	4	3
13	0	1	2	4
14	5	2	2	2
15	3	7	25	19
16	48	3	9	0
17	15	4	1	5
18	1	18	17	3
19	4	2	5	3
20	4	2	3	3
21	2	16	4	6
22	0	2	13	26

www.atc.am

ԲԱԺԻՆ 5. ՀԱՐԹԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ

1. Ուղղանկյուն եռանկյան սուր անկյուններից մեկը 60^0 է, իսկ այդ անկյան դիմացի էջը՝ $8\sqrt{3}$:

1. Գտնել եռանկյան փոքր էջի երկարությունը:
2. Գտնել եռանկյան ներքնաձիգի երկարությունը:
3. Գտնել եռանկյանն արտագծված շրջանագծի շառավղի երկարությունը:
4. Գտնել եռանկյան մեծ էջի պրոյեկցիան ներքնաձիգի վրա:

2. ABC եռանկյան մեջ $AB=13$, $BC=30$, $CA=37$: Այդ եռանկյանը ներգծված շրջանագիծը AB, BC և CA կողմերը շոշափում է համապատասխանաբար K, L և M կետերում:

1. Գտնել ABC եռանկյան մակերեսը:
2. Գտնել ABC եռանկյանը ներգծած շրջանագծի տրամագծի երկարությունը:
3. Գտնել MC հատվածի երկարությունը:
4. Գտնել $13\cdot S$ մեծության թվային արժեքը, որտեղ S-ը BKL եռանկյան մակերեսն է:

3. ABC եռանկյան մակերեսը 36 է: AB և BC կողմերի վրա վերցված են համապատասխանաբար M և N կետերն այնպես, որ $AM:MB=1:3$, $BN:NC=1:2$: O-ն AN և CM հատվածների հատման կետն է:

1. Գտնել $\dfrac{ON}{OA}$ հարաբերությունը:
2. Գտնել ANB եռանկյան մակերեսը:
3. Գտնել AMO եռանկյան մակերեսը:
4. Գտնել $MBNO$ քառանկյան մակերեսի հարաբերությունը AMO եռանկյան մակերեսին:

www.atc.am

4. **ABC եռանկյան AB և BC կողմերի վրա վերցված են համապատասխանաբար M և N կետերն այնպես, որ $AM:MB=1:2$: AN և CM հատվածները հատվում են O կետում, ընդ որում $S_{AOM}=S_{MON}=6$:**

1. Գտնել $\dfrac{BC}{NC}$ հարաբերությունը:
2. Գտնել MNB եռանկյան մակերեսը:
3. Գտնել ANC եռանկյանը հավասարամեծ քառակուսու կողմը:
4. Գտնել $CO:OM$ հարաբերությունը:

5. **ABC և $A_1B_1C_1$ եռանկյունները նման են: Ընդ որում $AB=17$, $BC=10$, $CA=21$, իսկ $A_1B_1C_1$ եռանկյան փոքր կողմը 5 է:**

1. Գտնել $A_1B_1C_1$ եռանկյան մեծ կողմի երկարության կրկնապատիկը:
2. Գտնել $A_1B_1C_1$ եռանկյան պարագիծը:
3. Գտնել $A_1B_1C_1$ եռանկյան մակերեսը:
4. Գտնել ABC եռանկյանը ներգծած շրջանագծի տրամագծի երկարությունը:

6. **65 պարագծով ABC եռանկյան AD կիսորդը BC կողմը բաժանում է $BD=6$ և $DC=9$ երկարությամբ մասերի: D կետից AC կողմին տարած զուգահեռ ուղիղը AB կողմը հատում է E կետում**

1. Գտնել եռանկյան մեծ կողմի երկարությունը:
2. Գտնել DE հատվածի երկարությունը:
3. Գտնել AED անկյան կիսորդի և AD-ի կազմած անկյան աստիճանային չափը:
4. Գտնել ABC եռանկյանը ներգծած շրջանագծի տրամագծի և BED եռանկյանը ներգծած շրջանագծի շառավղի հարաբերությունը:

www.atc.am

7. **ABC եռանկյան մեջ $AB=18$, $BC=15$: Այդ եռանկյան AC կողմի վրա վերցված է D կետն այնպես, որ $AD=12$, իսկ $\angle ABD=\angle ACB$:**

1. Գտնել ABC եռանկյան AC կողմի երկարությունը:
2. Գտնել ADB եռանկյան BD կողմի երկարությունը:
3. Գտնել ADB եռանկյան պարագծի եռապատիկի և ABC եռանկյան պարագծի հարաբերությունը:
4. Գտնել ABC եռանկյան մակերեսի քառապատիկի և ADB եռանկյան մակերեսի հարաբերությունը:

8. **ABC եռանկյանը ներգծված է 6 շառավղով շրջանագիծ, որն AB, BC և AC կողմերը շոշափում է համապատասխանաբար M, N և K կետերում: Եռանկյան մակերսը 204 է, իսկ AB փոքր կողմը հավասար է CK -ին:**

1. Գտնել եռանկյան կիսապարագիծը:
2. Գտնել եռանկյան փոքր կողմի երկարությունը:
3. Գտնել AM և MB հատվածներից մեծի երկարությունը:
4. Գտնել եռանկյան մեծ կողմի երկարությունը:

9. **ABC եռանկյան AB և AC կողմերի վրա վերցված են համապատասխանաբար M և N կետերն այնպես, որ $\angle AMN=\angle ACB$: Տրված են նաև՝ $AB=28$, $AM=15$, $MN=13$ և $BC=26$:**

1. Գտնել AMN եռանկյան AN կողմը:
2. Գտնել ABC եռանկյան պարագիծը:
3. Գտնել ABC և AMN եռանկյունների մակերեսների հարաբերությունը:
4. Գտնել AMN եռանկյանը ներգծած շրջանագծի շառավիղը:

www.aic.am

10. $ABCD$ **զուգահեռագծի** A **և** D **անկյունների կիսորդները** BC **կողմը հատում են համապատասխանաբար** E **և** F **կետերում:** O**-ն** AE **և** DF **կիսորդների հատման կետն է: Ընդ որում** BE**-ն 3 անգամ մեծ է** EC**-ից:**

1. Գտնել AOD անկյան աստիճանային չափը:
2. Գտնել $\frac{AO}{OE}$ հարաբերությունը:
3. Գտնել AOD և EOF եռանկյունների մակերեսների հարաբերությունը:
4. Գտնել $DOEC$ և $ABFO$ քառանկյունների մակերեսների հարաբերությունը:

11. $ABCD$ **զուգահեռագծի** B **գագաթից** AC **անկյունագծին տարված ուղղահայացի** E **հիմքը անկյունագիծը տրոհում է 1:2 հարաբերությամբ մասերի՝ հաշված** A **գագաթից:** $AC=24$**, իսկ** $BD=22$**:**

1. Գտնել AE հատվածի երկարությունը:
2. Գտնել անկյունագծերի հատման կետի հեռավորությունը E կետից:
3. Գտնել զուգահեռագծի փոքր կողմի երկարությունը:
4. Գտնել զուգահեռագծի պարագիծը:

12. $ABCD$ **զուգահեռագծի մակերեսը 420 է: Ընդ որում** $AC=39$ **և** $BD=25$ **երկարությամբ անկյունագծերը հատվում են** O **կետում:**

1. Գտնել AOB եռանկյան մակերեսը:
2. Գտնել $65\cdot\sin(\angle AOB)$ արտահայտության արժեքը:
3. Գտնել մեծ կողմի երկարությունը:
4. Գտնել զուգահեռագծի կիսապարագիծը:

13. $ABCD$ **զուգահեռագծի մակերեսը** $36\sqrt{3}$ **է,** $\angle B=2\cdot\angle A$**:** A **և** D **անկյունների կիսորդները** BC **կողմը հատում են միևնույն** E **կետում:**

1. Գտնել EAD անկյան աստիճանային չափը:
2. Գտնել զուգահեռագծի B անկյան աստիճանային չափը:
3. Գտնել զուգահեռագծի մեծ կողմի երկարությունը:
4. Գտնել E կետի հեռավորությունը զուգահեռագծի BD անկյունագծից:

www.aic.am

14. $ABCD$ **քառանկյանն արտագծված է շրջանագիծ: Հայտնի է, որ** $\angle ACD = 5 \cdot \angle BAC$, $\angle DBC = 2 \cdot \angle ACB$, $\angle ACB = 2 \cdot \angle BAC$:

1. Գտնել BAC անկյան աստիճանային չափը:
2. Գտնել AB և DC ուղիղներով կազմված անկյան աստիճանային չափը:
3. Գտնել քառանկյան անկյունագծերով կազմված անկյան աստիճանային չափը:
4. Գտնել շրջանագծի շառավղի երկարությունը, եթե $AC = 12\sqrt{2}$ սմ:

15. O **կենտրոնով շրջանագծին ներգծված** $ABCD$ **քառանկյան** A, B, C **անկյունների մեծությունները հարաբերում են ինչպես 5:9:7, իսկ** $\angle BOC = 60^0$:

1. Գտնել քառանկյան մեծ անկյան աստիճանային չափը:
2. Գտնել քառանկյան փոքր անկյան աստիճանային չափը:
3. Գտնել AD և BC ուղիղներով կազմված անկյան աստիճանային չափը:
4. Գտնել $\frac{AC}{CD}$ հարաբերությունը:

16. Շրջանագիծն անցնում է ABC **եռանկյան** C **գագաթով, հատում է** AC **կողմը** D **կետում,** AB **կողմը շոշափում** B **գագաթում: Հայտնի է, որ** $AC = 18$, $\angle CBD = 30^0$, $BD = DC$:

1. Գտնել A անկյան աստիճանային չափը:
2. Գտնել DBA անկյան աստիճանային չափը:
3. Գտնել AD հատվածի երկարությունը:
4. Գտնել շրջանագծի շառավղի երկարությունը:

17. Շրջանագիծն անցնում է ABC **եռանկյան** B **գագաթով,** CD **բարձրության** D **հիմքով և շոշափում է** AC **կողմը** C **գագաթում:** $AC = 12\sqrt{3}$, $\angle ACD = 30^0$:

1. Գտնել A անկյան աստիճանային չափը:
2. Գտնել DBC անկյան աստիճանային չափը:
3. Գտնել CB կողմի երկարությունը:
4. Գտնել շրջանագծի կենտրոնի հեռավորությունը եռանկյան AB կողմից:

www.atc.am

18. ABC **հավասարասրուն եռանկյանն արտագծված շրջանագծի** DE **լարը զուգահեռ է** AC **հիմքին և** AB **սրունքը** K **կետով բաժանում է 5:4 հարաբերությամբ մասերի՝ հաշված** B **գագաթից: Հայտնի է, որ** $AC=72$, $AB=45$:

1. Գտնել DE լարի այն ամենամեծ հատվածի երկարությունը, որը գտնվում է եռանկյան ներսում:
2. Գտնել DK $\left(DK<EK\right)$ հատվածի երկարությունը:
3. Գտնել B գագաթի հեռավորությունը DE լարից:
4. Գտնել AC և DE լարերի երկարությունների տարբերությունը:

19. $ABCD$ **քառանկյանը ներգրված է շրջանագիծ, ընդ որում** $AC=CD=15$, $AD=18$, **իսկ** $\angle B=90^0$:

1. Գտնել քառանկյան փոքր կողմի երկարությունը:
2. Գտնել C գագաթի հեռավորությունը AD կողմից:
3. Գտնել BAD անկյան աստճանային չափը:
4. Գտնել $ABCD$ քառանկյան և ABC եռանկյան մակերեսների հարաբերությունը:

20. Շրջանագծին արտագծած $ABCD$ **քառանկյան** BD **անկյունագիծը** 25 **է,** $BC=21$, $CD=26$, **իսկ** $\angle A=90^0$:

1. Գտնել AD և AB կողմերի տարբերությունը:
2. Գտնել քառանկյան փոքր կողմի երկարությունը:
3. Գտնել քառանկյան պարագիծը:
4. Գտնել A գագաթի հեռավորությունը BD անկյունագծից:

21. $ABCD$ **շեղանկյան կողմի երկարությունը 25 է, իսկ** AC **անկյունագծի երկարությունը՝ 40: Նրան ներգծած** O **կենտրոնով շրջանագծին տարված է շոշափող, որը** BC **և** CD **կողմերը հատում է համապատասխանաբար** M **և** N **կետերում և զուգահեռ է** BD**-ին :**

1. Գտնել շրջանագծի շառավղի երկարությունը:
2. Գտնել MN հատվածի երկարությունը:
3. Գտնել BMN եռանկյան մակերեսը:
4. Գտնել $5\cdot\cos\left(\angle MON\right)$ արտահայտության արժեքը:

www.atc.am

22. **$ABCD$ զուգահեռագծի AC անկյունագիծը $12\sqrt{3}$ է: E-ն և F-ը համապատասխանաբար AD և DC կողմերի միջնակետերն են, K-ն BE-ի և AC-ի հատման կետն է, իսկ L-ը՝ BF-ի և AC-ի: $BE=6$, $BF=12$:**

1. Գտնել BEF անկյան աստիճանային չափը:
2. Գտնել $KC:AK$ հարաբերությունը:
3. Գտնել B գագաթի հեռավորությունը AC անկյունագծից:
4. Գտնել $ABCD$ զուգահեռագծի և ABK եռանկյան մակերեսների հարաբերությունը:

23. **Շրջանագծից դուրս գտնվող A կետից շրջանագծին տարված են AB շոշափողն ու AM հատողը, որի արտաքին մասը AC-ն է: Հայտնի է, որ $AM=3\cdot AC=6\sqrt{3}$, իսկ $\angle BAM=30^0$:**

1. Գտնել շրջանագծի շոշափողի երկարությունը:
2. Գտնել BM լարի երկարությունը:
3. Գտնել BM փոքր աղեղի աստիճանային չափը:
4. Գտնել B կետով անցնող շառավղի պրոյեկցիան BM լարի վրա:

24. **O_1 և O_2 կենտրոններով համապատասխանաբար 10 և 20 շառավղներով շրջանագծերը, որոնց կենտրոնների հեռավորությունը 26 է, շոշափում են AB ուղիղը համապատասխանաբար A և B կետերում:**

1. Գտնել O_1 կետի հեռավորությունը O_2B շառավղից:
2. Գտնել AB հատվածի երկարությունը:
3. Գտնել այն հատվածի երկարությունը, որի ծայրակետերն O_1O_2 հատվածի և շրջանագծերի հատման կետերն են:
4. Գտնել AO_1O_2B քառանկյան մակերեսը:

www.atc.am

25. O_1 **և** O_2 **կենտրոններով և համապատասխանաբար 1 և 7 շառավիղներով երկու շրջանագծեր, որոնք գտնվում են** AB **ուղղի տարբեր կողմերում, շոշափում են այդ ուղիղը համապատասխանաբար** A **և** B **կետերում: Հայտնի է, որ** $AB=15$**:**

1. Գտնել O_1 կետի հեռավորությունը O_2B շառավիղն ընդգրկող ուղղից:
2. Գտնել O_1 և O_2 կետերի հեռավորությունը:
3. Գտնել O_1O_2 հատվածի այն մասի երկարությունը, որը գտնվում է շրջաններից դուրս:
4. Գտնել AO_1BO_2 սեղանի մակերեսի և AO_1B եռանկյան մակերեսի հարաբերությունը:

26. $14\sqrt{3}$ **շառավղով շրջանագծին ներգծված սեղանի սրունքը 18 է, հիմքին առընթեր անկյունը՝** 60^0**:**

1. Գտնել սեղանի անկյունագծի երկարությունը:
2. Գտնել սեղանի սրունքի պրոյեկցիան հիմքի վրա:
3. Գտնել սեղանի մեծ և փոքր հիմքերի տարբերությունը:
4. Գտնել սեղանի միջին գծի երկարությունը:

27. $ABCD$ **սեղանը** AC **անկյունագծով բաժանվում է երկու նման եռանկյունների: Հայտնի է, որ** AB **և** CD **սրունքներն ընդգրկող ուղիղներն ուղղահայաց են,** AD **մեծ հիմքը 15 է,** $AB=BC$**:**

1. Գտնել սեղանի փոքր հիմքի երկարությունը:
2. Գտնել AC անկյունագծի և սեղանի բարձրության հարաբերությունը:
3. Գտնել սեղանի մեծ անկյան աստիճանային չափը:
4. Գտնել $ABCD$ սեղանի և ABC եռանկյան մակերեսների հարաբերությունը:

www.aic.am

28. **ABC ուղղանկյուն եռանկյան AB ներքնաձիգը 39 է, իսկ AC էջը՝ 15: Եռանկյանը ներգծած շրջանագծի M կետով եռանկյան փոքր էջին զուգահեռ տարված շոշափողը ներքնաձիգը հատում է K կետում, իսկ BC էջը՝ E կետում:**

1. Գտնել շրջանագծի տրամագծի երկարությունը:
2. Գտնել $\frac{BK}{KA}$ հարաբերությունը:
3. Գտնել KM հատվածի երկարությունը:
4. Գտնել $ACEK$ սեղանի պարագիծը:

29. **O կենտրոնով շրջանագծի A կետից տարված են $AC=15$ և $AB=9$ երկարությամբ երկու լարեր: BAC աղեղի աստիճանային չափը 120^0 է:**

1. Գտնել BAC անկյան աստիճանային չափը:
2. Գտնել BC լարի երկարությունը:
3. Գտնել շրջանի և BOC շրջանային փոքր սեկտորի մակերեսների հարաբերությունը:
4. Գտնել շրջանագծի շառավղի երկարության և BC լարից կենտրոնի հեռավորության հարաբերությունը:

30. **$r=2$ շառավղով շրջանագծին արտագծած է ուղղանկյուն սեղան, որի ամենափոքր կողմի երկարությունը 3 է:**

1. Գտնել սեղանի մեծ սրունքի երկարությունը:
2. Գտնել սեղանի մեծ հիմքի երկարությունը:
3. Գտնել սեղանի փոքր անկյունագծի երկարությունը:
4. Գտնել սեղանի մակերեսը:

www.atc.am

31. **O կենտրոնով շրջանագծի C կետից նրա AB տրամագծին տարված է CH ուղղահայացը, ընդ որում՝ $AH=8$, իսկ $HB=18$:**

1. Գտնել OH հատվածի երկարությունը:
2. Գտնել CH հատվածի երկարությունը:
3. Գտնել A և B կետերից C կետում շրջանագծի շոշափողին տարված ուղղահայացների երկարությունների արտադրյալը:
4. Գտնել A_1HB_1 անկյան աստիճանային չափը, որտեղ A_1-ը և B_1-ը C կետում շրջանագծի շոշափողին A և B կետերից տարված ուղղահայացների հիմքերն են:

32. **Շրջանագծի AB և CD լարերը հատվում են M կետում և այդ կետով կիսվում: Հայտնի է, որ $AB=10$, $AD=5$:**

1. Գտնել շրջանագծի շառավղի երկարությունը:
2. Գտնել BMC եռանկյան պարագիծը:
3. Գտնել AC-ի երկարության քառակուսին:
4. Գտնել CAD անկյան աստիճանային չափը:

33. **O կենտրոնով շրջանագծից դուրս գտնվող A կետից շրջանագծին տարված AM շոշափողը և AB հատողը փոխուղղահայաց են: Շոշափողի երկարությունը $8\sqrt{3}$ է, իսկ հատողի ներքին մասը երկու անգամ մեծ է արտաքին մասից:**

1. Գտնել հատողի երկարությունը:
2. Գտնել ABM անկյան աստիճանային չափը:
3. Գտնել շրջանագծի շառավղի երկարությունը:
4. Գտնել MOB անկյան աստիճանային չափը:

34. **O_1 և O_2 կենտրոններով և M կետում իրար շոշափող, համապատասխանաբար 2 և 8 շառավիղներով երկու շրջանագծեր շոշափում են միմյանց և a ուղիղը համապատասխանաբար M_1 և M_2 կետերում:**

1. Գտնել O_2 և O_1 կենտրոններով շրջանների մակերեսների հարաբերությունը:
2. Գտնել M_1M_2 հատվածի երկարությունը:
3. Գտնել $O_1M_1M_2O_2$ քառանկյան մակերեսը:
4. Գտնել M_1MM_2 անկյան աստիճանային չափը:

www.gto.am

35. K կետը O կենտրոնով շրջանագծի AB լարը բաժանում է $AK=10$ և $KB=16$ երկարությամբ հատվածների: K կետով անցնող տրամագիծը շրջանագիծը հատում է C և D կետերում ($CK<KD$), ընդ որում՝ $OK=6$:

1. Գտնել շրջանագծի շառավղի երկարությունը:
2. Գտնել CK հատվածի երկարությունը:
3. Գտնել $d\sqrt{3}$ արտահայտության արժեքը, որտեղ d-ն O կետի հեռավորությունն է AB հատվածից:
4. Գտնել $\dfrac{4AD}{BC}$ հարաբերությունը:

36. Հավասարասրուն սեղանի հիմքերը հարաբերում են ինչպես 3:4, իսկ բարձրությունը 14 է: Սեղանի միջին գիծը հավասար է նրա բարձրությանը:

1. Գտնել սեղանի անկյունագծերի կազմած անկյան աստիճանային չափը:
2. Գտնել սեղանի փոքր հիմքի երկարությունը:
3. Գտնել սեղանի մակերեսը:
4. Գտնել սեղանին արտագծած շրջանագծի շառավղի երկարությունը:

37. Զուգահեռագծի անկյունագծերի հատման կետից մեծ կողմին տարված ուղղահայացը, որը այդ կողմը տրոհում է 17 և 8 երկարությամբ հատվածների, հավասար է 6-ի:

1. Գտնել զուգահեռագծի մեծ կողմին տարված բարձրության երկարությունը:
2. Գտնել զուգահեռագծի մակերեսը:
3. Գտնել զուգահեռագծի փոքր անկյունագծի երկարությունը:
4. Գտնել զուգահեռագծի պարագիծը:

www.aic.am

38. Ուղղանկյուն եռանկյան սուր անկյուններից մեկը 75^0 է, իսկ էջերի գումարը՝ $12\sqrt{6}$:

1. Գտնել եռանկյան ուղիղ անկյան գագաթից տարված միջնագծի և կիսորդի կազմած անկյան աստիճանային չափը:
2. Գտնել եռանկյան ներքնաձիգի երկարությունը:
3. Գտնել եռանկյան մակերեսը:
4. Գտնել այն քառակուսու մակերեսը, որի անկյունագիծը տրված եռանկյան ուղիղանկյան գագաթից տարված կիսորդն է:

39. O_1 և O_2 կենտրոններով, համապատասխանաբար 1 և $\sqrt{2}$ շառավիղներով երկու շրջանագծեր, որոնց կենտրոնների հեռավորությունը 1 է , հատվում են A և B կետերում:

1. Գտնել O_1AO_2 անկյան աստիճանային չափը:
2. Գտնել $\dfrac{AB\sqrt{2}}{AO_2}$ հարաբերությունը:
3. ABO_2 եռանկյան մակերեսը քանի՞ անգամ է մեծ AO_1O_2 եռանկյան մակերեսից:
4. Գտնել ABO_2 եռանկյանն արտագծած շրջանագծի տրամագիծը:

40. Միմյանց M կետում արտաքնապես շոշափող O_1 և O_2 կենտրոններով շրջանագծերին տարված արտաքին շոշափողը O_1 կենտրոնով շրջանագիծը շոշափում է A կետում, իսկ O_2 կենտրոնով շրջանագիծը՝ B կետում: Հայտնի է, որ O_1 կենտրոնով շրջանագծի շառավիղը 9 է, որը մեծ է O_2 կենտրոնով շրջանագծի շառավղից, իսկ $AB=12$:

1. Գտնել O_2 կետի հեռավորությունը O_1A ուղղից:
2. Գտնել O_2 կենտրոնով շրջանագծի շառավիղը:
3. Գտնել AMB անկյան աստիճանային չափը:
4. Գտնել $13\cdot d$ մեծության արժեքը, որտեղ d-ն M կետի հեռավորությունն է AB ուղղից:

www.atc.am

41. Շրջանագծին ներգծված է $ABCD$ քառանկյունն այնպես, որ AB և CD աղեղները հավասար են: Հայտնի է, որ $\angle ABD = 60^0$, $\angle BDC = 30^0$, իսկ AB լարը $4\sqrt{2}$ է:

1. Գտնել B անկյան աստիճանային չափը:
2. Գտնել շրջանագծի շառավիղը:
3. Գտնել շրջանագծի կենտրոնի հեռավորությունը AD լարից:
4. Գտնել AMD եռանկյան մակերեսը, որտեղ M -ը $ABCD$ քառանկյան անկյունագծերի հատման կետն է:

42. ABC եռանկյան AC և BC կողմերը շրջանագծերի տրամագծեր են, որոնց կենտրոնները համապատասխանաբար N և M կետերն են: CK -ն այդ շրջանագծերի ընդհանուր լարն է: Հայտնի է, որ $AC = 13$, $BC = 20$, $AB = 21$:

1. Գտնել KNM եռանկյան պարագիծը:
2. Գտնել ABC եռանկյան մակերեսը:
3. Գտնել AKB անկյան աստիճանային չափը:
4. Գտնել CK հատվածի երկարությունը:

43. Շրջանագծին ներգծած է ABC եռանկյունը, ընդ որում $AB = 24$, $AC = 15$ և $\angle BAC = 60^0$: AD -ն շրջանագծի տրամագիծն է:

1. Գտնել ACD անկյան աստիճանային չափը:
2. Գտնել BC հատվածի երկարությունը:
3. Գտնել շրջանագծի շառավղի քառակուսին:
4. Գտնել BD հատվածի երկարության քառակուսին:

www.atc.am

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ա/Հ	Ենթաառաջադրանքի համարը			
	1	2	3	4
1	8	16	8	12
2	180	9	27	54
3	2	12	1	11
4	2	24	6	3
5	21	24	21	7
6	30	12	90	5
7	27	10	2	9
8	34	17	9	26
9	14	84	4	4
10	90	2	4	1
11	8	4	13	64
12	105	56	28	45
13	30	120	12	3
14	15	60	90	12
15	135	45	30	1
16	90	30	6	12
17	60	30	36	9
18	40	10	15	12
19	9	12	90	3
20	5	15	82	12
21	12	12	72	3
22	90	2	4	6
23	6	6	120	3
24	24	24	4	360
25	15	17	9	8
26	42	9	18	39
27	5	2	150	4
28	12	2	4	50
29	120	21	3	2
30	5	6	5	18
31	5	12	144	90
32	5	15	75	90
33	24	30	16	120
34	16	8	40	90
35	14	8	9	5
36	90	12	196	10
37	12	300	20	80
38	30	24	72	24
39	45	2	2	2
40	12	4	90	72
41	105	4	2	12
42	27	126	180	12
43	90	21	147	12

www.atc.am

ԲԱԺԻՆ 6. ՏԱՐԱԾԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ

1. **$ABCDA_1B_1C_1D_1$ ուղղանկյունանիստը հատել են AB, CD և CC_1 կողերի միջնակետերով անցնող հարթությամբ: Հայտնի է, որ $CC_1 = CD = 8$ և $AD = 4\sqrt{2}$:**

1. Գտնել հատույթի անկյունագծերի հատման կետի հեռավորությունը ուղանկյունանիստի $ABCD$ նիստից:
2. Գտնել $ABCD$ նիստի և հատույթի հարթությունների կազմած երկնիստ անկյան աստիճանային չափը:
3. Գտնել հատույթի անկյունագծի երկարությունը:
4. Գտնել ուղղանկյունանիստի ծավալի և հատույթով ուղղանկյունանիստից անջատված եռանկյուն պրիզմայի ծավալի հարաբերությունը:

2. **$ABCDA_1B_1C_1D_1$ ուղիղ պրիզմայի հիմքը $BC = 7$ և $AD = 23$ հիմքերով և 8 բարձրությամբ հավասարասրուն սեղան է: Պրիզմայի բարձրությունը հավասար է $17\sqrt{3}$:**

1. Գտնել պրիզմայի հիմքի անկյունագծի երկարությունը:
2. Գտնել պրիզմայի անկյունագծի և հիմքի հարթության կազմած անկյան աստիճանային չափը:
3. Գտնել CC_1 կողին առընթեր երկնիստ անկյան աստիճանային չափը:
4. Գտնել A_1CDE բուրգի ծավալը, եթե E-ն AD հատվածի կետ է և $DE = 8\sqrt{3}$:

3. **Կանոնավոր եռանկյուն բուրգի յուրաքանչյուր կողմնային կողի երկարությունը $6\sqrt{2}$ է, իսկ հիմքի կողմը՝ $6\sqrt{3}$:**

1. Գտնել բուրգի բարձրության երկարությունը:
2. Գտնել հիմքի հարթության հետ կողմնային նիստի կազմած անկյան տանգենսը:
3. Գտնել $\sqrt{3} \cdot V$-ն, որտեղ V-ն բուրգի ծավալն է:
4. Գտնել բուրգին արտագծած գնդի շառավղի երկարությունը:

www.atc.am

4. $DABC$ **եռանկյան բուրգի հիմքն ուղղանկյուն եռանկյուն է** $\left(\angle ACB = 90^0\right)$, DA **կողը բուրգի բարձրությունն է,** $\angle BAC = \angle DBC$, $BC = 6$, $DC = 8$:

1. Գտնել DCB անկյան սինուսը:
2. Գտնել $ADCB$ երկնիստ անկյան աստիճանային չափը:
3. Գտնել $BDAC$ երկնիստ անկյան կոսինուսի հնգապատիկը:
4. Գտնել բուրգին արտագծած գնդային մակերևույթի շառավղի երկարությունը:

5. $ABCD$ **քառանիստի** AB **և** CD **կողերին զուգահեռ հատույթը** a **կողմով քառակուսի է: Հայտնի է, որ** $AB = 10$, $CD = 15$:

1. Գտնել AB և CD ուղիղների կազմած անկյան աստիճանային չափը:
2. Գտնել հատույթի կողմի երկարությունը:
3. Գտնել հատույթի մակերեսը:
4. Գտնել $\frac{DA}{DB}$ հարաբերությունը, եթե $AC = BC$:

6. $SABCD$ **կանոնավոր քառանկյուն բուրգի** B **գագաթը** SC **կողի** E **միջնակետին միացնող հատվածի երկարությունը 13 է, իսկ հիմքի կողմը** $10\sqrt{2}$:

1. Գտնել DE հատվածի երկարությունը:
2. Գտնել $13 \cdot \cos\left(\angle EBD\right)$-ն:
3. Գտնել E կետով անցնող և հիմքին զուգահեռ հատույթի մակերեսը:
4. Գտնել $13 \cdot d$ մեծության թվային արժեքը, որտեղ d-ն SA կողի միջնակետի հեռավորությունն է BE ուղղից:

7. Բուրգի հիմքը 12 երկարությամբ կողմով և 6 բարձրությամբ շեղանկյուն է: Բուրգի բարձրությունը 3 է: Բուրգի հիմքին առընթեր բոլոր երկնիստ անկյունները հավասար են:

1. Գտնել բուրգի ծավալը:
2. Գտնել բուրգի հիմքին առընթեր երկնիստ անկյան աստիճանային չափը:
3. Գտնել բուրգի հանդիպակաց կողմնային նիստերի կազմած անկյան աստիճանային չափը:
4. Գտնել բուրգի բարձրությունով անցնող և կողմնային նիստին ուղղահայաց հատույթի մակերեսը:

www.atc.am

8. Կոնի հիմքի շառավիղը 6 է, իսկ ծավալը՝ 72π:

1. Գտնել կոնի բարձրության երկարությունը:
2. Գտնել կոնի ծնորդի և հիմքի հարթության կազմած անկյան աստիճանային չափը:
3. Գտնել կոնին արտագծած գնդի շառավղի երկարությունը:
4. Գտնել $\frac{S}{\pi}$ մեծության թվային արժեքը, որտեղ S-ը կոնին արտագծած գնդային մակերևույթի մակերեսն է:

9. Կոնին ներգծած է գունդ: Կոնի բարձրությունը $\sqrt{3}$ անգամ մեծ է կոնի ծնորդի այն հատվածի երկարությունից, որի ծայրակետերն են կոնի գագաթը և գնդային մակերևույթի ու կոնի ծնորդի շոշափման կետը:

1. Գտնել կոնի կողմնային մակերևույթի մակերեսի և գնդի մեծ շրջանի մակերեսի հարաբերությունը:
2. Գտնել կոնի ծնորդի և հիմքի հարթության կազմած անկյան աստիճանային չափը:
3. Գտնել կոնի կողմնային մակերևույթի փռվածքի աղեղի աստիճանային չափը:
4. Քանի՞ անգամ է կոնի հիմքի շրջանի մակերսը մեծ այն շրջանի մակերեսից, որի եզրագիծը գնդի մակերևույթի և կոնի կողմային մակերևույթի շոշափման կետերն են:

10. ABC եռանկյան գագաթներն ընկած են O կենտրոնով գնդային մակերևույթի վրա: O կետի հեռավորությունը եռանկյան հարթությունից $12,5\sqrt{3}$ է, $AB=BC=20$, $AC=24$:

1. Գտնել ABC եռանկյանն արտագծած շրջանագծի տրամագծի երկարությունը:
2. Գտնել գնդային մակերևույթի շառավղի երկարությունը:
3. Գտնել $\frac{\sqrt{3}}{3}V$-ն, որտեղ V-ն $OABC$ բուրգի ծավալը:
4. Որոշել $\frac{3V_0}{S}$ հարաբերությունը, որտեղ V_0-ն գնդի ծավալն է, իսկ S-ը՝ $OABC$ բուրգին արտագծած կոնի կողմնային մակերևույթի մակերեսը:

www.atc.am

11. Հատած կոնի հիմքերի շառավիղներն ու ծնորդը հարաբերում են, ինչպես 4:11:25, իսկ ծավալը 1448π է:

1. Գտնել հատած կոնի փոքր հիմքի շառավիղը:
2. Գտնել հատած կոնի առանցքային հատույթի մակերեսը:
3. Գտնել հատած կոնի կողմնային մակերևույթի մակերեսի $\frac{1}{\pi}$ մասը:
4. Գտնել հատած կոնի հիմքերը շոշափող գնդային մակերևույթի մակերեսի $\frac{1}{\pi}$ մասը:

12. O կենտրոնով և 37 շառավղով գունդը շոշափում է $ABCD$ հավասարասրուն սեղանի բոլոր կողմերը: O կետի պրոյեկցիան $ABCD$ հարթության վրա H կետն է: Սեղանի հիմքերն են՝ $BC=18,\ AD=32$:

1. Գտնել սեղանի CD սրունքի երկարությունը:
2. Գտնել $BOHA$ երկնիստ անկյան կոսինուսը:
3. Գտնել OH հատվածի երկարությունը:
4. Գտնել $ABCD$ հարթության վրա OA հատվածի պրոյեկցիայի երկարությունը:

13. O կենտրոնով և 7 շառավղով գունդը շոշափում է $ABCD$ շեղանկյան բոլոր կողմերը: Գնդի կենտրոնի հեռավորությունը A գագաթից 9 է, իսկ B-ից՝ 11:

1. Գտնել շեղանկյան կողմի երկարության քառակուսին:
2. Գտնել $AOHD$ երկնիստ անկյան սինուսը, որտեղ OH-ը ուղղահայաց է $ABCD$ հարթությանը:
3. Գտնել O կետի հեռավորությունը $ABCD$ հարթությունից:
4. Գտնել $ABCD$ հարթության վրա OB հատվածի պրոյեկցիայի երկարության քառակուսին:

www.atc.am

14. Կոնի առանցքային հատույթը կանոնավոր եռանկյուն է, հիմքի շառավիղը՝ $6\sqrt{3}$:

1. Գտնել $\frac{S}{\pi}$ հարաբերության թվային արժեքը, որտեղ S -ը կոնի կողմնային մակերևույթի մակերեսն է:
2. Գտնել կոնի կողմնային մակերևույթի փռվածքի աղեղի աստիճանային չափը:
3. Գագաթից ի՞նչ հեռավորության վրա պետք է տանել կոնի հիմքին զուգահեռ հարթություն, որպեսզի ստացված հատույթի մակերեսը հավասար լինի կոնի հիմքի մակերեսի $\frac{1}{4}$ -ին:
4. Գտնել $\frac{V}{\pi}$ մեծության թվային արժեքը, որտեղ V -ն կոնին ներգծած գնդի ծավալն է:

15. Կոնի բարձրությունը $\sqrt{3}$ է: Հատույթն անցնում է կոնի A գագաթով և հիմքի BC լարով, որը ձգում է 60^0-ի աղեղ: Հատույթի հարթությունը հիմքի հարթության հետ կազմում է 30^0-ի անկյուն:

1. Գտնել AB ուղղի և հիմքի հարթության կազմած անկյան կոտանգենսը:
2. Գտնել հատույթի մակերեսը:
3. Գտնել հատույթի հարթությունից կոնի հիմքի կենտրոնի հեռավորության կրկնապատիկը:
4. Գտնել $ABCO$ բուրգի ծավալը, որտեղ O -ն հիմքի կենտրոնն է:

16. $AD=15$, $BC=9$ հիմքերով և $AB=10$ մեծ կողմնային կողով $ABCD$ ուղղանկյուն սեղանը պտտվում է փոքր հիմքի շուրջ:

1. Գտնել պտտման արդյունքում AD -ի առաջացրած գլանային մակերևույթի հիմքի շառավղի երկարությունը:
2. Գտնել պտտման արդյունքում AB -ի առաջացրած կոնական մակերևույթի փռվածքի սեկտորի անկյան աստիճանային չափը:
3. Գտնել պտտումից առաջացած մարմնի մակերևույթի մակերեսի և π -ի հարաբերությունը:
4. Գտնել առաջացած մարմնի ծավալի և π -ի հարաբերությունը:

www.atc.am

17. **$ABCD$ զուգահեռագծի A, B, C գագաթներն այդ զուգահեռագծի կողմերը չհատող α հարթությունից գտնվում են համապատասխանաբար 7, 11, 21 հեռավորությունների վրա: O-ն զուգահեռագծի անկյունագծերի հատման կետն է, M-ը՝ BC-ի միջնակետը:**

1. Գտնել O կետի հեռավորությունը α հարթությունից:
2. Գտնել D կետի հեռավորությունը α հարթությունից:
3. Գտնել $\frac{BD}{OK}$ հարաբերությունը, որտեղ K-ն BD և AM ուղիղների հատման կետն է:
4. Գտնել ABC եռանկյան միջնագծերի հատման կետի հեռավորությունը α հարթությունից:

18. **ABC եռանկյան կողմերը շոշափում են O կենտրոնով և 5 շառավղով գնդային մակերևույթը: $AB = BC = 10$, $AC = 12$:**

1. Գտնել ABC եռանկյանը ներգծած շրջանագծի շառավղի երկարությունը:
2. Գտնել O կետի հեռավորությունը ABC հարթությունից:
3. Գտնել $OABC$ բուրգի ծավալը:
4. Որոշել $\frac{9V}{V_1}$ հարաբերությունը, որտեղ V-ն գնդի, իսկ V_1-ը՝ $OABC$ բուրգին ներգծած կոնի ծավալն է:

19. **A կետի հեռավորությունը α հարթության B և C կետերից, համապատասխանաբար հավասար են 2 և $\sqrt{5}$, AO-ն α հարթությանը տարված ուղղահայացն է և $AO = BC = 1$:**

1. Գտնել α հարթության վրա AC հատվածի պրոյեկցիայի երկարությունը:
2. Գտնել α և (ABC) հարթությունների կազմած անկյան աստիճանային չափը:
3. Գտնել α հարթության և AB ուղղի կազմած անկյան աստիճանային չափը:
4. Գտնել $ABCO$ բուրգին արտագծած գնդային մակերևույթի տրամագծի քառակուսին:

www.atc.am

20. O **կետից տարված են** OA, OM, ON **ճառագայթներն, այնպես որ** $\angle MON = 90^0$, $\angle AON = \angle AOM = 60^0$: A **կետից տարված է** MON **անկյան կիսորդին ուղղահայաց հարթություն, որը** OM **և** ON **ճառագայթները հատում է համապատասխանաբար** C **և** B **կետերում: Հայտնի է, որ** $OA = 6\sqrt{2}$:

1. Գտնել OAB անկյան աստիճանային չափը:
2. Գտնել AO ուղղի և MON հարթության կազմած անկյան աստիճանային չափը:
3. Գտնել BAC անկյան աստիճանային չափը:
4. Գտնել $OABC$ բուրգին արտագծած գնդային մակերևույթի շառավղի երկարությունը:

21. OA, OB **և** OC **ճառագայթները դասավորված են այնպես, որ** $\angle AOC = \angle AOB = 45^0$, $\angle BOC = 60^0$, **իսկ** OH **ուղիղն ուղղահայաց է** AOB **հարթությանը:**

1. Գտնել $COAB$ երկնիստ անկյան աստիճանային չափը:
2. Գտնել $COBA$ երկնիստ անկյան տանգենսի քառակուսին:
3. Գտնել OH և OC ուղիղների կազմած անկյան աստիճանային չափը:
4. Գտնել OB ուղղի և AOC հարթության կազմած անկյան աստիճանային չափը:

22. O **գագաթով** AOB **ուղիղ անկյան հարթությանը չպատկանող** M **կետի հեռավորությունը** O **կետից** $4\sqrt{3}$ **է, իսկ** OM **-ի կազմած անկյունը** OA **և** OB **ուղիղների հետ՝** 60^0:

1. Գտնել AOB հարթության վրա OM ուղղի պրոյեկցիայի և OB -ի կազմած անկյան աստիճանային չափը:
2. Գտնել M կետի հեռավորությունը AOB անկյան կողմերից:
3. Գտնել OM ուղղի և AOB հարթության կազմած անկյան աստիճանային չափը:
4. Գտնել $MOBA$ երկնիստ անկյան տանգենսի քառակուսին:

www.atc.am

23. Կոնի բարձրությունը 2 է, հիմքի շառավիղը՝ $2\sqrt{3}$:

1. Գտնել կոնի ծնորդի երկարությունը:
2. Գտնել կոնի ծնորդի և հիմքի հարթության կազմած անկյան աստիճանային չափը:
3. Գտնել կոնի առանցքային հատույթի ամենամեծ անկյան աստիճանային չափը:
4. Կոնի հիմքի տրամագիծը քանի՞ անգամ է մեծ հիմքի կենտրոնի և ծնորդի հեռավորությունից:

24. S գագաթով $SABCDEF$ կանոնավոր վեցանկյուն բուրգի հիմքի կողմը 2 է, իսկ կողմնային կողը՝ $\sqrt{13}$:

1. Գտնել բուրգի բարձրությունը:
2. Գտնել $\sqrt{3}\cdot V$-ն, որտեղ V-ն բուրգի ծավալն է:
3. Գտնել SA և EF ուղիղների կազմած անկյան տանգենսի կրկնակին:
4. Գտնել AE ուղղի և BSA հարթության կազմած անկյան աստիճանային չափը:

25. $ABCDA_1B_1C_1D_1$ ուղղանկյունանիստի՝ երկու կից կողմնային նիստերից մեկի անկյունագիծը 5 է, մյուսինը՝ $20\sqrt{2}$: Հիմքի հարթության հետ այդ անկյունագծերի կազմած անկյունների տարբերությունը 45^0 է:

1. Գտնել ABB_1C երկնիստ անկյան աստիճանային չափը:
2. Գտնել հիմքի կից կողմերի տարբերությունը:
3. Գտնել զուգահեռանիստին արտագծած գնդային մակերևույթի կենտրոնի հեռավորությունը հիմքի հարթությունից:
4. Գտնել զուգահեռանիստի կողմնային մակերևույթի մակերեսը:

26. $DABC$ բուրգի D գագաթին հարակից բոլոր հարթ անկյուններն ուղիղ են: Հայտնի է, որ $DA=6$, $DB=8$, $DC=24$:

1. Գտնել բուրգի կողմնային մակերևույթի մակերեսը՝ ընդունելով ABC-ն որպես հիմք:
2. Գտնել ADB նիստի D գագաթից տարված միջնագծի երկարությունը:
3. Գտնել $DABC$ բուրգի ծավալը:
4. Գտնել բուրգին արտագծված գնդային մակերևույթի շառավիղը:

www.atc.am

27. $DABC$ բուրգի D գագաթին հարակից բոլոր հարթ անկյուններն ուղիղ են: Հայտնի է, որ $DA=3$, $DB=4$, իսկ բուրգի ծավալը՝ 24:

1. Գտնել ADB նիստի D գագաթից տարված միջնագծի երկարության կրկնապատիկը:
2. Գտնել DC կողի երկարությունը:
3. Գտնել $DABC$ բուրգի կողմնային մակերևույթի մակերեսը՝ ընդունելով ABC-ն որպես հիմք:
4. Գտնել բուրգին արտագծված գնդային մակերևույթի տրամագիծը:

28. S գագաթով $SABCDEF$ կանոնավոր վեցանկյուն բուրգի բարձրությունը 4 է, իսկ կողմնային կողը՝ $4\sqrt{5}$:

1. Գտնել բուրգի հիմքի կողմի երկարությունը:
2. Գտնել $\sqrt{3}\cdot V$-ն, որտեղ V-ն բուրգի ծավալն է:
3. Գտնել բուրգի կողմնային կողի և հիմքի հարթության կազմած անկյան կոտանգենսը:
4. Գտնել AE ուղղի և BSA հարթության կազմած անկյան աստիճանային չափը:

29. AB հատվածի ծայրակետերը գտնվում են 60^0 անկյուն կազմող երկնիստ անկյան տարբեր նիստերի վրա: BD-ն և AC-ն երկնիստ անկյան կողին տարված ուղղահայացներն են: Հայտնի է, որ $AB=3\sqrt{73}$, $BD=24$, $AC=21$:

1. Գտնել BD հատվածի պրոյեկցիան (ACD) հարթության վրա:
2. Գտնել AB-ի պրոյեկցիան (ACD) հարթության վրա:
3. Գտնել AC և BD ուղիղների հեռավորությունը:
4. Գտնել $BACD$ բուրգի ծավալի և $\sqrt{3}$-ի հարաբերությունը:

www.atc.am

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ա/Հ	Ենթաառաջադրանքի համարը			
	1	2	3	4
1	2	45	8	8
2	17	60	135	544
3	6	2	162	6
4	1	90	3	5
5	90	6	36	1
6	13	10	50	120
7	72	45	90	9
8	6	45	6	144
9	6	60	180	4
10	25	25	800	200
11	4	360	375	576
12	25	0	35	20
13	200	1	1	120
14	216	180	9	288
15	2	6	3	3
16	8	288	384	832
17	14	17	6	13
18	3	4	64	125
19	2	30	30	5
20	60	45	90	6
21	90	2	45	45
22	45	6	45	2
23	4	30	120	4
24	3	18	3	60
25	90	25	2	248
26	192	5	192	13
27	5	12	48	13
28	8	384	2	30
29	12	15	12	504

www.gtc.am

ԲԱԺԻՆ 7. ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐԻ ՄԵԹՈԴ, ՎԵԿՏՈՐՆԵՐ

1. Տրված են $A(1;0)$, $B(4;4)$, $C(-3;3)$ կետերը:

1. Գտնել $\overrightarrow{AB}$ վեկտորի երկարությունը:
2. Գտնել Ox առանցքի վրա AB հատվածի պրոյեկցիայի երկարությունը:
3. Գտնել $\overrightarrow{AC}$ և կոորդինատային $\vec{j}$ վեկտորների սկալյար արտադրյալը:
4. Գտնել $\overrightarrow{AC}$ և $\overrightarrow{AB}$ վեկտորների կազմած անկյան աստիճանային չափը:

2. $A(-2;1)$, $B(1;5)$, $C(4;1)$, $D(1;-3)$ կետերը $ABCD$ շեղանկյան գագաթներն են:

1. Գտնել շեղանկյան անկյունագծերի հատման կետի աբսցիսը:
2. Գտնել շեղանկյան կողմի երկարությունը:
3. Գտնել $\overrightarrow{AD}$ և $\overrightarrow{CB}$ վեկտորների կազմած անկյան աստիճանային չափը:
4. Գտնել $\overrightarrow{BD}$ և $\overrightarrow{AC}$ վեկտորների սկալյար արտադրյալը:

3. Տրված են $A(-3;-6)$, $B(-8;6)$ և $C(4;-10)$ կետերը:

1. Գտնել B կետի հեռավորությունը կոորդինատների սկզբնակետից:
2. Գտնել Oy առանցքի նկատմամբ B-ին համաչափ կետի օրդինատը:
3. Գտնել Ox առանցքի վրա AC հատվածի պրոյեկցիայի երկարությունը:
4. Գտնել $\overrightarrow{BA}$ և $\overrightarrow{BC}$ վեկտորների սկալյար արտադրյալը:

4. Տրված են $M(2;-1)$, $N(2;6)$ և $O(0;0)$ կետերը:

1. Գտնել MNO եռանկյան մակերեսը:
2. Գտնել k-ն, եթե հայտնի է, որ $y=kx$ ուղիղն անցնում է N կետով:
3. Գտնել $\overrightarrow{OM}\cdot\left(\overrightarrow{ON}+\overrightarrow{OM}\right)$ սկալյար արտադրյալը:
4. Գտնել $\overrightarrow{ON}-\overrightarrow{OM}$ վեկտորի երկարությունը:

www.atc.am

5. Տրված են $A\left(-1;\sqrt{3}\right)$, $B\left(1;-\sqrt{3}\right)$, $C\left(\frac{1}{2};\sqrt{3}\right)$ **կետերը:**

1. Գտնել AB հատվածի երկարությունը:
2. Գտնել CAB անկյան աստիճանային չափը:
3. Գտնել այն կետի աբսցիսը, որը համաչափ է A-ին՝ B կետի նկատմամբ:
4. n-ի ո՞ր արժեքի դեպքում են $\vec{a}\left\{-\sqrt{3};\, n\right\}$ և $\overrightarrow{AB}$ վեկտորները հակուղղված:

6. Տրված են $ABCD$ **քառակուսու** $A(2;1)$, $B(4;0)$, $C(3;-2)$ **գագաթները:**

1. Գտնել D գագաթի աբսցիսը:
2. Գտնել քառակուսու մակերեսը:
3. Գտնել $\overrightarrow{AD}$ և $\overrightarrow{DB}$ վեկտորների կազմած անկյան աստիճանային չափը:
4. Գտնել $\overrightarrow{AC}\cdot\overrightarrow{DB}$ սկալյար արտադրյալը:

7. Տրված են $x+y-k=0$ **և** $2x-y+4=0$ **ուղիղները:**

1. k-ի ո՞ր արժեքի դեպքում է $x+y-k=0$ ուղիղն անցնում $(1;\,2)$ կետով:
2. k-ի ո՞ր արժեքի դեպքում տրված ուղիղները կհատվեն $x=3$ աբսցիսով կետում:
3. k-ի ո՞ր դրական արժեքի դեպքում է կոորդինատների սկզբնակետի հեռավորությունը $x+y-k=0$ ուղղից հավասար $\sqrt{2}$-ի:
4. Գտնել $y=0;\ x+y-k=0;\ 2x-y+4=0$ ուղիղներով սահմանափակված եռանկյան մակերեսը $k=4$ դեպքում:

8. Տրված է O_1 **կենտրոնով** $(x-3)^2+(y-5)^2=25$ **շրջանագիծը:**

1. Գտնել շրջանագծի կենտրոնի կոորդինատների գումարը:
2. Գտնել շրջանագծի կենտրոնի հեռավորությունը Oy առանցքից:
3. Գտնել a-ի այն ամենափոքր բնական արժեքը, որի դեպքում $y=a$ ուղիղն ու տրված շրջանագիծը չունեն ընդհանուր կետ:
4. Գտնել Oy առանցքի այն հատվածի երկարությունը, որը տրված շրջանագծի լար է:

www.atc.am

9. $\vec{a}, \vec{b}, \vec{c}$ վեկտորները զույգ առ զույգ փոխուղղահայաց են և նրանց երկարությունները համապատասխանաբար հավասար են 3; 6 և 4:

1. Գտնել $\vec{c}$ և $\vec{a}$ վեկտորների տարբերության երկարությունը:
2. Գտնել $\vec{c}-\vec{a}$ և $\vec{c}+\vec{a}$ վեկտորների սկալյար արտադրյալը:
3. Գտնել $\vec{a}$ և $\vec{c}+\vec{b}$ վեկտորների կազմած անկյան աստիճանային չափը:
4. Գտնել $\vec{a}+2\vec{b}+\vec{c}$ վեկտորի երկարությունը:

10. Տրված են $A(2;\ 3;\ k)$ և $B(1;\ 3;\ -2)$ կետերը:

1. Գտնել k-ի այն արժեքը, որի դեպքում AB հատվածի միջնակետը կպատկանի Oxy հարթությանը:
2. Գտնել k-ի այն արժեքը, որի դեպքում $\overrightarrow{AB}$ և $\vec{a}\{3;\ 3;\ -1\}$ վեկտորների սկալյար արտադրյալը 0 է:
3. Գտնել k-ի այն արժեքը, որի դեպքում A և B_1 կետերի հեռավորությունը 1 է, որտեղ B_1-ը B կետի համաչափն է Oxy հարթության նկատմամբ:
4. Գտնել k-ի այն արժեքը, որի դեպքում $\overrightarrow{AB}$ և $\vec{a}\{7;\ 0;\ 28\}$ վեկտորները հակուղղված են:

11. Տրված են $\vec{a}\{-2;\ 3;\ -1\}$ և $\vec{b}=4\vec{i}-6\vec{j}+2\vec{k}$ վեկտորները:

1. Գտնել $\overrightarrow{OA}=\vec{a}$ շառավիղ վեկտորի A ծայրակետի օրդինատը:
2. Գտնել $2\vec{a}+\vec{b}$ վեկտորի երկարությունը:
3. Գտնել $\vec{a}$ և $\vec{b}$ վեկտորների կազմած անկյան աստիճանային չափը:
4. Գտնել $(\vec{a}+\vec{b})\cdot\vec{b}$ սկալյար արտադրյալը:

12. Տրված են $M\left(0;\ 2;\ 4\sqrt{2}\right)$, $B\left(-2\sqrt{3};\ 0;\ 0\right)$, $O(0;\ 0;\ 0)$ կետերը:

1. Գտնել MO հատվածի երկարությունը:
2. Գտնել M կետի հեռավորությունը Oxz հարթությունից:
3. Գտնել MBO անկյան աստիճանային չափը:
4. Գտնել $C(0;\ y;\ 0)$ կետի օրդինատը, եթե MBC եռանկյունը հավասարակողմ է:

www.atc.am

13. Տրված են $C(0;\,6;\,0)$, $A\left(2\sqrt{3};\,0;\,0\right)$, $O(0;\,0;\,0)$ կետերը:

1. Գտնել CO հատվածի երկարությունը:
2. Գտնել C կետի հեռավորությունը Oz առանցքի նկատմամբ իրեն համաչափ կետից:
3. Գտնել $\overrightarrow{CA}$ և $\overrightarrow{AO}$ վեկտորների կազմած անկյան աստիճանային չափը:
4. Գտնել $B\left(x;\,2;\,4\sqrt{2}\right)$ կետի աբսցիսը, եթե ABC եռանկյունը հավասարակողմ է:

14. $M(0;\,0;\,6)$, $A(3;\,0;\,0)$, $B(0;\,-3;\,0)$ կետերը $MABCD$ կանոնավոր քառանկյուն բուրգի գագաթներն են, $O(0;\,0;\,0)$ կետը բուրգի հիմքի կենտրոնը:

1. Գտնել D կետի օրդինատը:
2. Գտնել $\overrightarrow{MA}+\overrightarrow{MC}$ վեկտորի երկարությունը:
3. Գտնել AK և OA ուղիղների կազմած անկյան աստիճանային չափը, որտեղ K-ն բուրգի բարձրության միջնակետն է:
4. Գտնել $\overrightarrow{AK}$ և $\overrightarrow{OA}$ վեկտորների կազմած անկյան աստիճանային չափը, որտեղ K-ն բուրգի բարձրության միջնակետն է:

15. $A_1(0;\,0;\,2)$, $D_1(3;\,0;\,2)$, $B_1(0;\,3;\,2)$ կետերը $ABCDA_1B_1C_1D_1$ խորանարդի գագաթներն են, ընդ որում A գագաթի ապլիկատը բացասական է:

1. Գտնել խորանարդի B գագաթի օրդինատը:
2. Գտնել $\overrightarrow{BA_1}$ և $\overrightarrow{BC_1}$ վեկտորների սկալյար արտադրյալը:
3. Գտնել $\overrightarrow{A_1D}$ և $\overrightarrow{AC}$ վեկտորների կազմած անկյան աստիճանային չափը:
4. Գտնել $\overrightarrow{AB_1}+\overrightarrow{AC_1}$ վեկտորի երկարությունը:

www.atc.am

16. Տրված է $A(1;\ 0;\ 0)$, $C(0;\ 1;\ 0)$ գագաթներով $ABCDA_1B_1C_1D_1$ խորանարդը:

1. Գտնել խորանարդի կողի երկարությունը:
2. Գտնել $\overrightarrow{A_1C}$ և $\overrightarrow{BD}$ վեկտորների սկալյար արտադրյալը:
3. Գտնել $\overrightarrow{A_1D}$ և $\overrightarrow{DC_1}$ վեկտորների կազմած անկյան աստիճանային չափը:
4. Գտնել C_1D ուղղի և ACC_1 հարթության կազմած անկյան աստիճանային չափը:

17. $A(5;\ 0;\ 0)$, $B_1(0;\ 0;\ 3)$, $C(0;\ 5;\ 0)$ և $B(0;\ 0;\ 0)$ կետերը $ABCDA_1B_1C_1D_1$ կանոնավոր քառանկյուն պրիզմայի գագաթներն են:

1. Գտնել $\overrightarrow{AB_1}$ և $\overrightarrow{AC}$ վեկտորների սկալյար արտադրյալը:
2. Գտնել D գագաթի կոորդինատների գումարը:
3. Գտնել Oyz հարթության վրա $\overrightarrow{AB_1}$ վեկտորի պրոյեկցիայի երկարությունը:
4. Գտնել $\overrightarrow{AC}+\overrightarrow{AA_1}-\overrightarrow{A_1C}$ վեկտորի երկարությունը:

18. Տրված են $ABCD$ զուգահեռագծի $A(2;\ 2)$, $B(9;\ 2)$ և $D(-1;\ -2)$ գագաթները:

1. Գտնել զուգահեռագծի C գագաթի աբսցիսը:
2. Գտնել զուգահեռագծի AD կողմի երկարությունը:
3. Գտնել զուգահեռագծի մակերեսը:
4. Գտնել $\overrightarrow{AM}$ և $\overrightarrow{AC}$ վեկտորների կազմած անկյան աստիճանային չափը, որտեղ M-ը զուգահեռագծի A գագաթից DC կողմին տարված բարձրության հիմքն է:

www.atc.am

19. Տրված են $ABCD$ սեղանի $A(3;3)$, $B(7;-1)$, $C(3;-7)$, $D(-3;-1)$ գագաթները:

1. Գտնել սեղանի AC անկյունագծի երկարությունը:
2. Գտնել $\overrightarrow{AB}$ և $\overrightarrow{AC}$ վեկտորների կազմած անկյան աստիճանային չափը:
3. Գտնել $\overrightarrow{AC}$ և $\overrightarrow{DB}$ վեկտորների սկալյար արտադրյալը:
4. Գտնել սեղանի մակերեսը:

20. Տրված են $ABCD$ քառակուսու $A(-2;3)$, $B(3;8)$, $C(8;3)$ գագաթները:

1. Գտնել քառակուսու BD անկյունագծի երկարությունը:
2. Գտնել քառակուսու անկյունագծերի հատման կետի աբսցիսը:
3. Գտնել քառակուսու մակերեսը:
4. Գտնել քառակուսու A և B գագաթներով անցնող ուղղի անկյունային գործակիցը:

21. Տրված են $A(-3;2)$, $B(5;8)$, $C(7;2)$ կետերը:

1. Գտնել B կետի հեռավորությունը օրդինատների առանցքից:
2. Գտնել AB հատվածի երկարությունը:
3. Գտնել ABC եռանկյան B գագաթից տարված բարձրության երկարությունը:
4. Գտնել Oy առանցքի նկատմամբ AB հատվածի միջնակետի համաչափ կետի օրդինատը:

www.atc.am

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ա/Հ	Ենթաառաջադրանքի համարը			
	1	2	3	4
1	5	3	3	90
2	1	5	180	0
3	10	6	7	252
4	7	3	3	7
5	4	60	3	3
6	1	5	135	0
7	3	13	2	12
8	8	3	11	8
9	5	7	90	13
10	2	1	2	2
11	3	0	180	28
12	6	2	60	6
13	6	12	120	0
14	3	12	45	135
15	3	9	60	9
16	1	0	120	30
17	25	10	3	6
18	6	5	28	45
19	10	45	0	50
20	10	3	50	1
21	5	10	6	5

www.atc.am

ԲԱԺԻՆ 8. ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տրված են $A=\{a; b; c; d; 2; 5; 8\}$ և $B=\{a; b; e; 3; 5; 8\}$ բազմությունները:

1. Գտնել $A\cap B$ բազմության ենթաբազմությունների քանակը:
2. Քանի՞ եղանակով կարելի է $A\cup B$ բազմության տարրերից կազմել չորս նիշանոց ծածկագիր, որի առաջին և երկրորդ նիշերը լինեն տառեր, իսկ երրորդ և չորրորդ նիշերը՝ թվեր:

2. Տրված են $A=\{a; b; c; d; 2; 5; 8\}$ և $B=\{a; b; e; 3; 5; 8\}$ բազմությունները:

1. Գտնել $A\cup B$ բազմության տարրերի 2-ական զուգորդությունների քանակը:
2. Գտնել $A\setminus B$ բազմության 3-ական կարգավորությունների քանակը:

3. Տրված է $A=\{1; 2; 5; 8\}$ բազմությունը:

1. Քանի՞ քառանիշ թիվ կարելի է գրել A բազմության թվանշաններով, որոնցից յուրաքանչյուրում լինի գոնե մեկ կրկնվող թվանշան:
2. 5-ի բազմապատիկ քանի՞ քառանիշ թիվ կարելի է կազմել A բազմության տարրերով:

4. Տրված է $A=\{0; 1; 2; 3; 4; 5; 6\}$ բազմությունը:

1. Գտնել բոլոր այն եռանիշ թվերի քանակը, որոնց առաջին և վերջին թվանշանները A-ից են:
2. Չկրկնվող թվանշաններով և 10-ի բազմապատիկ քանի՞ հնգանիշ թիվ կարելի է կազմել A բազմության թվանշաններով:

5. Տրված է $C=\{1; 2; 4; 5; 6\}$ բազմությունը:

1. Գտնել 4000-ից մեծ և C բազմության տարրերով գրվող քառանիշ թվերի քանակը (թվանշանները կարող են կրկնվել):
2. Գտնել 50000-ից մեծ և տարբեր թվանշաններից կազմված բոլոր այն հնգանիշ թվերի քանակը, որոնք կարելի է գրել C բազմության տարրերով:

www.atc.am

6. A-ն միանիշ բաղադրյալ թվերի բազմությունն է:

1. Չկրկնվող թվանշաններով քանի՞ կենտ քառանիշ թիվ կարելի է գրել A բազմության տարրերով:
2. Գտնել A բազմության տարրերով կազմված բոլոր զույգ եռանիշ թվերի քանակը:

7. Տրված է $B = \{$ա; բ; գ; դ; ե; զ $\}$ տառերի բազմությունը:

1. Քանի՞ 3 տառանոց "բառ" կարելի է կազմել B բազմության տարրերով (բառը կարող է իմաստ չունենալ):
2. Քանի՞ 6 տառանոց "բառ" կարելի է կազմել B բազմության տառերով՝ առանց կրկնելու "բառ"-ի տառերը, որոնց մեջ **բ** և **զ** տառերը կողք-կողքի չլինեն (բառը կարող է իմաստ չունենալ):

8. Մաթեմատիկայի խմբակին մասնակցում է 5 աշակերտ:

1. Քանի՞ եղանակով կարելի է նրանց ցուցակագրել (դասավորել ցուցակում):
2. Քանի՞ եղանակով կարող է ուսուցիչը նրանցից յուրաքանչյուրին առաջադրել երկու խնդիրներից մեկը (առաջադրման եղանակ է նաև այն դեպքը, երբ բոլորին հանձնարարվի նույն խնդիրը):

9. Շախմատի մրցաշարում, որում ամեն մասնակից մյուսներից յուրաքանչյուրի հետ պետք է անցկացնի մեկ խաղ, մասնակցում են 5 գրոսմայստեր և 3 վարպետ:

1. Քանի՞ խաղ կկայանա գրոսմայստերների միջև:
2. Քանի՞ եղանակով է հնարավոր մասնակիցներից կազմել չորս հոգանոց թիմ, որում լինեն և՛ գրոսմայստեր, և՛ վարպետ:

10. Ընթերցասրահում դրված է հանրագիտարանի 6 հատոր:

1. Ընթերցողը քանի՞ եղանակով կարող է ընտրել այդ հատորներից երկուսը:
2. Քանի՞ եղանակով է հնարավոր այդ գրքերը դասավորել գրադարակում այնպես, որ 1-ին և 6-րդ հատորները կողք-կողքի չլինեն:

www.etc.am

11. Սեղանին դրված է 7 տեսակի միրգ՝ յուրաքանչյուրից մեկ հատ:

1. Քանի՞ եղանակով կարելի է ընտրել 3 միրգ:
2. Քանի՞ եղանակով է հնարավոր, որ երեք երեխաներից յուրաքանչյուրը սեղանից վերցնի մեկ միրգ:

12. Դասարանում սովորում են 11 տղա և 9 աղջիկ:

1. Քանի՞ եղանակով կարելի է դասարանի աշակերտներից ընտրել երկուսին՝ մեկը՝ ավագ, մյուսը՝ աշակերտական խորհրդի անդամ:
2. Քանի՞ եղանակով կարելի է դասարանի աշակերտներից ընտրել երեք հոգանոց խումբ, որում լինեն և՛տղա, և՛ աղջիկ:

13. Զբոսաշրջիկը նախատեսել է ճամփորդել Մոսկվա,Կիև, Ռիգա և Պրագա քաղաքներով:

1. Հերթականությունն ընտրելու քանի՞ հնարավորություն ունի զբոսաշրջիկը, եթե նա որոշել է ճամփորդությունն ավարտել Կիևում:
2. Հերթականությունն ընտրելու քանի՞ հնարավորություն ունի զբոսաշրջիկը, եթե նա որոշել է ճամփորդության ընթացքում Ռիգա մեկնի Մոսկվա և Պրագա այցելելուց հետո:

14. Կատարել առաջադրանքները.

1. Քանի՞ հնգանիշ զույգ թիվ կարելի է կազմել 0, 1, 2, 3, 4, 5 թվանշաններով (առանց թվանշանների կրկնության):
2. Գտնել բազմության տարրերի քանակը, եթե նրա 2-ական կարգավորությունների թիվը 100-ից մեծ և 130-ից փոքր թիվ է:

15. Կատարել առաջադրանքները.

1. Գտնել $2A_7^2 - C_8^3$ արտահայտության արժեքը:
2. Քանի՞ վեցանիշ կենտ թիվ կարելի է կազմել 0, 2, 3, 5, 7, 8 թվանշաններով (առանց թվանշանների կրկնության):

www.aic.am

16. Կատարել առաջադրանքները.

1. Գտնել n-ը, եթե $P_{n+1} - P_n = 100P_{n-1}$:
2. Գտնել 4-ի բաժանվող բոլոր այն քառանիշ թվերի քանակը, որոնցից յուրաքանչյուրի գրառումը չի պարունակում 0, 2, 4, 6 թվանշաններից և n՛չ մեկը:

17. Կատարել առաջադրանքները.

1. 11 երեխաներից պատահականորեն ընտրվում են 3-ը և շարք կանգնեցվում: Քանի՞ եղանակով կարելի է շարք կազմել:
2. Գտնել n -ը, եթե $4A_n^2 = C_n^3$:

18. Կատարել առաջադրանքները.

1. Քանի՞ եղանակով կարելի է շախմատի դաշտի հորիզոնական շերտի 8 վանդակներում դասավորել արքա և թագուհի խաղաքարերը այնպես, որ թագուհին լինի շերտի առաջին կամ վերջին վանդակում:
2. Քանի՞ եղանակով կարելի է շախմատի դաշտի հորիզոնական շերտի 8 վանդակներում դասավորել արքա և թագուհի խաղաքարերը այնպես, որ դրանք կողք-կողքի չգտնվեն:

19. Կատարել առաջադրանքները.

1. Քանի՞ եղանակով կարող են բաշխվել առաջին, երկրորդ և երրորդ մրցանակային տեղերը ֆուտբոլային մրցաշարում, որում մասնակցում է 9 թիմ:
2. Քանի՞ տարր ունի բազմությունը, եթե նրա 3-ական զուգորդությունների թիվը 5 անգամ մեծ է 2-ական զուգորդությունների թվից:

20. Կատարել առաջադրանքները.

1. Գտնել $\dfrac{24!}{P_{22}}$ արտահայտության արժեքը:
2. Չկրկնվող թվանշաններով քանի՞ քառանիշ զույգ թիվ կարելի է կազմել 5, 6, 7, 8, 9 թվանշաններով:

www.atc.am

21. Կատարել առաջադրանքները.

1. Քանի՞ եղանակով է հնարավոր 6 տարբեր ուսումնական առարկաներից (այդ թվում հանրահաշիվ և երկրաչափություն) կազմել օրվա 6 ժամանոց դասացուցակ այնպես, որ երկրաչափություն և հանրահաշիվ առարկաները լինեն կողք-կողքի:
2. Հարթության վրա զույգ առ զույգ հատվող ուղղիղներից ոչ մի երեքը չեն անցնում միևնույն կետով: Գտնել ուղիղների քանակը, եթե նրանք ունեն 55 հատման կետ:

22. Կատարել առաջադրանքները.

1. Չկրկնվող թվանշաններով և 5-ի բազմապատիկ քանի՞ բնական թիվ կարելի է կազմել 2, 3, 4, 5 թվանշաններով:
2. Գտնել ուռուցիկ բազմանկյան կողմերի թիվը, եթե այն ունի 20 անկյունագիծ:

23. 7 տարբեր ուսումնական առարկաներից՝ այդ թվում մաթեմատիկան և ֆիզիկան, պետք է կազմել օրվա 7 ժամանոց դասացուցակ:

1. Քանի՞ եղանակով կարելի է այն կազմել այնպես, որ մաթեմատիկան լինի առաջին ժամին, իսկ ֆիզիկան՝ երկրորդ:
2. Քանի՞ եղանակով կարելի է այն կազմել այնպես, որ մաթեմատիկա և ֆիզիկա առարկաները երրորդ ժամից հետո լինեն:

24. Կատարել առաջադրանքները.

1. Ծաղկաթմբում կա 7 սպիտակ և 5 կարմիր ծաղիկ: Քանի՞ եղանակով է հնարավոր պոկել 3 ծաղիկ այնպես, որ բոլորը նույն գույնի չլինեն:
2. 2-ից մեծ թվանշաններով կազմված քանի՞ բառանիշ թիվ կա, որոնց գրության մեջ թվանշանները չեն կրկնվում, և 4 ու 5 թվանշանները կողք-կողքի չեն գտնվում:

25. Կատարել առաջադրանքները.

1. Գտնել n-ը, եթե $A_{11}^{n} = 990$:
2. Քանի՞ ինքնանիշ թիվ կարելի է կազմել չորս հատ 4 և հինգ հատ 5 թվանշաններով:

www.aic.am

26. Կատարել առաջադրանքները.

1. 3-ից ավելի տարր պարունակող որևէ բազմության 4-ական կարգավորությունների քանակը քանի՞ անգամ է մեծ նրա 4-ական զուգորդությունների քանակից:
2. Գտնել այն եռանիշ թվերի քանակը, որոնցից յուրաքանչյուրի գրառման մեջ կա ճիշտ մեկ 6 թվանշան:

27. Կատարել առաջադրանքները.

1. Չկրկնվող թվանշաններով բոլոր այն հնգանիշ թվերը, որոնք կարելի է կազմել 1, 2, 3, 4, 5 թվանշաններով, համարակալված են աճման կարգով: Ո՞ր համարն է կրում 54312 թիվը:
2. Քանի՞ եղանակով է հնարավոր 8 մարդուց ընտրել 3 զույգ:

28. Կատարել առաջադրանքները.

1. Գտնել այն բազմության տարրերի քանակը, որի երկուական տարր պարունակող ենթաբազմությունների քանակը հավասար է 21-ի:
2. Գտնել 6-ից փոքր թվանշաններով կազմված այն եռանիշ թվերի քանակը, որոնք փոքր են 400-ից:

29. Կատարել առաջադրանքները.

1. Քանի՞ ուղղանկյունանիստ կա, որոնց չափումներից յուրաքանչյուրը 1-ից մինչև 5 բնական թվերից են (ուղղանկյունանիստի չափումները տեղափոխելիս ուղղանկյունանիստը համարել նույնը):
2. Գտնել ուռուցիկ տասանկյան կողմերի և անկյունագծերի քանակների գումարը:

30. Կատարել առաջադրանքները.

1. Քանի՞ ձևով է հնարավոր 3 տարատեսակ գործիքները դասավորել 4 տարատեսակ արկղերում:
2. Ուռուցիկ տասներկուանկյան անկյունագծերից ոչ մի երեքը չեն անցնում բազմանկյան ներսում գտնվող կետով: Գտնել այդ բազմանկյան անկյունագծերի հատման կետերի քանակը (բազմանկյան գագաթները չեն հաշվվում):

www.afc.am

31. Կատարել առաջադրանքները.

1. Գտնել $A_5^3 - 6 \cdot C_5^2$ արտահայտության արժեքը:
2. Ուռուցիկ բազմանկյան կողմերի քանակը երկու անգամ փոքր է նրա անկյունագծերի քանակից: Քանի՞ գագաթ ունի այդպիսի բազմանկյունը:

32. Կատարել առաջադրանքները.

1. Դասարանում կա 20 աշակերտ: Նրանք բոլորը փոխանակեցին իրենց լուսանկարները: Ընդամենը քանի՞ լուսանկար փոխանակվեց:
2. Քանի՞ եղանակով է հնարավոր 3 տղայի և 3 աղջկա շարք կանգնեցնել այնպես, որ միևնույն սեռի անձիք չլինեն իրար կողքի:

33. α հարթության վրա տրված են 5 կետեր այնպես, որ նրանցից ոչ մի երեքը չեն գտնվում մեկ ուղղի վրա, իսկ α հարթությունից դուրս տրված է B կետը:

1. Գտնել այն եռանկյունների քանակը, որոնց գագաթներն ընտրված են α հարթության վրա տրված կետերից:
2. Գտնել այն քառանիստերի քանակը, որոնց գագաթներն ընտրված են տրված կետերից:

34. Կատարել առաջադրանքները.

1. Գտնել A_n^2-ը, եթե $C_n^2 = 78$:
2. Չկրկնվող թվանշաններով քանի՞ բնական թիվ կարելի է կազմել 0, 2, 4, 6 թվանշաններով:

35. Կատարել առաջադրանքները.

1. Գտնել գոնե մեկ կրկնվող թվանշան պարունակող բոլոր այն քառանիշ թվերի քանակը, որոնք գրվում են 0, 2, 4, 6, 8 թվանշաններով:
2. Գտնել բոլոր այն եռանիշ թվերի քանակը, որոնցից յուրաքանչյուրի թվանշաններից գոնե մեկը կենտ է:

www.atc.am

36. Կատարել առաջադրանքները.

1. Քանի՞ բաժանարար ունի $25 \cdot 49$ թիվը:
2. 5-ի բազմապատիկ քանի՞ եռանիշ թիվ կարելի է կազմել 0, 1, 3, 5, 7, 9 թվանշաններով:

37. Կատարել առաջադրանքները.

1. Գտնել 7-ից փոքր թվանշաններով կազմված բոլոր այն քառանիշ թվերի քանակը, որոնցից յուրաքանչյուրի թվանշանները դասավորված են (ձախից աջ) նվազման կարգով:
2. Գտնել 7-ից փոքր թվանշաններով կազմված բոլոր այն եռանիշ թվերի քանակը, որոնցից յուրաքանչյուրում հարևան (կողք-կողքի) թվանշանները տարբեր են:

38. Կատարել առաջադրանքները.

1. 12 բնական թվերից պետք է ընտրել իրարից տարբեր n թիվ: n-ի ո՞ր արժեքի դեպքում ընտրության եղանակների քանակը կլինի ամենամեծը:
2. Գտնել բոլոր այն եռանիշ թվերի քանակը, որոնցից յուրաքանչյուրի գրառման մեջ կա գոնե մեկ 5 թվանշան:

39. Կատարել առաջադրանքները.

1. Գտնել n-ը, եթե $A_n^4 = 7A_n^3$:
2. Գտնել այն բազմության տարրերի քանակը, որի մեկական տարրից և երկուական տարրից կազմված բոլոր ենթաբազմությունների քանակը հավասար է 78-ի:

40. Կատարել առաջադրանքները.

1. Գտնել n-ը, եթե $3C_{n+3}^n - C_{n+2}^n = 7(n+2)^2$:
2. Քանի՞ եղանակով է հնարավոր հանրագիտարանի 5 հատորները շարել իրար վրա այնպես, որ 1-ին հատորը 2-րդից վերև չլինի:

www.aic.am

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ա/Հ	Եռթաառաջադրանքի համարը	
	1	2
1	16	400
2	36	6
3	232	64
4	420	360
5	375	48
6	6	48
7	216	480
8	120	32
9	10	65
10	15	480
11	35	210
12	380	891
13	6	8
14	312	11
15	28	288
16	10	36
17	990	26
18	14	42
19	504	17
20	552	48
21	240	11
22	16	8
23	120	240
24	175	720
25	3	126
26	24	225
27	119	420
28	7	108
29	35	45
30	64	495
31	0	7
32	380	72
33	10	10
34	156	48
35	404	800
36	9	60
37	35	216
38	6	252
39	10	12
40	13	60


www.atc.am

ԳԼՈՒԽ 3

ՊՆԴՈՒՄՆԵՐԻ ՓՈՒՆՋ

Երրորդ գլխի առաջադրանքներն ունեն հետևյալ բովանդակությունը. տրված է որևէ մաթեմատիկական օբյեկտ (օրինակ՝ ֆունկցիա, հավասարում, երկրաչափական պատկեր և այլն), որի վերաբերյալ բերված է 6 պնդում: Յուրաքանչյուրի համար պետք է պարզել՝ այն ճի՞շտ է, թե՞ սխալ: Հարցին ճիշտ պատասխանելու դեպքում դիմորդը ստանում է մեկ միավոր, իսկ սխալ պատասխանելու դեպքում հանվում է մեկ միավոր: «Չգիտեմ» պատասխանելու դեպքում այդ պնդման համար միավոր չի տրվում: Եթե առաջադրանքի 6 պնդումներից ստացված միավորների գումարը դրական է, այն համարվում է այդ առաջադրանքի գնահատականը: Հակառակ դեպքում, այսինքն՝ երբ միավորների գումարը 0 է կամ բացասական, առաջադրանքի գնահատականը 0 է: Այսպիսով՝ գնահատվում է ոչ թե ամեն մի պնդում առանձին, այլ՝ առաջադրանքն ամբողջությամբ:

Այս տիպի առաջադրանքի պատասխանը գտնելիս «X» նշանը անհրաժեշտ է դնել պնդման ուղղահայաց սյունակի պատասխանների հնարավոր երեք՝ «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պնդումների վանդակներից մեկում: Օրինակ՝ եթե դիմորդը 4-րդ պնդման համար որպես պատասխան ընտրել է «Սխալ է» պատասխանը, ապա այն լրացվում է հետևյալ ձևով՝



Պնդման պատասխանը համարվում է ճիշտ, եթե պնդումը ճշմարիտ է և դիմորդը նշել է «Ճիշտ է» պատասխանը, կամ եթե պնդումը ճշմարիտ չէ և դիմորդը նշել է «Սխալ է» պատասխանը:

www.atc.am

ԲԱԺԻՆ 1. ԹՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ճի՞շտ են, թե՞ սխալ հետևյալ պնդումները.

1. 0-ից տարբեր երկու թվերի արտադրյալի հակադարձը հավասար է այդ թվերի հակադարձների արտադրյալին:
2. Կանոնավոր կոտորակի հակադարձը անկանոն կոտորակ է:
3. Ցանկացած երկու թվերի արտադրյալի հակադիր թիվը հավասար է այդ թվերի հակադիր թվերի արտադրյալին:
4. Ցանկացած երկու բաղադրյալ թվերի գումարը բաղադրյալ թիվ է:
5. Եթե բնական թիվը բաժանվում է և՛ 4-ի, և՛ 6-ի, ապա այն բաժանվում է 24-ի:
6. Եթե ցանկացած սովորական կոտորակի համարիչին և հայտարարին գումարենք 1, ապա կոտորակը կմեծանա:

2. Ճի՞շտ են, թե՞ սխալ հետևյալ պնդումները.

1. Ցանկացած երկու դրական թվերի գումարի հակադարձը հավասար է այդ թվերի հակադարձների գումարին:
2. Ցանկացած անկանոն կոտորակի հակադարձը կանոնավոր կոտորակ է:
3. Ցանկացած երկու թվերի գումարի հակադիր թիվը հավասար է գումարելիների հակադիր թվերի գումարին:
4. Ցանկացած երկու պարզ թվերի գումարը բաղադրյալ թիվ է:
5. Եթե բնական թիվը բաժանվում է և՛ 3-ի, և՛ 8-ի, ապա այն բաժանվում է 24-ի:
6. Եթե կանոնավոր կոտորակի համարիչը և հայտարարը մեծացնենք 1-ով, ապա կոտորակը կմեծանա:

www.atc.am

3. Ճի՞շտ են, թե՞ սխալ հետևյալ պնդումները.

1. Փոխադարձաբար պարզ թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկը այդ թվերի արտադրյալն է:
2. Եթե երկու բնական թվերի արտադրյալը բաժանվում է 6-ի, ապա նրանցից մեկը բաժանվում է 6-ի:
3. Երկու հաջորդական կենտ թվերի քառակուսիների տարբերությունը բաժանվում է 8-ի:
4. Գոյություն ունեն իրարից տարբեր չորս պարզ թվեր, որոնցից երկուսի արտադրյալը հավասար է մյուս երկուսի արտադրյալին:
5. Ցանկացած բնական n-ի դեպքում n^2+3n+1 թիվը կենտ է:
6. 3^{19} թիվն ունի ճիշտ 19 բաժանարար:

4. Ճի՞շտ են, թե՞ սխալ հետևյալ պնդումները.

1. Երեք հաջորդական բնական թվերի արտադրյալը բաժանվում է 6-ի:
2. Ցանկացած P պարզ թվի համար $(P+3)$-ը բաղադրյալ թիվ է:
3. Ցանկացած երեք բնական թվերից միշտ կարելի է ընտրել երկուսը, որոնց գումարը բաժանվում է 2-ի:
4. Եթե p-ն և q-ն կենտ թվեր են, ապա p^2-q^2 թիվը բաժանվում է 8-ի:
5. Ցանկացած բնական n-ի դեպքում n^2+n+17 թիվը պարզ է:
6. 9^{10} թիվն ունի ճիշտ 11 բաժանարար:

www.atc.am

5. Ճի՞շտ են, թե՞ սխալ հետևյալ պնդումները.

1. 5-ի բազմապատիկ ցանկացած բնական թիվ բաղադրյալ է:
2. 207 և 351 թվերը փոխադարձաբար պարզ են:
3. Գոյություն ունի այնպիսի բնական n թիվ, որի դեպքում $19n+6$ թիվն ամբողջ թվի քառակուսի է:
4. Ցանկացած բնական n-ի դեպքում $\frac{2n-1}{n+7}$ կոտորակն անկրճատելի է:
5. Եթե $\overline{ab}$-ն երկնիշ թիվ է, ապա $\overline{ab}-\overline{ba}$ թիվը 9-ի բազմապատիկ է $(a>b)$:
6. Բնական թվերի շարքի առաջին 100 թվերը գրառելիս 7 թվանշանն օգտագործվում է 20 անգամ:

6. Ճի՞շտ են, թե՞ սխալ հետևյալ պնդումները.

1. Եթե բնական թիվը բաժանվում է 3-ի, ապա այն բաղադրյալ է:
2. 47 և 517 թվերը փոխադարձաբար պարզ են:
3. Ցանկացած բնական n-ի դեպքում $\frac{n^2+n}{2n+2}$ կոտորակը կրճատելի է:
4. Կարելի է ընտրել այնպիսի բնական n թիվ, որի դեպքում $10n+8$ թիվն ամբողջ թվի քառակուսի է:
5. Եթե $\overline{ab}$-ն երկնիշ թիվ է, ապա $\overline{ab}+\overline{ba}$ թիվը 11-ի բազմապատիկ է:
6. Բնական թվերի շարքի առաջին 100 թվերը գրառելիս 1 թվանշանն օգտագործվում է 20 անգամ:

www.atc.am

7. Ճի՞շտ են, թե՞ սխալ հետևյալ պնդումները.

1. Եթե երկու ամբողջ թվերի արտադրյալը հավասար է 100-ի, ապա արտադրիչները միաժամանակ 10-ից փոքր լինել չեն կարող:
2. 1-ից մինչև 20 բնական թվերի շարքում կա ընդամենը 4 թիվ, որոնցից յուրաքանչյուրը 4-ի բաժանելիս ստացվում է 1 մնացորդ:
3. Եթե a և b բնական թվերը չեն բաժանվում 3-ի, ապա $a+b$-ն ևս չի բաժանվում 3-ի:
4. Գոյություն ունեն իրարից տարբեր հինգ բնական թվեր, որոնց արտադրյալը փոքր է 120-ից:
5. Ցանկացած բնական n-ի դեպքում $\left(n^2;n^2+2n\right]$ միջակայքում չկա այնպիսի թիվ, որն ամբողջ թվի քառակուսի է:
6. 1-ից մինչև 31 բնական թվերի արտադրյալի վերջին 7 թվանշանները զրո են:

8. Ճի՞շտ են, թե՞ սխալ հետևյալ պնդումները.

1. Գոյություն ունեն 10-ից փոքր երկու այնպիսի ամբողջ թվեր, որոնց արտադրյալը հավասար է 120-ի:
2. 1-ից մինչև 100 բնական թվերի շարքում կա 6-ի բաժանվող 16 թիվ:
3. a, b, $a+b$, $a-b$ բնական թվերից գոնե մեկը բաժանվում է 3-ի:
4. Եթե իրարից տարբեր երեք բնական թվերի արտադրյալը մեծ է 300-ից, ապա նրանցից գոնե մեկը մեծ է 7-ից:
5. Գոյություն ունի այնպիսի բնական n թիվ, որի դեպքում n^2-2n թիվը բնական թվի քառակուսի է:
6. 1-ից մինչև 19 բնական թվերի արտադրյալի վերջին չորս թվանշանները զրո են:

www.atc.am

9. Ճի՞շտ են, թե՞ սխալ հետևյալ պնդումները.

1. Չորս հաջորդական բնական թվերի գումարը 4-ի բազմապատիկ է:
2. $9^{20}-5^{15}$ թիվը վերջանում է 6 թվանշանով:
3. 415-ը կարելի է ներկայացնել միմյանց հաջորդող հինգ բնական թվերի գումարի տեսքով:
4. Երեք հաջորդական թվանշաններով գրված ցանկացած եռանիշ թիվ բաժանվում է 3-ի:
5. $\overline{ab}+\overline{ba}$ գումարը $(a+b)$-ի բազմապատիկ է:
6. Կարելի է ընտրել այնպիսի բնական n թիվ, որի դեպքում ճիշտ կլինի $n^2+n=3^{50}$ հավասարությունը:

10. Ճի՞շտ են, թե՞ սխալ հետևյալ պնդումները.

1. Երեք հաջորդական բնական թվերի գումարը 3-ի բազմապատիկ է:
2. 8^8-6^6 թիվը վերջանում է 2 թվանշանով:
3. 240 -ը կարելի է ներկայացնել միմյանց հաջորդող չորս բնական թվերի գումարի տեսքով:
4. Միևնույն թվանշաններով գրված ցանկացած եռանիշ թիվ բաժանվում է 37-ի:
5. Եթե բնական թիվը 11-ի բաժանելիս մնացորդում ստացվում է 4, ապա նրա քառակուսին 11-ի բաժանելիս ստացվում է 6 մնացորդ:
6. Հնարավոր չէ ընտրել այնպիսի բնական n, k, m թվեր, որ տեղի ունենա $4^n+5^k=6^m$ հավասարությունը:

www.atc.am

11. Տրված է $a_n = n^2 - 1$ ընդհանուր անդամով հաջորդականությունը:

1. Հաջորդականության բոլոր անդամները դրական են:
2. Եթե n-ը կենտ է, ապա a_n-ը բաժանվում է 8-ի:
3. Հաջորդականությունն ունի անդամներ, որոնք բնական թվերի քառակուսիներ են:
4. Եթե n-ը 3-ի բազմապատիկ չէ, ապա a_n-ը բաժանվում է 3-ի:
5. $n \geq 2$ դեպքում n-ը և a_n-ը փոխադարձաբար պարզ են:
6. Հաջորդականությունն ունի մեկից ավելի անդամներ, որոնք պարզ թվեր են:

12. Տրված է $a_n = n^2 + n$ ընդհանուր անդամով հաջորդականությունը:

1. Հաջորդականությունն ունի այնպիսի անդամ, որը կենտ թիվ է:
2. Հաջորդականության բոլոր անդամները բաղադրյալ թվեր են:
3. Ցանկացած բնական n-ի դեպքում $a_n < (n+1)^2$:
4. Հաջորդականության ոչ մի անդամ չի բաժանվում 23-ի:
5. Հաջորդականության անվերջ շատ անդամներ կան, որոնք 7-ի բազմապատիկ են:
6. Հաջորդականության ոչ մի անդամ ամբողջ թվի քառակուսի լինել չի կարող:

www.atc.am

13. Ճի՞շտ են, թե՞ սխալ հետևյալ պնդումները.

1. 5 և 5,1 թվերի միջև ռացիոնալ թիվ չկա:
2. Հնարավոր է ընտրել իրար հաջորդող հինգ այնպիսի բնական թվեր, որոնց գումարը հավասար լինի 2012-ի:
3. Եթե երկու բնական թվերից մեկը պարզ թիվ է, ապա այդ թվերը փոխադարձաբար պարզ են:
4. Գոյություն ունեն երկու այնպիսի կենտ թվեր, որոնց քառակուսիների գումարը հավասար է 1680:
5. $3^{100}-11^{20}$ թիվը 10-ի բազմապատիկ է:
6. Ցանկացած բնական n-ի դեպքում $\frac{8^n-1}{7}$ կոտորակի արժեքը բնական թիվ է:

14. Ճի՞շտ են, թե՞ սխալ հետևյալ պնդումները.

1. 3 և 3,3 թվերի միջև կա ընդամենը երկու ռացիոնալ թիվ:
2. Կարելի է ընտրել այնպիսի հինգ կենտ թվեր, որոնց գումարը հավասար լինի 100-ի:
3. Եթե երկու բնական թվեր փոխադարձաբար պարզ են, ապա նրանցից գոնե մեկը պարզ թիվ է:
4. Բնական թվի քառակուսին 4-ի բաժանելիս կարող է ստացվել 2 մնացորդ:
5. Ցանկացած բնական k-ի դեպքում 16^k-11^k թիվը 5-ի բազմապատիկ է:
6. Ցանկացած բնական n-ի դեպքում $\frac{10^n-1}{9}$ կոտորակի արժեքը բնական թիվ է:

www.atc.am

15. Տրված է $\frac{3n+10}{n+2}$ կոտորակը, որտեղ n-ը բնական թիվ է:

1. Ցանկացած n-ի դեպքում այդ կոտորակն անկրճատելի է:
2. Ցանկացած n-ի դեպքում այդ կոտորակը մեծ չէ 5-ից:
3. Գոյություն ունի n-ի այնպիսի արժեք, որի դեպքում այդ կոտորակը կանոնավոր է:
4. Գոյություն ունեն անվերջ շատ n-եր, որոնցից յուրաքանչյուրի դեպքում կոտորակը կրճատվող է:
5. Ոչ մի n-ի դեպքում այդ կոտորակը չի կարող կրճատվել 5-ով:
6. Գոյություն ունի այնպիսի n, որի դեպքում կոտորակի արժեքն ամբողջ թիվ է:

16. Տրված է $\frac{5n+9}{n+3}$ կոտորակը, որտեղ n-ը բնական թիվ է:

1. Ցանկացած n-ի դեպքում այդ կոտորակի արժեքը մեծ է 4-ից:
2. Ցանկացած n-ի դեպքում այդ կոտորակն անկանոն է:
3. Գոյություն ունեն անվերջ շատ n-եր, որոնցից յուրաքանչյուրի դեպքում կոտորակը կրճատվող է:
4. Կարելի է ընտրել այնպիսի n բնական թիվ, որի դեպքում այդ կոտորակը կրճատվում է 9-ով:
5. Գոյություն ունի n-ի գոնե մեկ արժեք, որի դեպքում տրված կոտորակի արժեքն ամբողջ թիվ է:
6. Կարելի է ընտրել n-ի երկու արժեք, որոնց դեպքում կոտորակի արժեքն ամբողջ թիվ է:

www.afc.am

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ա/Հ	Ենթաառաջադրանքի համարը					
	1	2	3	4	5	6
1	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	սխալ է	սխալ է
2	սխալ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է
3	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է
4	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է
5	սխալ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է
6	սխալ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է
7	սխալ է	սխալ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է
8	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է
9	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է
10	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է
11	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է
12	սխալ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է
13	սխալ է	սխալ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է
14	սխալ է	սխալ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է
15	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է
16	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է

www.atc.am

ԲԱԺԻՆ 2. ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ

1. Տրված է $|x-4|+|x+4|=b$ հավասարումը (b-ն պարամետր է):

1. Եթե a թիվը տրված հավասարման արմատ է, ապա $-a$ թիվը ևս այդ հավասարման արմատ է:
2. b-ի ցանկացած դրական արժեքի դեպքում հավասարումն ունի արմատ:
3. $b=8$ դեպքում հավասարման արմատների բազմությունը $[-4;\ 4]$ միջակայքն է:
4. $b>8$ դեպքում $(-\infty;\ -4]$ միջակայքում հավասարման արմատը $-\frac{b}{2}$-ն է:
5. $b<8$ դեպքում հավասարումն արմատ չունի:
6. $b>8$ պայմանին բավարարող ցանկացած b-ի դեպքում հավասարումն ունի ճիշտ երկու արմատ:

2. Տրված է $\sqrt{4-x^2}=|x|-a$ հավասարումը (a-ն պարամետր է):

1. Եթե x_0-ն այդ հավասարման արմատ է, ապա $-x_0$-ն ևս նրա արմատ է:
2. Հավասարման ԹՕՔ-ը $|x|\ge a$ անհավասարման լուծումների բազմությունն է:
3. $a=2$ արժեքի դեպքում հավասարումն ունի երեք արմատ:
4. $(-2;\ 2)$ միջակայքի ցանկացած a-ի համար հավասարումն ունի երկու արմատ:
5. $a\le 2\sqrt{2}$ պայմանին բավարարող ցանկացած a-ի դեպքում հավասարումն արմատ ունի:
6. Գոյություն չունի a-ի այնպիսի արժեք, որի դեպքում հավասարումն ունենա ճիշտ մեկ արմատ:

www.atc.am

3. Տրված է $\sqrt{ax+5}=|x+3|$ հավասարումը (a-ն պարամետր է):

1. $a=0$ արժեքի դեպքում հավասարումն ունի ճիշտ երկու արմատ:
2. $a=1$ արժեքի դեպքում հավասարումն ունի ճիշտ մեկ արմատ:
3. Ցանկացած a-ի դեպքում հավասարումն արմատ ունի:
4. Ցանկացած a-ի դեպքում հավասարումը համարժեք է $ax+5=(x+3)^2$ հավասարմանը:
5. Ցանկացած $a<0$ դեպքում հավասարումն ունի ճիշտ երկու արմատ:
6. $2<a\le 10$ պայմանին բավարարող ցանկացած a-ի դեպքում հավասարումն արմատ չունի:

4. Տրված է $9^x+(a+1)\cdot 3^x+a=0$ հավասարումը (a-ն պարամետր է):

1. Հավասարումը կարող է ունենալ բացասական արմատ:
2. Ցանկացած a-ի դեպքում հավասարումն արմատ ունի:
3. $a>0$ դեպքում հավասարումն արմատ չունի:
4. $a<0$ պայմանին բավարարող ցանկացած a-ի դեպքում հավասարումն արմատ ունի:
5. $a=0$ արժեքի դեպքում հավասարումն ունի արմատ:
6. Գոյություն չունի a-ի այնպիսի արժեք, որի դեպքում հավասարումն ունենա երկու արմատ:

www.atc.am

5. Տրված է $\sin^2 x - \sin x = a$ հավասարումը (a-ն պարամետր է):

1. $a = 0$ արժեքի դեպքում հավասարման արմատները $\frac{\pi}{2}k,\ k \in Z$ թվերն են:
2. $a = 2$ արժեքի դեպքում հավասարման արմատները կարելի է ներկայացնել $\frac{3\pi}{2} + 2\pi k,\ k \in Z$ տեսքով:
3. $a = -\frac{1}{2}$ արժեքի դեպքում հավասարումն արմատ չունի:
4. Ցանկացած $a > 2$ արժեքի դեպքում հավասարումն արմատ չունի:
5. $a < 0$ պայմանին բավարարող ցանկացած a-ի դեպքում հավասարումն արմատ չունի:
6. Հավասարումն արմատ ունի այն և միայն այն դեպքում, երբ $a \in \left[-\frac{1}{4};\ 2\right]$:

6. Տրված է $\left(\frac{2}{5}\right)^{|x|-3} = a^2 - 2a$ հավասարումը (a-ն պարամետր է):

1. $a = 2$ արժեքի դեպքում հավասարումն արմատ չունի:
2. $a = -1$ արժեքի դեպքում հավասարումն ունի երկու արմատ:
3. Եթե x_0-ն հավասարման արմատ է, ապա $-x_0$-ն ևս արմատ է:
4. $2 < a < 4$ պայմանին բավարարող ցանկացած a-ի դեպքում հավասարումն ունի երկու արմատ:
5. $a = 5$ դեպքում հավասարումն արմատ չունի:
6. Գոյություն չունի a-ի այնպիսի արժեք, որի դեպքում հավասարումն ունենա ճիշտ մեկ արմատ:

www.atc.am

7. Տրված է $\left(\frac{\pi}{\sqrt{10}}\right)^x = 10 - a^2$ հավասարումը (a-ն պարամետր է):

1. $a = \sqrt{10}$ արժեքի դեպքում հավասարումն արմատ չունի:
2. $\left(-\infty; \sqrt{10}\right)$ միջակայքից անկացած a-ի դեպքում հավասարումն արմատ ունի:
3. $a = \sqrt{5}$ արժեքի դեպքում հավասարման արմատը 1-ից մեծ թիվ է:
4. $\left(3; \sqrt{10}\right)$ միջակայքի ցանկացած a-ի դեպքում հավասարումն արմատ ունի:
5. $\left[-\sqrt{10}; -3\right)$ միջակայքի ցանկացած a-ի դեպքում հավասարումն արմատ ունի:
6. $(0; 3)$ միջակայքի ցանկացած a-ի դեպքում հավասարումն ունի բացասական արմատ:

8. Տրված է $|\cos \pi x| + \sqrt{1 - x^2} = a$ հավասարումը (a-ն պարամետր է):

1. $a = 0$ արժեքի դեպքում հավասարումն արմատ ունի:
2. $a = 1$ արժեքի դեպքում հավասարումն արմատ ունի:
3. $a = 2$ արժեքի դեպքում հավասարումն արմատ չունի:
4. $a > 2$ պայմանին բավարարող ցանկացած a-ի դեպքում հավասարումն արմատ չունի:
5. $a = \frac{\sqrt{3}}{2}$ արժեքի դեպքում հավասարումն ունի միակ արմատ:
6. Գոյություն ունի a-ի այնպիսի արժեք, որի դեպքում հավասարումն ունի միակ արմատ:

www.atc.am

9. Տրված է $2^{|x^3-3x|}=\sin\left(\frac{\pi\sqrt{x^2+22}}{2}\right)$ հավասարումը:

1. Հավասարման ձախ մասի արտահայտությունը չի կարող ընդունել ցանկացած դրական արժեք:
2. Հավասարման աջ մասի արտահայտությունը կարող է ընդունել բացասական արժեք:
3. Եթե x_0 թիվը հավասարման արմատ է, ապա $-x_0$-ն ևս արմատ է:
4. Հավասարումն ունի ռացիոնալ արմատ:
5. Հավասարումը համարժեք է $\sin\left(\frac{\pi\sqrt{x^2+22}}{2}\right)=1$ հավասարմանը:
6. Հավասարումն ունի երեք արմատ:

10. Տրված է $a\cos^2 x+\lg\left(1-x^2\right)=5$ հավասարումը:

1. $a=0$ արժեքի դեպքում հավասարումն արմատ չունի:
2. $a=1$ արժեքի դեպքում հավասարումն ունի միակ արմատ:
3. $a>5$ արժեքի դեպքում հավասարումն ունի ճիշտ երկու արմատ:
4. $a=5$ արժեքի դեպքում հավասարումն արմատ չունի:
5. $a<5$ դեպքում հավասարումն արմատ չունի:
6. Գոյություն ունի a-ի միայն մեկ արժեք, որի դեպքում հավասարումը ունի ճիշտ մեկ արմատ:

11. Տրված է $\begin{cases}x^2+y^2=8\\|x|+|y|=a\end{cases}$ համակարգը (a-ն պարամետր է):

1. $a=1$ արժեքի դեպքում համակարգը լուծում չունի:
2. $a=4$ արժեքի դեպքում համակարգն ունի ճիշտ չորս լուծում:
3. Եթե $(x_0;y_0)$ թվազույգը համակարգի լուծում է, ապա $(-y_0;x_0)$ թվազույգը ևս համակարգի լուծում է:
4. Գոյություն չունի a-ի այնպիսի արժեք, որի դեպքում համակարգն ունենա չորսից ավելի լուծում:
5. $a=3$ դեպքում համակարգն ունի ութ լուծում:
6. Համակարգը լուծում չունի այն և միայն այն դեպքում, երբ $a<2\sqrt{2}$:

www.atc.am

12. Տրված է $|x-a|(x+a-4)\le 0$ անհավասարումը (a-ն պարամետր է):

1. $a=2$ դեպքում անհավասարումն ունի լուծում:
2. a-ի ցանկացած արժեքի դեպքում անհավասարման լուծումների բազմությունը $(-\infty;\,4-a]$ միջակայքն է:
3. Ցանկացած $a>4$ դեպքում անհավասարումը չունի դրական լուծում:
4. Ցանկացած $a<2$ դեպքում 1-ը անհավասարման լուծում է:
5. $-4<a<-3$ դեպքում անհավասարման լուծումների բազմությունը պարունակում է ճիշտ յոթ բնական թիվ:
6. $(2;3]$ միջակայքի ցանկացած a-ի համար տրված անհավասարման լուծումների բազմությունը պարունակում է ճիշտ երկու բնական թիվ:

13. Տրված է $|x-1|\ge bx$ անհավասարումը (b-ն պարամետր է):

1. $b=0$ արժեքի դեպքում անհավասարման լուծումների բազմությունը $[1;\,+\infty)$ միջակայքն է:
2. $b=1$ արժեքի դեպքում անհավասարման լուծումների բազմությունը $(-\infty;\,0,5]$ միջակայքն է:
3. $b=-1$ արժեքի դեպքում անհավասարման լուծումների բազմությունը $[0;\,+\infty)$ միջակայքն է:
4. Գոյություն ունի b-ի միայն երկու արժեք, որի դեպքում անհավասարման լուծումների բազմությունն ամբողջ թվային ուղիղն է:
5. $(0;1)$ միջակայքի ցանկացած b արժեքի դեպքում անհավասարումը 1-ից մեծ լուծում չունի:
6. Ցանկացած $b>9$ դեպքում անհավասարումն ունի դրական լուծում:

www.atc.am

14. Տրված է a պարամետրով $\lg(ax)=2\lg(x+1)$ հավասարումը $(a\neq 0)$:

1. $a=4$ դեպքում հավասարումն ունի միակ արմատ:
2. Հավասարումն ունի երկու արմատ միայն $a>4$ դեպքում:
3. Հավասարումն ունի ամբողջ արմատ միայն $a=4$ դեպքում:
4. Ցանկացած $a<0$ դեպքում հավասարումն ունի ճիշտ երկու արմատ:
5. Եթե $a>5$, ապա հավասարման արմատները 1-ից մեծ թվեր են:
6. Եթե $a\in(1;\,3)$, ապա հավասարումն արմատ չունի:

15. Տրված է $ax^2-2ax+1\le 0$ անհավասարումը (a-ն պարամետր է):

1. $a>0$ դեպքում անհավասարումը համարժեք է $(x-1)^2\le 1-\frac{1}{a}$ անհավասարմանը:
2. $a=1$ դեպքում անհավասարումը լուծում չունի:
3. Եթե $a\in\left[0;\,\frac{1}{2}\right]$, դեպքում անհավասարումը լուծում չունի:
4. Ցանկացած $a>1$ դեպքում անհավասարման լուծումների բազմությունը $\left[\frac{a-\sqrt{a^2-a}}{a};\,\frac{a+\sqrt{a^2-a}}{a}\right]$ հատվածն է:
5. $a=-\frac{1}{3}$ դեպքում անհավասարման լուծումների բազմությունը $[-1;\,3]$ հատվածն է:
6. Եթե $a<0$, ապա $\left(-\infty;\,\frac{a-\sqrt{a^2-a}}{a}\right]$ միջակայքը պատկանում է անհավասարման լուծումների բազմությանը:

www.ato.am

16. Տրված է a պարամետրով $\sqrt{x-1}=ax$ հավասարումը:

1. $a=0$ դեպքում հավասարումն արմատ չունի:
2. $a=\frac{1}{2}$ դեպքում հավասարումն ունի միակ արմատ:
3. Եթե հավասարումն ունի երկու արմատ, ապա երկուսն էլ մեծ են 1-ից:
4. Եթե հավասարումն ունի երկու արմատ, ապա երկուսն էլ բնական թվեր են:
5. Գոյություն ունի a-ի այնպիսի ամբողջ արժեք, որի դեպքում հավասարումն ունի երկու արմատ:
6. a-ի ցանկացած բնական արժեքի դեպքում հավասարումն արմատ չունի:

17. Տրված է b պարամետրով $\sqrt{32-x^2}\le x-b$ անհավասարումը:

1. $b=0$ արժեքի դեպքում անհավասարման լուծումների բազմությունը $[4;+\infty)$ միջակայքն է:
2. $b=6$ արժեքի դեպքում անհավասարումը լուծում չունի:
3. $b=-8$ արժեքի դեպքում անհավասարման լուծումների բազմությունը $\left[-4\sqrt{2};\,4\sqrt{2}\right]$ միջակայքն է:
4. $b=-4\sqrt{2}$ արժեքի դեպքում տրված անհավասարմանը բավարարող վեց ամբողջ թիվ կա:
5. $b>4\sqrt{2}$ դեպքում անհավասարումը լուծում չունի:
6. Անհավասարումը լուծում ունի այն և միայն այն դեպքում, երբ $-8\le b\le 4\sqrt{2}$:

www.atc.am

18. Տրված է $\frac{\sqrt{a}}{x+1}>1$ անհավասարումը (a-ն պարամետր է):

1. $a=0$ դեպքում անհավասարման լուծումների բազմությունը $(0;\,1)$ միջակայքն է:
2. Ցանկացած դրական a-ի դեպքում անհավասարումը (-1)-ից փոքր լուծում չունի:
3. $a=4$ դեպքում անհավասարման լուծումների բազմությունը համաչափ է կոորդինատների սկզբնակետի նկատմամբ:
4. Եթե $a>0$, ապա անհավասարման լուծումների բազմությունը $\sqrt{a}$ երկարությամբ միջակայք է:
5. $a=10$ դեպքում անհավասարումն ունի ճիշտ չորս ամբողջ լուծում:
6. Գոյություն ունի a-ի ճիշտ մեկ ամբողջ արժեք, որի դեպքում 0,5-ը անհավասարման լուծում է, իսկ 1-ը՝ ոչ:

19. Ճի՞շտ են, թե՞ սխալ հետևյալ պնդումները:

1. $a<b$ պայմանին բավարարող կամայական a և b թվերի դեպքում $a^2<b^2$:
2. $a<b$ պայմանին բավարարող կամայական a և b դրական թվերի դեպքում $\frac{1}{a}<\frac{1}{b}$:
3. $a<b$ պայմանին բավարարող կամայական a և b թվերի դեպքում $a<\frac{a+b}{2}$:
4. Կամայական a թվի դեպքում, որը տարբեր է 0-ից և 1-ից, $a<a^2$:
5. Կամայական a և b թվերի դեպքում $|a+b|<|a|+|b|$:
6. Կամայական a և b բացասական թվերի դեպքում $\frac{a}{b}+\frac{b}{a}\ge 2$:

www.atc.am

20. Տրված է $x^4-2x^2+a-1=0$ հավասարումը:

1. $a=2$ դեպքում հավասարումն ունի ճիշտ մեկ արմատ:
2. Հավասարումն ունի ճիշտ երկու արմատ միայն $a<1$ դեպքում:
3. $a>2$ դեպքում հավասարումն արմատ չունի:
4. Գոյություն չունի a-ի այնպիսի արժեք, որի դեպքում հավասարումն ունենա երեք արմատ:
5. $1<a<2$ պայմանին բավարարող ցանկացած a-ի դեպքում հավասարումն ունի չորս արմատ:
6. Եթե հավասարումն ունենա արմատներ, ապա նրանց գումարը հավասար կլինի 0-ի:

21. Տրված է $\log_2\left(8-x^2\right)=a^2-2a$ հավասարումը (a-ն պարամետր է):

1. $a=\sqrt{10}$ արժեքի դեպքում հավասարումն արմատ չունի:
2. $a=3$ արժեքի դեպքում հավասարումն ունի ճիշտ մեկ արմատ:
3. Հավասարումը $\sqrt{7,5}$-ից մեծ արմատ չունի:
4. $-1<a<0$ պայմանին բավարարող ցանկացած a-ի դեպքում հավասարումն ունի ճիշտ երկու արմատ:
5. Գոյություն ունի a-ի միայն չորս ամբողջ արժեք, որոնցից յուրաքանչյուրի դեպքում հավասարումն արմատ ունի:
6. Գոյություն ունի a-ի ճիշտ երեք արժեք, որոնցից յուրաքանչյուրի դեպքում հավասարումն ունի ճիշտ մեկ արմատ:

22. Տրված է $\sqrt{100-x^2}=a-|x|$ հավասարումը (a-ն պարամետր է):

1. Հավասարման ԹԱՔ-ը պարունակում է ճիշտ քսան ամբողջ թիվ:
2. Գոյություն չունի a-ի այնպիսի արժեք, որի դեպքում հավասարումն ունենա ճիշտ երեք արմատ:
3. $a<10$ պայմանին բավարարող ցանկացած a-ի դեպքում հավասարումն արմատ չունի:
4. Գոյություն ունի a-ի միայն հինգ ամբողջ արժեք, որոնցից յուրաքանչյուրի դեպքում հավասարումն ունի չորս արմատ:
5. $10<a<10\sqrt{2}$ պայմանին բավարարող ցանկացած a-ի դեպքում հավասարումն արմատ ունի:
6. Հավասարումն ունի ճիշտ երկու արմատ a-ի միայն մեկ արժեքի դեպքում:

www.atc.am

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ա/Հ	Ենթաառաջադրանքի համարը					
	1	2	3	4	5	6
1	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է
2	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	սխալ է
3	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է
4	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է
5	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է
6	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է
7	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է
8	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է
9	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	սխալ է
10	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է
11	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է
12	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է
13	սխալ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	սխալ է	ճիշտ է
14	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	սխալ է	ճիշտ է
15	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է
16	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է
17	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է
18	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է
19	սխալ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	Ճիշտ է
20	սխալ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է
21	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է
22	սխալ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է

www.atc.am

ԲԱԺԻՆ 3. ՊՐՈԳՐԵՍԻԱՆԵՐ

1. Ճի՞շտ են, թե՞ սխալ հետևյալ պնդումները:

1. 8, 4, … երկրաչափական պրոգրեսիան չունի բացասական անդամ:
2. 227 թիվը 11, 15, … թվաբանական պրոգրեսիայի անդամ է:
3. 0, 3, 6, 9 թվերից որևէ երեքը կարող են լինել միևնույն երկրաչափական պրոգրեսիայի հաջորդական անդամներ:
4. 4, x, 16 հաջորդականությունը երկրաչափական պրոգրեսիա է միայն $x=8$ դեպքում:
5. –2, –8, –32, … հաջորդականությունը անվերջ նվազող երկրաչափական պրոգրեսիա է:
6. $\sin 1, \sin 2, \sin 3$ հաջորդականությունը թվաբանական պրոգրեսիա է:

2. Ճի՞շտ են, թե՞ սխալ հետևյալ պնդումները:

1. 16, 12, … թվաբանական պրոգրեսիան չունի բացասական անդամ:
2. 486 թիվը 6, 18, … երկրաչափական պրոգրեսիայի անդամ է:
3. 0, 5, 10, 15 թվերից ոչ մի երեքը չեն կարող լինել միևնույն երկրաչափական պրոգրեսիայի հաջորդական անդամներ:
4. 3, x, 27 հաջորդականությունը երկրաչափական պրոգրեսիա է միայն $x=9$ դեպքում:
5. –2, –6, –18, … հաջորդականությունը անվերջ նվազող երկրաչափական պրոգրեսիա է:
6. $\cos 2, \cos 4, \cos 6$ հաջորդականությունը թվաբանական պրոգրեսիա չէ:

www.atc.am

3. Ճի՞շտ են, թե՞ սխալ հետևյալ պնդումները:

1. Եթե (a_n) հաջորդականությունը թվաբանական պրոգրեսիա է, ապա կամայական c իրական թվի համար $(a_n + c)$ հաջորդականությունը նույնպես թվաբանական պրոգրեսիա է:
2. Եթե (a_n) և (b_n) հաջորդականությունները ցանկացած երկրաչափական պրոգրեսիաներ են, ապա $(a_n + b_n)$ հաջորդականությունը ևս երկրաչափական պրոգրեսիա է:
3. Եթե (a_n) և (b_n) հաջորդականությունները ցանկացած երկրաչափական պրոգրեսիաներ են, ապա $(a_n \cdot b_n)$ հաջորդականությունը ևս երկրաչափական պրոգրեսիա է:
4. Եթե դրական թվերի (a_n) հաջորդականությունը թվաբանական պրոգրեսիա է, ապա $\left(\sqrt{a_n}\right)$ հաջորդականությունը նույնպես թվաբանական պրոգրեսիա է:
5. Եթե (a_n) հաջորդականությունը երկրաչափական պրոգրեսիա է, ապա (a_n^2) հաջորդականությունը նույնպես երկրաչափական պրոգրեսիա է:
6. Եթե դրական թվերի (a_n) հաջորդականությունը երկրաչափական պրոգրեսիա է, ապա $(\log_2 a_n)$ հաջորդականությունը թվաբանական պրոգրեսիա է:

www.atc.am

4. Ճի՞շտ են, թե՞ սխալ հետևյալ պնդումները:

1. Եթե (a_n) հաջորդականությունը երկրաչափական պրոգրեսիա է, ապա զրոյից տարբեր կամայական c իրական թվի համար $(c \cdot a_n)$ հաջորդականությունը նույնպես երկրաչափական պրոգրեսիա է:
2. Եթե (a_n) և (b_n) հաջորդականությունները ցանկացած թվաբանական պրոգրեսիաներ են, ապա $(a_n + b_n)$ հաջորդականությունը երկրաչափական պրոգրեսիա է:
3. Եթե (a_n) և (b_n) հաջորդականությունները ցանկացած թվաբանական պրոգրեսիաներ են, ապա $(a_n \cdot b_n)$ հաջորդականությունը ևս թվաբանական պրոգրեսիա է:
4. Եթե դրական թվերի (a_n) հաջորդականությունը երկրաչափական պրոգրեսիա է, ապա $\left(\sqrt{a_n}\right)$ հաջորդականությունը նույնպես երկրաչափական պրոգրեսիա է:
5. Եթե (a_n) հաջորդականությունը երկրաչափական պրոգրեսիա է, ապա $\left(\frac{1}{a_n}\right)$ հաջորդականությունը նույնպես երկրաչափական պրոգրեսիա է:
6. Եթե (a_n) հաջորդականությունը թվաբանական պրոգրեսիա է, ապա $\left(2^{a_n}\right)$ հաջորդականությունը երկրաչափական պրոգրեսիա է:

www.atc.am

5. Ճի՞շտ են, թե՞ սխալ հետևյալ պնդումները:

1. Երկրաչափական պրոգրեսիան կարող է ունենալ զրոյի հավասար անդամ:
2. Գոյություն ունի հաջորդականություն, որը միաժամանակ և՛ թվաբանական, և՛ երկրաչափական պրոգրեսիա է:
3. 3, $\sqrt{7}$ և 9 կարող են լինել միևնույն թվաբանական պրոգրեսիայի անդամներ:
4. Գոյություն ունի այնպիսի (a_n) թվաբանական պրոգրեսիա, որ $a_1=3,\ a_5=8,\ a_6=10$:
5. Գոյություն ունի չորս անդամ ունեցող հաջորդականություն, որի առաջին երեք անդամները կազմում են թվաբանական պրոգրեսիա, իսկ վերջին երեք անդամները՝ երկրաչափական պրոգրեսիա:
6. Եթե եռանկյան կողմերը կազմում են երկրաչափական պրոգրեսիա, ապա նրա բարձրությունները ևս կազմում են երկրաչափական պրոգրեսիա:

6. Ճի՞շտ են, թե՞ սխալ հետևյալ պնդումները:

1. Երկրաչափական պրոգրեսիայի հայտարարը կարող է հավասար լինել զրոյի:
2. Եթե կամայական երկրաչափական պրոգրեսիայի որևէ երկու անդամներ հավասար են, ապա հավասար են նաև այդ պրոգրեսիայի բոլոր անդամները:
3. 4, $\sqrt{11}$ և 10 կարող են լինել միևնույն թվաբանական պրոգրեսիայի անդամներ:
4. Գոյություն ունի այնպիսի (a_n) թվաբանական պրոգրեսիա, որ $a_1=5,\ a_5=17,\ a_6=20$:
5. Գոյություն ունի չորս անդամ ունեցող հաջորդականություն, որի առաջին երեք անդամները կազմում են երկրաչափական պրոգրեսիա, իսկ վերջին երեք անդամները՝ թվաբանական պրոգ-րեսիա:
6. Եթե եռանկյան բարձրությունները կազմում են երկրաչափական պրոգրեսիա, ապա կողմերը ևս կազմում են երկրաչափական պրոգրեսիա:

www.atc.am

7. Հաջորդականությունը տրված է ընդհանուր անդամի՝ $a_n = \frac{n+1}{12}$ բանաձևով: Ճի՞շտ են, թե՞ սխալ հետևյալ պնդումները:

1. $\frac{2}{3}$ -ը (a_n) հաջորդականության անդամ է:
2. (a_n) հաջորդականությունը երկրաչափական պրոգրեսիա է:
3. (a_n) հաջորդականությունը պարունակում է 1-ից փոքր ճիշտ 11 անդամ:
4. (a_n) հաջորդականության առաջին քսանմեկ անդամների գումարը ամբողջ թիվ է:
5. (a_n) հաջորդականությունը պարունակում է բոլոր բնական թվերը:
6. $(12a_n)$ հաջորդականությունը պարունակում է բոլոր բնական թվերը:

8. Հաջորդականությունը տրված է ընդհանուր անդամի՝ $a_n = \frac{n+2}{12}$ բանաձևով: Ճի՞շտ են, թե՞ սխալ հետևյալ պնդումները:

1. $\frac{1}{6}$ -ը (a_n) հաջորդականության անդամ է:
2. (a_n) հաջորդականությունը թվաբանական պրոգրեսիա է:
3. (a_n) հաջորդականությունը պարունակում է 1-ից փոքր ճիշտ 10 անդամ:
4. (a_n) հաջորդականության առաջին քսանչորս անդամների գումարը ամբողջ թիվ է:
5. (a_n) հաջորդականությունը պարունակում է բոլոր բնական թվերը:
6. $(12a_n)$ հաջորդականությունը պարունակում է բոլոր կենտ բնական թվերը:

www.atc.am

9. Ճի՞շտ են, թե՞ սխալ հետևյալ պնդումները:

1. 2 և 3 թվերի միջև կարելի է գտնել երեք այնպիսի թվեր, որոնք այդ թվերի հետ միասին կազմեն երկրաչափական պրոգրեսիա:
2. Ընդհանուր անդամի $a_n = 3^n$ բանաձևով տրված հաջորդականությունը թվաբանական պրոգրեսիա է:
3. Ընդհանուր անդամի $a_n = \frac{1}{n}$ բանաձևով տրված հաջորդականությունը երկրաչափական պրոգրեսիա է:
4. Եթե $a_1, a_2, \ldots, a_n$ հաջորդականությունը թվաբանական պրոգրեսիա է, ապա $a_n, a_{n-1}, \ldots, a_1$ հաջորդականությունը նույնպես թվաբանական պրոգրեսիա է:
5. Ցանկացած (a_n) երկրաչափական պրոգրեսիայի համար ճիշտ է $a_{n+1} = \sqrt{a_n \cdot a_{n+2}}$ $(n = 1, 2, 3, \ldots)$ բանաձևը:
6. Եթե կամայական n բնական թվի համար (a_n) հաջորդականության անդամները բավարարում են $a_{n+1} = \frac{a_n + a_{n+2}}{2}$ պայմանին, ապա այդ հաջորդականությունը թվաբանական պրոգրեսիա է:

www.atc.am

10. Ճի՞շտ են, թե՞ սխալ հետևյալ պնդումները:

1. 2 և 3 թվերի միջև կարելի է գտնել երեք այնպիսի թվեր, որոնք այդ թվերի հետ միասին կազմեն թվաբանական պրոգրեսիա:
2. Ընդհանուր անդամի $a_n = 5^n$ բանաձևով տրված հաջորդականությունը թվաբանական պրոգրեսիա է:
3. Ընդհանուր անդամի $a_n = \frac{1}{n^2}$ բանաձևով տրված հաջորդականությունը երկրաչափական պրոգրեսիա է:
4. Եթե $a_1, a_2, ..., a_n$ հաջորդականությունը երկրաչափական պրոգրեսիա է, ապա $a_n, a_{n-1}, ..., a_1$ հաջորդականությունը նույնպես երկրաչափա-կան պրոգրեսիա է:
5. Ցանկացած (a_n) թվաբանական պրոգրեսիայի համար ճիշտ է $a_{n+1} = \frac{a_n + a_{n+2}}{2}$ $(n = 1, 2, ...)$ բանաձևը:
6. Եթե կամայական n բնական թվի համար (a_n) հաջորդականության անդամները բավարարում են $\frac{a_{n+1}}{a_n} = \frac{a_{n+2}}{a_{n+1}}$ պայմանին, ապա այդ հաջորդականությունը երկրաչափական պրոգրեսիա է:

www.atc.am

11. Ճի՞շտ են, թե՞ սխալ հետևյալ պնդումները:

1. Անվերջ անդամներով թվաբանական պրոգրեսիան կարող է պարունակել միայն մեկ ամբողջ թիվ:
2. Եթե (a_n)-ը երկրաչափական պրոգրեսիա է և $a_1 < 0,\ q > 1$, ապա (a_n)-ը աճող է:
3. Եթե հաջորդականության առաջին n անդամների գումարը ցանկացած n բնական թվի համար արտահայտվում է $S_n = 2n^2$ բանաձևով, ապա այդ հաջորդականությունը թվաբանական պրոգրեսիա է:
4. Եթե (a_n)-ը երկրաչափական պրոգրեսիա է և $n+m=k+l$, ապա $a_n \cdot a_m = a_k \cdot a_l$:
5. Եթե եռանկյան անկյունները կազմում են թվաբանական պրոգրեսիա, ապա այդ անկյուններից մեկը 60^0 է:
6. Եթե $ABCD$ քառանկյան A, B, D, C անկյունների հաջորդականությունը թվաբանական պրոգրեսիա է, ապա այդ քառանկյանը կարելի է արտագծել շրջանագիծ:

12. Ճի՞շտ են, թե՞ սխալ հետևյալ պնդումները:

1. Անվերջ անդամներով երկրաչափական պրոգրեսիան չի կարող պարունակել միայն մեկ ամբողջ թիվ:
2. Եթե (a_n)-ը երկրաչափական պրոգրեսիա է և $a_1 < 0,\ 0 < q < 1$, ապա (a_n)-ը աճող է:
3. Եթե հաջորդականության առաջին n անդամների գումարը ցանկացած n բնական թվի համար արտահայտվում է $S_n = 4n^2$ բանաձևով, ապա այդ հաջորդականությունը երկրաչափական պրոգրեսիա է:
4. Եթե (a_n)-ը թվաբանական պրոգրեսիա է և $n+m=k+l$, ապա $a_n + a_m = a_k + a_l$:
5. Եթե եռանկյան պարագիծը 24 է և կողմերը կազմում են թվաբանական պրոգրեսիա, ապա այդ կողմերից մեկը 8 է:
6. Եթե $ABCD$ քառանկյան A, B, C, D անկյունների հաջորդականությունը թվաբանական պրոգրեսիա է, ապա այդ քառանկյան AB և CD կողմերը զուգահեռ են:

www.atc.am

13. (a_n)-ը 5 տարբերությունով թվաբանական պրոգրեսիա է, իսկ (x_n)-ը՝ դրական անդամներով և 2 հայտարարով երկրաչափական պրոգրեսիա:

1. $b_n = a_{2n}$ հաջորդականությունը 10 տարբերությունով թվաբանական պրոգրեսիա է:
2. $c_n = \dfrac{a_n + 1}{2}$ հաջորդականությունը 3 տարբերությունով թվաբանական պրոգրեսիա է:
3. $y_n = x_{5n}$ հաջորդականությունը 10 հայտարարով երկրաչափական պրոգրեսիա է:
4. $z_n = x_n^3$ հաջորդականությունը 8 հայտարարով երկրաչափական պրոգրեսիա է:
5. $y_n = 2^{a_n}$ հաջորդականությունը 25 հայտարարով երկրաչափական պրոգրեսիա է:
6. $b_n = \log_4 x_n$ հաջորդականությունը $\dfrac{1}{2}$ տարբերությունով թվաբանական պրոգրեսիա է:

14. (a_n)-ը 4 տարբերությունով թվաբանական պրոգրեսիա է, իսկ (x_n)-ը՝ դրական անդամներով և 3 հայտարարով երկրաչափական պրոգրեսիա:

1. $b_n = a_{3n}$ հաջորդականությունը 7 տարբերությունով թվաբանական պրոգրեսիա է:
2. $c_n = \dfrac{a_n + 3}{2}$ հաջորդականությունը 2 տարբերությունով թվաբանական պրոգրեսիա է:
3. $y_n = x_{2n}$ հաջորդականությունը 9 հայտարարով երկրաչափական պրոգրեսիա է:
4. $z_n = x_n^2$ հաջորդականությունը 6 հայտարարով երկրաչափական պրոգրեսիա է:
5. $y_n = 3^{a_n}$ հաջորդականությունը 81 հայտարարով երկրաչափական պրոգրեսիա է:
6. $b_n = \log_6 x_n$ հաջորդականությունը $\dfrac{1}{2}$ տարբերությունով թվաբանական պրոգրեսիա է:

www.atc.am

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ա/Հ	Ենթաառաջադրանքի համարը					
	1	2	3	4	5	6
1	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	սխալ է	սխալ է
2	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է
3	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է
4	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է
5	սխալ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է
6	սխալ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է
7	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է
8	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է
9	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է
10	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է
11	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է
12	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է
13	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է
14	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է

www.atc.am

ԲԱԺԻՆ 4. ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐ

1. Տրված է $f(x)=-x^3+8$ ֆունկցիան:

1. Ֆունկցիայի որոշման տիրույթը համապատասխանում է 2 կետի նկատմամբ:
2. Ֆունկցիան փոքրագույն արժեքն ընդունում է $x=2$ կետում:
3. Ֆունկցիան սահմանափակ է:
4. $(-\infty;\,2]$ միջակայքում ֆունկցիան աճող է:
5. $f'(-2)<0$:
6. Ֆունկցիայի գրաֆիկի $x_0=\dfrac{\sqrt{3}}{3}$ աբսցիսան ունեցող կետում տարված շոշափողը զուգահեռ է $y=-x$ ուղղին:

2. Տրված է $f(x)=2-|x|$ ֆունկցիան:

1. Ֆունկցիայի որոշման տիրույթը $(-\infty;\,2]$ միջակայքն է:
2. $x=-2$ կետում ֆունկցիայի արժեքը դրական է:
3. f ֆունկցիան զույգ է:
4. f ֆունկցիան ունի մեծագույն արժեք:
5. f ֆունկցիայի գրաֆիկը և $y=x+3$ ուղիղը չեն հատվում:
6. f ֆունկցիայի գրաֆիկը $g(x)=\sqrt{x^2}-2$ ֆունկցիայի գրաֆիկի համապատասխանում է կոորդինատների սկզբնակետի նկատմամբ:

3. Տրված է $f(x)=|3-2x|$ ֆունկցիան:

1. f ֆունկցիան կենտ է:
2. f ֆունկցիայի գրաֆիկը համապատասխանում է $x=3$ ուղղի նկատմամբ:
3. $x=1{,}5$-ը ֆունկցիայի մինիմումի կետ է:
4. $[-2;2]$ միջակայքում f ֆունկցիայի մեծագույն արժեքը 7-ն է:
5. $0<a\le 2$ պայմանին բավարարող ցանկացած a-ի դեպքում $y=ax$ ուղիղը և f ֆունկցիայի գրաֆիկն ունեն ճիշտ երկու ընդհանուր կետ:
6. f ֆունկցիան սահմանափակ չէ:

www.atc.am

4. Տրված է $y=kx+b$ գծային ֆունկցիան, որի գրաֆիկն անցնում է $(-1;\,0)$ կետով:

1. f ֆունկցիան որոշված է ամբողջ թվային առանցքի վրա:
2. $y'=k$:
3. $k-b>0$:
4. $b\neq 0$ դեպում $y=-kx+b$ ֆունկցիայի գրաֆիկը համաչափ է տրված ֆունկցիայի գրաֆիկին՝ աբսցիսների առանցքի նկատմամբ:
5. $b>0$ դեպքում f ֆունկցիան նվազող է:
6. Երբ $b=0$, ապա f ֆունկցիան պարբերական է:

5. Տրված են $f(x)=\cos^2 x$ և $g(x)=x^2+1$ ֆունկցիաները:

1. g ֆունկցիան աճող է:
2. f ֆունկցիայի գրաֆիկը համաչափ է օրդինատների առանցքի նկատմամբ:
3. f և g ֆունկցիաների գրաֆիկներն ունեն ճիշտ մեկ ընդհանուր կետ:
4. f ֆունկցիայի հիմնական պարբերությունը 2π է:
5. f ֆունկցիան $\left[\frac{\pi}{2};\,\pi\right]$ միջակայքում նվազող է:
6. $y=g(f(x))$ ֆունկցիայի արժեքների տիրույթը $[1;2]$ միջակայքն է:

6. Տրված է $f(x)=3^{-x}+3^{x}$ ֆունկցիան:

1. f ֆունկցիայի որոշման տիրույթը ոչ բացասական թվերի բազմությունն է:
2. f-ը զույգ ֆունկցիա է:
3. f ֆունկցիայի գրաֆիկը հատում է աբսցիսների առանցքը:
4. f ֆունկցիայի գրաֆիկն օրդինատների առանցքը հատում է $(0;\,6)$ կետում:
5. f ֆունկցիայի արժեքների բազմությունը $[2;+\infty)$ միջակայքն է:
6. f ֆունկցիան մոնոտոն չէ:

www.atc.am

7. Տրված են $f(x)=0,4^x$ և $g(x)=\frac{2x+1}{3}$ ֆունկցիաները:

1. f ֆունկցիան աճող է:
2. g ֆունկցիան նվազող է:
3. $f(x)=g(x)$ հավասարումն ունի միակ արմատ:
4. $y=f(g(x))$ ֆունկցիան աճող է:
5. $f(x)=g(x)$ հավասարումն ունի դրական արմատ:
6. $f(x)\le g(x)$ անհավասարման լուծումների բազմությունը $[0;+\infty)$ միջակայքը չէ:

8. Տրված է $f(x)=1-3^x$ ֆունկցիան:

1. f ֆունկցիայի գրաֆիկը չի անցնում կոորդինատների սկզբնակետով:
2. $(-\infty;0)$ միջակայքում ֆունկցիան նվազող է:
3. f ֆունկցիայի արժեքների տիրույթը $(-\infty;1]$ միջակայքն է:
4. $g(x)=3^x-1$ և f ֆուկցիաների գրաֆիկները համաչափ են աբսցիսների առանցքի նկատմամբ:
5. $y=|f(x)|$ ֆունկցիան զույգ ֆունկցիա է:
6. $y=f$ ֆունկցիան վերևից սահմանափակ է:

9. Տրված է $f(x)=x^2-4x-5$ ֆունկցիան:

1. f ֆունկցիան վերևից սահմանափակ է:
2. $x=2$-ը f ֆունկցիայի կրիտիկական կետ է:
3. $(2;-9)$ կետում f ֆունկցիայի գրաֆիկին տարված շոշափողը զուգահեռ է Oy առանցքին:
4. Եթե $x\in(-\infty;5)\cup(5;+\infty)$, ապա $f(x)\ne 0$:
5. $y=f(x+2)$ ֆունկցիայի գրաֆիկը համաչափ է Oy առանցքի նկատմամբ:
6. $(-1;0)$ միջակայքում $g(x)=f(|x|)$ ֆունկցիան աճող է:

www.aic.am

10. Տրված է $f(x)=ax^2-2x+\ln 4$ ֆունկցիան:

1. Ցանկացած a-ի դեպքում $E(f)=R$:
2. Գոյություն ունի a-ի արժեք, որի դեպքում f ֆունկցիայի գրաֆիկը ուղիղ է:
3. $f'(x)=2ax-\frac{7}{4}$:
4. Եթե $a=0$, ապա f ֆունկցիան կրիտիկական կետ չունի:
5. Եթե $a<0$, ապա f ֆունկցիայի գրաֆիկը Ox առանցքը հատում է երկու կետում:
6. Եթե $a(a+2+\ln 4)<0$, ապա f ֆունկցիայի գրաֆիկը Ox առանցքը հատում է ճիշտ երկու կետում:

11. Տրված է $f(x)=x^2+4ax+a^2$ ֆունկցիան (a-ն պարամետր է):

1. a-ի ցանկացած արժեքի դեպքում f ֆունկցիայի գրաֆիկը աբսցիսների առանցքը հատում է երկու կետում:
2. $a=\frac{1}{2}$ դեպքում f ֆունկցիայի ածանցյալը $x=\frac{3}{2}$ կետում 5 է:
3. a-ի ցանկացած արժեքի դեպքում f ֆունկցիան ունի մինիմումի կետ:
4. a-ի դրական արժեքների դեպքում f ֆունկցիան $(-\infty;-5a]$ միջակայքում նվազող է:
5. Գոյություն ունի a-ի արժեք, որի դեպքում f ֆունկցիան ընդունում է միայն դրական արժեքներ:
6. Եթե f ֆունկցիայի գրաֆիկը անցնում է $(0;4)$ կետով և այն $[0;1]$ միջակայքում աճող է, ապա $a=-2$:

www.atc.am

12. Տրված են $f(x)=x+1$ և $g(x)=x^2+3x+2$ ֆունկցիաները:

1. f և g ֆունկցիաների գրաֆիկները հատվում են երեք կետում:
2. g ֆունկցիան $[0;+\infty)$ միջակայքում աճող է:
3. f ֆունկցիան ունի կրիտիկական կետ:
4. $x=-1{,}5$ ուղիղը g ֆունկցիայի համաչափության առանցքն է:
5. $y=g(|x|)$ ֆունկցիայի փոքրագույն արժեքը դրական է:
6. g ֆունկցիայի գրաֆիկի $(0;\,2)$ կետում տարված շոշափողը զուգահեռ է f ֆունկցիայի գրաֆիկին:

13. Տրված է $f(x)=1-2^{-\sqrt{x}}$ ֆունկցիան:

1. $f\left(\log_2^2 0{,}2\right)>4$:
2. f ֆունկցիայի գրաֆիկը $y=2^{-\sqrt{-x}}-1$ ֆունկցիայի գրաֆիկի համաչափն է կոորդինատների սկզբնակետի նկատմամբ:
3. f ֆունկցիան ընդունում է միայն դրական արժեքներ:
4. f-ը նվազող ֆունկցիա է:
5. f ֆունկցիան մեծագույն արժեք չունի:
6. f ֆունկցիայի գրաֆիկը չորրորդ քառորդին պատկանող կետեր չունի:

14. Տրված է $f(x)=\log_2|x|$ ֆունկցիան:

1. f ֆունկցիայի որոշման տիրույթն է՝ $(-\infty;\,0)\cup(0;+\infty)$:
2. f ֆունկցիան աճող է:
3. f ֆունկցիայի գրաֆիկը հատում է օրդինատների առանցքը:
4. f ֆունկցիան վերևից սահմանափակ է:
5. $f'(x)=\dfrac{1}{x\ln 2}$:
6. f ֆունկցիայի գրաֆիկը համաչափ է $x=0$ ուղղի նկատմամբ:

www.atc.am

15. Տրված է $f(x)=\log_2^2 x^2$ ֆունկցիան:

1. f ֆունկցիայի որոշման տիրույթը $(0;+\infty)$ միջակայքն է:
2. f ֆունկցիայի գրաֆիկն աբսցիսների առանցքը հատում է երկու կետում:
3. f ֆունկցիայի արժեքների տիրույթն է՝ $(-\infty;0)\cup(0;+\infty)$:
4. f ֆունկցիան $(0;1)$ միջակայքում աճող է:
5. f ֆունկցիան կարելի ներկայացնել $f(x)=4\log_2^2 x$ տեսքով:
6. Ox առանցքին զուգահեռ ցանկացած ուղիղ f ֆունկցիայի գրաֆիկը հատում է ոչ ավելի քան երկու կետում:

16. Տրված է $f(x)=\dfrac{\sqrt{4-x^2}}{x}$ ֆունկցիան:

1. f ֆունկցիայի որոշման տիրույթը $[-2;2]$ միջակայքն է:
2. f-ը զույգ ֆունկցիա է:
3. f ֆունկցիան 0 արժեք չի ընդունում:
4. $(0;2)$ միջակայքում ֆունկցիան նվազող է:
5. f ֆունկցիայի արժեքների տիրույթը R-ն է:
6. $y=f(x)$ և $g(x)=\sqrt{\dfrac{4-x^2}{x^2}}$ ֆունկցիաների արժեքների տիրույթները չեն համընկնում:

17. Տրված է $f(x)=\dfrac{1-x}{x+3}$ ֆունկցիան:

1. f ֆունկցիան զույգ է:
2. -3-ը պատկանում է f ֆունկցիայի արժեքների տիրույթին:
3. $x=-3$-ը f ֆունկցիայի կրիտիկական կետ է:
4. f ֆունկցիան նվազող է:
5. $(1;+\infty)$-ը f ֆունկցիայի նշանապահպանման միջակայք է:
6. $\dfrac{1}{3}$-ը $g(x)=f(|x|)$ ֆունկցիայի էքստրեմում է:

www.atc.am

18. Տրված է $f(x)=\big||x-2|-a\big|$ ֆունկցիան, որտեղ $a>0$:

1. $f(2-a)>0$:
2. f ֆունկցիան աճող է միայն $[2+a;+\infty)$ միջակայքում:
3. $f(2-x)=f(2+x)$, x-ի կամայական արժեքի դեպքում:
4. f ֆունկցիայի էքստրեմումների քանակը հավասար է նրա կրիտիկական կետերի քանակին:
5. Գոյություն ունեն x-ի երեք արժեք, որոնց դեպքում ֆունկցիայի արժեքը հավասար է a-ի:
6. f ֆունկցիայի ածանցյալը $x=a+2$ կետում հավասար է 0-ի:

19. Տրված է $f(x)=|\cos x|-\cos^2 x$ ֆունկցիան:

1. f ֆունկցիան զույգ է:
2. f ֆունկցիան 2π-պարբերական է:
3. f ֆունկցիան փոքրագույն արժեք չունի:
4. f ֆունկցիան ընդունում է միայն ոչ դրական արժեքներ:
5. f ֆունկցիայի գրաֆիկն աբսցիսների առանցքի $[0;2\pi]$ հատվածը հատում է ճիշտ հինգ կետում:
6. f ֆունկցիան $\left[\frac{3\pi}{4};\frac{5\pi}{3}\right)$ միջակայքում ունի ճիշտ երեք էքստրեմումի կետ:

20. Տրված է $f(x)=\sin(\cos x)$ ֆունկցիան:

1. f ֆունկցիայի որոշման տիրույթը $[-1;1]$ միջակայքն է:
2. f ֆունկցիայի արժեքների տիրույթը $[-1;1]$ միջակայքն է:
3. f ֆունկցիայի գրաֆիկն աբսցիսների առանցքը հատում է միայն $\frac{\pi}{2}+\pi k,\ k\in Z$ կետերում:
4. f ֆունկցիան զույգ է:
5. f ֆունկցիան π պարբերական է:
6. $\left[\frac{\pi}{2};\pi\right]$ միջակայքում f ֆունկցիան աճող է:

www.atc.am

21. Տրված են $f(x)=4^{2|x|+1}$ և $g(x)=\cos(\pi x)+3$ ֆունկցիաները:

1. f ֆունկցիան զույգ է:
2. g ֆունկցիան կենտ է:
3. 5-ը g ֆունկցիայի պարբերություն է:
4. $E(f)=[4;+\infty)$:
5. $f(x)<g(x)$ անհավասարումը լուծում չունի:
6. f և g ֆունկցիաների գրաֆիկները ընդհանուր կետ չունեն:

22. Տրված են $f(x)=\sqrt{9-x^2}$ և $g(x)=\sin^2 x+3$ ֆունկցիաները:

1. f ֆունկցիայի արժեքների բազմությունը $[0;3]$ միջակայքն է:
2. g-ն կենտ ֆունկցիա է:
3. $D(g\circ f)=R$:
4. 3π-ն g-ի պարբերություն է:
5. f և g ֆունկցիաների գրաֆիկներն ունեն մեկից ավելի ընդհանուր կետեր:
6. $f(x)\le g(x)$ անհավասարման լուծումը $[-3;3]$ միջակայքն է:


23. Տրված են $f(x)=\sin|x|$ և $g(x)=|\sin x|$ ֆունկցիաները:

1. g-ն կենտ ֆունկցիա է:
2. f-ը պարբերական ֆունկցիա է π հիմնական պարբերությամբ:
3. g-ն պարբերական ֆունկցիա է:
4. f ֆունկցիայի արժեքների տիրույթը $[-1;1]$ միջակայքն է:
5. $F(x)=f(x)+g(x)$ ֆունկցիայի արժեքների բազմությունը $[0;2]$ միջակայքն է:
6. $[\pi;4\pi]$ միջակայքում f և g ֆունկցիաների գրաֆիկներն ունեն ճիշտ չորս հատման կետ:

www.atc.am

24. Տրված է $D(f)=[-5;\,5]$ որոշման տիրույթով f ֆունկցիայի գրաֆիկը:


1. $E(f)=[-3;\,5]$:
2. $[-5;\,-4)$ միջակայքում f ֆունկցիան ընդունում է դրական արժեքներ:
3. $x=5$-ը ֆունկցիայի մինիմումի կետ է:
4. f ֆունկցիան 1 արժեքն ընդունում է երեք կետում:
5. $f\big(f(2,5)\big)>0$:
6. $h(x)=f\big(|x|\big)$ ֆունկցիան աբսցիսների առանցքի հետ ունի երկու ընդհանուր կետ:



www.atc.am

25. Տրված է f ֆունկցիայի ածանցյալի՝ $y=f'(x)$-ի գրաֆիկը $[-5;\,4]$ միջակայքում:

1. $f'(3)=0$:
2. f ֆունկցիայի գրաֆիկի $x=-4$ աբսցիսն ունեցող կետում տարված շոշափողը կարող է համընկնել աբսցիսների առանցքի հետ:
3. $[3;\,4]$ հատվածում f ֆունկցիան աճող է:
4. $x=-2$-ը f ֆունկցիայի մինիմումի կետ է:
5. $[-3;4]$ հատվածում f ֆունկցիան իր փոքրագույն արժեքն ընդունում է $x=1$ կետում:
6. $x=-4$-ը f ֆունկցիայի մաքսիմումի կետ է:



www.atc.am

26. Տրված է $f(x)=\begin{cases}-\frac{1}{2}x-1;\ x\in[-2;\ 0)\\ a(x-1);\ x\in[0;\ 2]\end{cases}$ **ֆունկցիան**

(a-ն պարամետր է)**:**

1. $f(1)=0$:
2. f ֆունկցիայի որոշման տիրույթը պարունակում է չորս ամբողջ թիվ:
3. Եթե $a=5$, ապա f ֆունկցիայի արժեքների բազմությունը $[-5;\ 5]$ միջակայքն է:
4. Գոյություն ունի a-ի այնպիսի արժեք, որի դեպքում f ֆունկցիան կենտ է:
5. Գոյություն չունի a-ի այնպիսի արժեք, որի դեպքում f ֆունկցիան նվազող է:
6. Գոյություն ունեն a և b թվեր, որոնց դեպքում $f(x)=b$ հավասարումն ունի անթիվ բազմությամբ արմատներ:

27. Կատարել առաջադրանքը.

1. $x=0$ կետում որոշված ցանկացած կենտ ֆունկցիայի գրաֆիկն անցնում է կոորդինատների սկզբնակետով:
2. $(-5;\ +\infty)$ որոշման տիրույթով պարբերական ֆունկցիա գոյություն չունի:
3. Եթե f ֆունկցիայի գրաֆիկը համաչափ է և՛ կոորդինատների սկզբնակետի, և՛ օրդինատների առանցքի նկատմամբ, ապա $f(x)=0$:
4. Եթե $y=f(x)$ ֆունկցիայի որոշման տիրույթը $(-2;6]$ միջակայքն է, ապա $y=f\left(\frac{x}{2}\right)$ ֆունկցիայի որոշման տիրույթը $(-4;\ 12]$ միջակայքն է:
5. Ցանկացած ֆունկցիայի բոլոր կրիտիկական կետերը նաև էքստրեմումի կետեր են:
6. f-ը 1 պարբերական ֆունկցիա է և $f(x)=|x|$, երբ $x\in\left[-\frac{1}{2};\ \frac{1}{2}\right]$: Այդ դեպքում $f(\pi)=4-\pi$:

www.atc.am

28. Տրված է $f(x)=\sqrt{4-\frac{1}{x^2}}$ ֆունկցիան:

1. $\pm\frac{1}{2}$ թվերը ֆունկցիայի որոշման տիրույթի կետեր են:
2. Ֆունկցիայի մեծագույն արժեքը 2-ն է:
3. Ֆունկցիան զույգ է:
4. $(1;+\infty)$ միջակայքում ֆունկցիան աճող է :
5. Ֆունկցիան էքստրեմումի կետ չունի:
6. $y=f\left(\frac{1}{x}\right)$ ֆունկցիայի արժեքների տիրույթը $[0;\,2]$ միջակայքն է:

29. Տրված են $f(x)=\cos\pi x-1$ և $g(x)=\sqrt{16-x^2}$ ֆունկցիաները:

1. f ֆունկցիայի հիմնական պարբերությունը հավասար է 2π :
2. g ֆունկցիայի գրաֆիկի բոլոր կետերը $(0;\,0)$ կետից ունեն միևնույն հեռավորությունը:
3. f և g ֆունկցիաների գրաֆիկները հատվում են ճիշտ երկու կետում:
4. $g+f$ ֆունկցիան $[0;\,1]$ միջակայքում նվազող է:
5. $g\circ f$ ֆունկցիայի որոշման տիրույթը $[-4;\,4]$ միջակայքն է:
6. $f\circ g$ ֆունկցիայի գրաֆիկն աբսցիսների առանցքը հատում է ճիշտ չորս կետում:

30. f -ը ամբողջ թվային առանցքի վրա որոշված ֆունկցիա է, ընդ որում՝ x -ի ցանկացած արժեքի դեպքում $f(x)>x$:

1. f ֆունկցիան աճող է:
2. Կամայական x-ի դեպքում՝ $f(f(x))>x$:
3. Գոյություն ունի տրված պայմաններին բավարարող f ֆունկցիա, որը սահմանափակ է ներքևից:
4. Գոյություն ունի տրված պայմաններին բավարարող ֆունկցիա, որը սահմանափակ է վերևից:
5. Տրված պայմաններին բավարարող կենտ ֆունկցիա գոյություն չունի:
6. Գոյություն ունի տրված պայմաններին բավարարող պարբերական ֆունկցիա:

www.atc.am

31. Տրված է $f(x)=\sqrt{18-x^2}-|x|$ ֆունկցիան:


1. f -ը զույգ ֆունկցիա է:
2. f ֆունկցիայի մեծագույն արժեքը փոքր է 4-ից:
3. f ֆունկցիայի որոշման և արժեքների տիրույթները համընկնում են:
4. Գոյություն ունի 6 երկարությամբ միջակայք, որտեղ f ֆունկցիան ընդունում է միայն ոչ բացասական արժեքներ:
5. f ֆունկցիան $[-2;\ 1]$ միջակայքում աճող է:
6. Գոյություն ունի f ֆունկցիայի գրաֆիկի այնպիսի շոշափող, որն աբսցիսների առանցքի հետ կազմում է 40^0 անկյուն:

32. Տրված է $f(x)=\sqrt{12-x^2}-|x|$ ֆունկցիան:

1. f -ը կենտ ֆունկցիա է:
2. f ֆունկցիայի մեծագույն արժեքը մեծ է 3-ից:
3. f ֆունկցիայի որոշման և արժեքների տիրույթները չեն համընկնում:
4. Գոյություն ունի 5 երկարությամբ միջակայք, որտեղ f ֆունկցիան ընդունում է միայն ոչ բացասական արժեքներ:
5. f ֆունկցիան $[-1;\ 2]$ միջակայքում նվազող է:
6. Գոյություն չունի f ֆունկցիայի գրաֆիկի այնպիսի շոշափող, որն աբսցիսների առանցքի հետ կազմի 140^0 անկյուն:

www.atc.am


33. Ստորև պատկերված հատվածը $[0;\ 6]$ որոշման տիրույթով և $[-1;\ 2]$ արժեքների տիրույթով f ֆունկցիայի գրաֆիկն է.



1. f ֆունկցիան ընդունում է բացասական արժեքներ $(4;6]$ միջակայքում:
2. f ֆունկցիայի գրաֆիկն աբսցիսների առանցքի հետ կազմում է 150^0 անկյուն:
3. f ֆունկցիան կարելի է ներկայացնել $f(x)=-\frac{1}{2}x+2,\ x\in[0;\ 6]$ բանաձևով:
4. $f\circ f$ ֆունկցիան նվազող է:
5. $f\circ f$ ֆունկցիայի որոշման տիրույթը $[0;\ 4]$ միջակայքն է:
6. $f\circ f$ ֆունկցիայի արժեքների տիրույթը $[0;\ 2]$ միջակայքն է:

www.atc.am

34. Ստորև պատկերված հատվածը $[-5;\ 0]$ որոշման տիրույթով և $[-2;\ 3]$ արժեքների տիրույթով f ֆունկցիայի գրաֆիկն է.



1. f ֆունկցիան ընդունում է բացասական արժեքներ միայն $(-5:-3)$ միջակայքի կետերում:
2. f ֆունկցիայի գրաֆիկն աբսցիսների առանցքի հետ կազմում է 45^0 անկյուն:
3. f ֆունկցիան կարելի է ներկայացնել $f(x)=-x+3$, $x\in[-5;\ 0]$ բանաձևով:
4. $f\circ f$ ֆունկցիան աճող է:
5. $f\circ f$ ֆունկցիայի որոշման տիրույթը $[-3;\ 0]$ միջակայքն է:
6. $f\circ f$ ֆունկցիայի արժեքների տիրույթը $[1;3]$ միջակայքն է:

35. Տրված է $f(x)=\sqrt[3]{x^2}$ ֆունկցիան:

1. $D(f)=R$
2. $f'(x)=\dfrac{2}{3}x^{-\frac{1}{3}}$
3. $f'(x)=0$ հավասարումն արմատ չունի:
4. f ֆունկցիան կրիտիկական կետ չունի:
5. f ֆունկցիան ոչ զույգ է, ոչ էլ՝ կենտ:
6. $y=f(\sin x)$ ֆունկցիան π-պարբերական է:

www.afc.am

36. Տրված է $f(x)=\sqrt[3]{x}$ ֆունկցիան:

1. $D(f)=[0;+\infty)$
2. $f'(x)=\frac{1}{3}x^{-\frac{2}{3}}$
3. $f'(x)=0$ հավասարումն արմատ չունի:
4. f ֆունկցիան կրիտիկական կետ չունի:
5. f ֆունկցիայի գրաֆիկը համաչափ է կոորդինատների սկզբնակետի նկատմամբ:
6. $y=f(\cos^2 x)$ ֆունկցիան 2π -պարբերական է:

37. Տրված է $f(x)=|x-3|+|x+3|$ ֆունկցիան:

1. $D(f)=R$:
2. f -ը զույգ ֆունկցիա է:
3. 0-ն f ֆունկցիայի էքստրեմումի կետ է:
4. f և $y=|x|$ ֆունկցիայի գրաֆիկները ընդհանուր կետեր չունեն:
5. f ֆունկցիայի ածանցյալը –6 կետում գոյություն չունի:
6. $\frac{\pi}{2}$-ը $y=f(\sin x)$ ֆունկցիայի պարբերություն է:

www.atc.am

38. Տրված է $f(x)=\begin{cases}-\frac{1}{2}x-1;\ x\in[-2;\ 0)\\ ax-1;\ x\in[0;\ 2]\end{cases}$ **ֆունկցիան** (a պարամետր է)**:**

1. $f(1)=a-1$:
2. Ֆունկցիայի որոշման տիրույթը 4 երկարությամբ միջակայք է:
3. Եթե $a=5$, ապա ֆունկցիայի արժեքների բազմությունը պարունակում է ճիշտ 10 ամբողջ թիվ:
4. Գոյություն չունի a-ի այնպիսի արժեք, որի դեպքում ֆունկցիան լինի զույգ:
5. Գոյություն ունի a-ի միակ արժեք, որի դեպքում ֆունկցիան նվազող է:
6. Գոյություն ունեն a և b թվեր, որոնց դեպքում $f(x)=b$ հավասարումն ունի անթիվ բազմությամբ արմատներ:

39. Տրված է $f(x)=\dfrac{x-1}{\sqrt{x}-1}$ **ֆունկցիան:**

1. $D(f)=[0;+\infty)$
2. Ֆունկցիան աճող է:
3. $E(f)=[1;+\infty)$:
4. f ֆունկցիայի գրաֆիկը $g(x)=\cos x$ ֆունկցիայի գրաֆիկի հետ ունի ճիշտ մեկ ընդհանուր կետ:
5. $(1;+\infty)$ միջակայքի յուրաքանչյուր կետում ֆունկցիայի գրաֆիկին տարված շոշափողը Ox առանցքի հետ կազմում է 30^0-ից փոքր անկյուն:
6. Ցանկացած դրական a թվի դեպքում $g(x)=ax^2$ և $y=f(x)$ ֆունկցիաներն ունեն ճիշտ մեկ ընդհանուր կետ:

www.atc.am

40. Տրված է $f(x)=x|x|$ ֆունկցիան:

1. $D(f)=[0;+\infty)$:
2. f ֆունկցիայի գրաֆիկը համաչափ է կոորդինատների սկզբնակետի նկատմամբ:
3. f ֆունկցիան աճող է:
4. f ֆունկցիայի գրաֆիկը $g(x)=ctgx$ ֆունկցիայի գրաֆիկի հետ ունի առնվազն չորս հատման կետ:
5. Կամայական x-ի դեպքում $f'(x)=2|x|$:
6. f ֆունկցիայի գրաֆիկի ցանկացած աբսցիսով կետում տարված շոշափողը f ֆունկցիայի գրաֆիկի հետ ունի երկու ընդհանուր կետ:

www.atc.am

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ա/Հ	Ենթաառաջադրանքի համարը					
	1	2	3	4	5	6
1	ճիշտ է	սխալ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է
2	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է
3	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է
4	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	սխալ է	ճիշտ է
5	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է
6	սխալ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է
7	սխալ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է
8	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է
9	սխալ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է
10	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է
11	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է
12	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է
13	սխալ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է
14	ճիշտ է	սխալ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է
15	սխալ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	սխալ է	սխալ է
16	սխալ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է
17	սխալ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է
18	սխալ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է
19	ճիշտ է	սխալ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է
20	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է
21	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է
22	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է
23	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է
24	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է
25	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է
26	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է
27	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է
28	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է
29	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է
30	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է
31	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է
32	սխալ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	սխալ է	ճիշտ է
33	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է
34	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է
35	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է
36	սխալ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է
37	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է
38	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	սխալ է	ճիշտ է
39	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է
40	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է

www.aic.am

ԲԱԺԻՆ 5. ՀԱՐԹԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ

1. **ABC սուրանկյուն եռանկյան AC կողմի վրա վերցված D կետից տարված են եռանկյան մյուս երկու կողմերին զուգահեռ ուղիղներ, որոնք AB և BC կողմերը հատում են համապատասխանաբար E և F կետերում: Հայտնի է, որ $S_{AED}=S_1$, $S_{DFC}=S_2$ և $S_1\neq S_2$:**

1. AED եռանկյունը նման է BED եռանկյանը:
2. AED եռանկյունը նման է DFC եռանկյանը:
3. $AD:DC=S_1:S_2$:
4. $DEBF$ քառանկյան մակերեսը հավասար է S_1+S_2:
5. BDF եռանկյան մակերեսը հավասար է $\sqrt{S_1\cdot S_2}$:
6. ABC եռանկյան մակերեսը հավասար է $\left(\sqrt{S_1}+\sqrt{S_2}\right)^2$:

2. **ABC կանոնավոր եռանկյանը ներգծած ուղղանկյուններից ամենամեծ մակերեսն ունի $KLMN$-ը, որտեղ $K,\ N\in AC$, $L\in AB$, $M\in BC$:**

1. $AK:AC=1:4$:
2. $AL=LB$:
3. $\angle MKN=30^0$:
4. ABC եռանկյան մակերեսը երկու անգամ մեծ է BML եռանկյան մակերեսից:
5. ABC եռանկյան մակերեսը երկու անգամ մեծ է $KLMN$ քառանկյան մակերեսից:
6. $S_{KLMN}=AK\cdot AM$:

www.atc.am

3. ABC **եռանկյան մեջ** $AB=13$ **սմ,** $BC=14$ **սմ,** $CA=15$ **սմ: Այդ եռանկյանը ներգծած** O **կենտրոնով շրջանագիծը** AB, BC **և** CA **կողմերը շոշափում է համապատասխանաբար** K, L **և** M **կետերում:**

1. ABC եռանկյան մակերեսը 84 սմ^2 է:
2. $AM=AK=7$ սմ:
3. $BKOL$ քառանկյանը կարելի է արտագծել շրջանագիծ:
4. $CO=9$ սմ:
5. $\angle KOL=\arcsin\frac{12}{13}$:
6. CML եռանկյան մակերեսը 8 անգամ մեծ է LOM եռանկյան մակերեսից:

4. $ABCD$ **զուգահեռագծի մեջ վերցված** O **կետից տարված են զուգահեռագծի կողմերին զուգահեռ ուղիղներ, որոնք** AB, BC, CD **և** DA **կողմերը հատում են հանապատասխանաբար** E, N, F **և** M **կետերում: Հայտնի է, որ** $S_{AEOM}=4$ **սմ^2,** $S_{FOMD}=9$ **սմ^2,** $S_{EONB}=12$ **սմ^2:**

1. $AM:MD=2:3$:
2. $OM:ON=1:3$:
3. AO-ն զուգահեռ է EN-ին:
4. $FONC$ քառանկյան մակերեսը 27 սմ^2 է:
5. $S_{AOF}:S_{COE}=3:4$:
6. $S_{AEOM}\cdot S_{ONCF}=S_{EONB}\cdot S_{FOMD}$:

www.atc.am

5. $ABCD$ սեղանի անկյունագծերի հատման O կետով տարված է հիմքերին զուգահեռ ուղիղ, որը AB սրունքը հատում է K կետում, իսկ CD սրունքը՝ L կետում:

1. $KL = \dfrac{AD + BC}{2}$:
2. AOK և ACB եռանկյունները նման են:
3. $KO = OL$:
4. $S_{ABCD} > \dfrac{AC \cdot BD}{2}$:
5. $\dfrac{S_{AOD}}{S_{BOC}} = \dfrac{AD^2}{BC^2}$:
6. AOB և COD եռանկյունների մակերեսները հավասար են:

6. Անհավասար կողմերով ABC եռանկյանը ներգծված է O կենտրոնով շրջանագիծ, որը AB, BC և AC կողմերը շոշափում է համապատասխանաբար K, L և M կետերում:

1. KL-ը զուգահեռ է AC-ին:
2. $BK + BL = BC + AB - AC$:
3. $\angle KML = 90^0 - \dfrac{\angle ABC}{2}$:
4. BM և KL ուղիղները փոխուղղահայաց են:
5. $BKOL$ քառանկյան մակերեսը հավասար է $\dfrac{1}{2} BO \cdot KL$:
6. $BKML$ քառանկյան մակերեսը հավասար է $\dfrac{1}{2} BM \cdot KL$:

www.atc.am

7. ABC **հավասարասրուն** $(AB = BC)$ **ուղղանկյուն եռանկյան** BC **էջի վրա վերցված է** M **կետն այնպես, որ** $BM : MC = 1 : \sqrt{2}$ **: Այդ կետից ներքնաձիգին տարված ուղղահայացի հիմքը** K **կետն է:**

1. $\angle BMK = 120^0$:
2. $BM = KC$:
3. ABC և MKC եռանկյունները նման են:
4. $ABMK$ քառանկյանը կարելի է ներգծել շրջանագիծ:
5. $MK^2 = AK \cdot KC$:
6. $\angle BKM = \angle BAM$:

8. ABC **հավասարասրուն եռանկյանն արտագծած շրջանագծի շառավիղը հավասար է եռանկյան սրունքին:** BC **ուղղի վրա** AC **հիմքի պրոյեկցիան** CD**-ն է, իսկ** AK**-ն** AD**-ի պրոյեկցիան է** AC **հիմքի վրա:**

1. $\angle ABC = 60^0$:
2. $AC = 2 \cdot AD$:
3. $DK^2 = AK \cdot KC$:
4. $KC = 3 \cdot AK$:
5. $ADBK$ քառանկյանը կարելի է արտագծել շրջանագիծ:
6. ABK և ABC եռանկյունները նման են:

9. ABC **հավասարասրուն եռանկյանը ներգծած** O **կենտրոնով շրջանագծին տարված է** AC **հիմքին զուգահեռ շոշափող, որը** AB **և** BC **սրունքները հատում է համապատասխանաբար** M **և** N **կետերում և կիսում է եռանկյան** BD **բարձրությունը:**

1. $AC = 2 \cdot MN$:
2. $\angle AOM = 90^0$:
3. $AN = MC$:
4. $OD \cdot BC = OB \cdot DC$:
5. AO ուղիղն ուղղահայաց է BC ուղղին:
6. BOM եռանկյան մակերեսը փոքր է AOM եռանկյան մակերեսից:

www.atc.am

10. Անհավասար էջերով ABC ուղղանկյուն եռանկյան $\left(C = 90^0\right)$ A անկյան կիսորդը BC էջը հատում է K կետում: B գագաթից AK ուղղին տարված ուղղահայացի հիմքը E կետն է:

1. $CK = KB$:
2. $CK \cdot AB = KB \cdot AC$:
3. BEA և KCA եռանկյունները նման են:
4. Ցանկացած դեպքում BEK և ACK եռանկյունների մակերեսները հավասար են:
5. $CK \cdot KB = AK \cdot KE$:
6. $CE = AB \cdot \sin\dfrac{\angle BAC}{2}$:

11. Անհավասար էջերով ABC ուղղանկյուն եռանկյան AB ներքնաձիգի M միջնակետով նրան տարված ուղղահայաց ուղիղը եռանկյանն արտագծած շրջանագիծը հատում է K կետում, իսկ CK ուղիղը AB ներքնաձիգը հատում է E կետում:

1. $AE = EB$:
2. $\angle ABK > 45^0$:
3. $AK > KB$:
4. $CE \cdot EK = AE \cdot EB$:
5. $AC \cdot BE = AE \cdot CB$:
6. $OK = KB$, որտեղ O-ն ABC եռանկյանը ներգծած շրջանագծի կենտրոնն է:

12. ABC հավասարասրուն $\left(AB = BC,\ AB < AC\right)$ եռանկյանը ներգծած զուգահեռագծերից ամենամեծ մակերեսն ունի $ALMN$-ը, որտեղ $L \in AB$, $M \in BC$, $N \in AC$:

1. $AL = LB$:
2. $AN > NC$:
3. $\angle AMC > 90^0$:
4. $ALMC$ քառանկյան մակերեսը երեք անգամ մեծ է BML եռանկյան մակերեսից:
5. AM և LN ուղիղները ուղղահայաց են:
6. $ALMC$ քառանկյան պարագիծը հավասար է $NLBC$ քառանկյան պարագծին:

www.atc.am

13. O կենտրոնով շրջանագիծը, որի տրամագիծը ABC հավասարասրուն եռանկյան հիմքին տարված BD բարձրությունն է, AB և BC սրունքները հատում է համապատասխանաբար E և F կետերում:

1. $EF \parallel AC$:
2. $\Delta AFB = \Delta CEB$:
3. $AEFC$ քառանկյանը կարելի է ներգծել շրջանագիծ:
4. $\angle DEB > 90^0$:
5. $BEDF$ քառանկյանը հնարավոր է ներգծել շրջանագիծ:
6. $AE \cdot BE < DE^2$:

14. O կենտրոնով շրջանագիծը, որի տրամագիծը ABC կանոնավոր եռանկյան BD բարձրությունն է, հատում է AB և BC կողմերը համապատասխանաբար E և F կետերում, իսկ EF-ը BD-ն հատում է K կետում:

1. $\angle BAO = \angle CAO$:
2. $\angle EOB = 120^0$:
3. $AE \cdot EB = ED^2$:
4. $AD = DE$:
5. $S_{ABC} = 4 \cdot S_{AEFC}$:
6. $BD = 4 \cdot KD$:

15. $ABCD$ շեղանկյան AC և BD անկյունագծերը հարաբերում են ինչպես 4 :3: Շեղանկյանը ներգծած O կենտրոնով շրջանագծին նրա K կետում տարված շոշափողը BC և CD կողմերը հատում է համապատասխանաբար M և N կետերում և զուգահեռ է BD անկյունագծին:

1. $\angle ABD = \angle CBD$:
2. MN-ն ուղղահայաց է AC-ին:
3. $BN > MD$:
4. $ON = CN$:
5. BCD եռանկյան մակերեսը չորս անգամ մեծ է MCN եռանկյան մակերեսից:
6. $MN = OK$:

www.atc.am

16. $ABCD$ զուգահեռագծի մակերեսը 24 է, $AB:BC=3:4$, իսկ B գագաթից AD կողմին տարված BH բարձրությունը՝ 3: BC կողմի վրա վերցված է E կետն այնպես, որ $BE=3\cdot EC$: BH-ը և AE-ն հատվում են K կետում:

1. AE-ն զուգահեռ է DC-ին:
2. AE-ն BAD անկյան կիսորդն է:
3. AB կողմի երկարությունը 6 է:
4. $AECD$ քառանկյան մակերեսը 15 է:
5. DE-ն ուղղահայաց է BC-ին:
6. $AK^2=4\cdot AH\cdot KH$:

17. O կենտրոնով շրջանագծին ներգծած $ABCD$ սեղանի B անկյունը չորս անգամ մեծ է A անկյունից, ընդ որում $BC=CD$, իսկ OB-ն AD հիմքը հատում է E կետում:

1. $\angle ABC=144^0$:
2. B և D կետերը հավասարահեռ են AC-ից:
3. AD-ն տրամագիծ է:
4. OB-ն ուղղահայաց է AC-ին:
5. ΔAOC-ն հավասարակողմ է:
6. $AE=AB$:

18. $ABCD$ ուղղանկյուն սեղանին ներգծած O կենտրոնով շրջանագիծը նրա CD մեծ սրունքը շոշափման E կետով բաժանում է 9 և 16 երկարությամբ մասերի՝ հաշված C գագաթից:

1. $\angle OCD+\angle ODC=90^0$:
2. Սեղանի բարձրության երկարությունը24 է:
3. O-ն հավասարահեռ է B և D գագաթներից:
4. $ABCD$ սեղանին կարելի է նաև արտագծել շրջանագիծ:
5. Սեղանի մեծ հիմքը 7-ով մեծ է փոքր հիմքից:
6. $ABCD$ սեղանի մակերեսը երեք անգամ մեծ է ABC եռանկյան մակերեսից:

www.atc.am

19. $ABCD$ **շեղանկյան կողմի երկարությունը** a **է, իսկ** $\angle A = 60^0$ **:**

1. $\overrightarrow{AB} + \overrightarrow{AD} = \sqrt{3} \cdot \overrightarrow{BD}$:
2. $|\overrightarrow{AB} - \overrightarrow{AD}| = 2a$:
3. $|\overrightarrow{AB} + \overrightarrow{BC} + \overrightarrow{CD}| = a$:
4. $\overrightarrow{AB} \cdot \overrightarrow{BD} = \overrightarrow{DA} \cdot \overrightarrow{DC}$:
5. $2 \cdot \overrightarrow{AB} \cdot \overrightarrow{BC} = -a^2$:
6. $\overrightarrow{AC} \cdot \overrightarrow{BD} = |\overrightarrow{AB} + \overrightarrow{CD}|$:

20. Տրված են $A(-1;-1)$, $B(-1;\ 3)$, $C(-3;\ 1)$, $D(1;1)$ **կետերը:**

1. D կետը գտնվում է $y = 2x - 3$ ուղղի վրա:
2. $(0;\ 2)$ կետը գտնվում է BD ուղղի վրա:
3. B կետը գտնվում է A կենտրոնով և 4 շառավղով շրջանագծի վրա:
4. D կետն ընկած է AB տրամագծով շրջանից դուրս:
5. A, B և C կետերով անցնող շրջանագծի կենտրոնը գտնվում է $y = 1$ ուղղի վրա:
6. B կետը A կետի համաչափ կետն է $y = -x$ ուղղի նկատմամբ:

21. Տրված են $\vec{a}\{-1;\ 7\}$ **և** $\vec{b}\{-5;\ 5\}$ **վեկտորները:**

1. $\vec{a}$ և $\vec{b}$ վեկտորները համագիծ են:
2. $\vec{a}$ և $\vec{b}$ վեկտորների կազմած անկյունը սուր է:
3. $|\vec{a}| = |\vec{b}|$:
4. $\vec{a} + \vec{b}$ և $\vec{a} - \vec{b}$ վեկտորները ուղղահայաց են:
5. $|\vec{a} + \vec{b}|^2 + |\vec{a} - \vec{b}|^2 = 4|\vec{a}|^2$:
6. $\vec{a} - \vec{b}$ վեկտորը $\vec{a}$ և $\vec{b}$ վեկտորների հետ հավասար անկյուններ է կազմում:

www.aic.am

22. $ABCDEF$ **կանոնավոր վեցանկյան կողմի երկարությունը** a **է:**

1. $\overrightarrow{AB}+\overrightarrow{BC}=\overrightarrow{FD}$:
2. $\left|\overrightarrow{AB}-\overrightarrow{AF}\right|=\left|\overrightarrow{FD}\right|$:
3. $\overrightarrow{AD}=2\left(\overrightarrow{AB}+\overrightarrow{AE}\right)$:
4. $\overrightarrow{AC}=2\overrightarrow{AB}+\overrightarrow{AF}$:
5. $\overrightarrow{AC}\cdot\overrightarrow{BE}=0$:
6. $\overrightarrow{AB}\cdot\overrightarrow{BC}+\overrightarrow{AC}\cdot\overrightarrow{CE}=a^2$:

23. Ուղղանկյուն եռանկյան CA **և** CB **էջերը հարաբերում են ինչպես 4:3: Տրված է** AB**-ին ուղղահայաց** MN **հատված այնպես, որ** $M\in AB$, $N\in CB$, $MN=4$**: Հայտնի է, որ** $AMNC$ **քառանկյանը կարելի է ներգծել շրջանագիծ:**

1. BMN եռանկյունը նման է ACB եռանկյանը:
2. $AMNC$ քառանկյանը ներգծած շրջանագծի շառավիղը հավասար է ABC եռանկյանը ներգծած շրջանագծի շառավղին:
3. $CN>NM$:
4. $AM>AC$:
5. ABC եռանկյանը ներգծած շրջանագծի շառավիղը հավասար է 3-ի:
6. $AMNC$ քառանկյանը ներգծած շրջանագծի կենտրոնը գտնվում է AN հատվածի վրա:

www.atc.am

24. D **կետը** C **ուղիղ անկյունով** ABC **եռանկյան** CB **կողմի միջնուղղահայացի և** A **անկյան կիսորդի հատման կետն է,** O**-ն՝** ABC **եռանկյանն արտագծած շրջանագծի կենտրոնը, իսկ** E **և** F **կետերը համապատասխանաբար** CB **և** AC **էջերի միջնակետերն են:**

1. O կետը գտնվում է BC հատվածի միջնուղղահայացի վրա:
2. D կետը գտնվում է եռանկյունից դուրս:
3. DO հատվածի երկարությունը փոքր է եռանկյանն արտագծած շրջանագծի շառավղից:
4. D կետից AB ուղղին տարված ուղղահայացի հիմքը գտնվում է AB հատվածի շարունակության վրա:
5. O կետի հեռավորությունների գումարը E և F կետերից փոքր է ABC եռանկյանը ներգծած և արտագծած շրջանագծերի շառավիղների գումարից:
6. ADB անկյունը հավասար է ABC և BAC անկյունների գումարին:

25. Շրջանագծին ներգծած $ABCD$ **քառանկյան մեջ** $AB:CD=BC:DA=3:4$, $\angle DAB=90^0$**:**

1. AC-ն այդ շրջանագծի տրամագիծ է:
2. $AB=BC$:
3. A և C կետերը համաչափ են BD ուղղի նկատմամբ:
4. $\sin B>\sin D$:
5. ABC եռանկյան մակերեսը կազմում է ADC եռանկյան մակերեսի $\frac{3}{4}$-ը:
6. $ABCD$ քառանկյանը հնարավոր է ներգծել շրջանագիծ:

www.atc.am

26. ABC **եռանկյան կողմերը պարունակող ուղիղների հավասարումներն են.** $y=x+5$ (AB), $y=-x+7$ (BC), $y=-5$ (AC):

1. B կետի կոորդինատներն են՝ $(1;\ 5)$:
2. AC հատվածի երկարությունը 22 է:
3. $\overrightarrow{BA}$ և $\overrightarrow{BC}$ վեկտորների սկալյար արտադրյալը դրական է:
4. $(1;\ -5)$ կետը ABC եռանկյանն արտագծած շրջանագծի կենտրոնն է:
5. ABC-ն հավասարասրուն եռանկյուն է:
6. ABC եռանկյան մակերեսը հավասար է 120-ի:

27. Տրված են $x+y=6$ և $x-y=4$ **ուղիղները:**

1. Այդ ուղիղները փոխուղղահայաց են:
2. $x-y=4$ հավասարումով որոշվող ուղիղը Ox առանցքի դրական ուղղության հետ կազմում է բութ անկյուն:
3. Այդ ուղիղները հատվում են $(1;\ 5)$ կետում:
4. Oy առանցքի հետ տրված ուղիղների հատման կետերի հեռավորությունը 10 է:
5. Այդ ուղիղներով և Ox առանցքով սահմանափակված պատկերը հավասարասրուն եռանկյուն չէ:
6. Այդ ուղիղներով և Oy առանցքով սահմանափակված պատկերի մակերեսը 25 է:

28. $ABCD$ **հավասարասրուն սեղանի** AC **անկյունագիծն ուղղահայաց է** CD **սրունքին և** BE **բարձրությունը բաժանում է** $BF=8$ **և** $EF=1$ **երկարությամբ հատվածների:**

1. $ABCD$ սեղանին կարելի է արտագծել շրջանագիծ:
2. $AE:BC=1:9$:
3. $\Delta AFE\sim\Delta ABE$:
4. $FO>OC$, որտեղ O-ն $ABCD$ սեղանի անկյունագծերի հատման կետն է:
5. $S_{ABF}:S_{BCE}=1:8$:
6. ABC եռանկյանն արտագծած շրջանագծի շառավիղը 15 է:

www.atc.am

29. Տրված են O_1 և O_2 կենտրոններով համապատասխանաբար r_1 և $r_2\,(r_1 > r_2)$ շառավիղներով երկու հատվող շրջանագծեր , որոնց ընդհանուր լարը AB հատվածն է: AM լարը O_2 կենտրոնով շրջանագծի շոշափողն է, իսկ AN լարը O_1 կենտրոնով շրջանագծի շոշափողն է: AB հատվածի և O_1O_2 հատվածի հատման կետը K-ն է:

1. $AK : KB = r_1 : r_2$:
2. O_1O_2-ն ուղղահայաց է AB-ին:
3. $\angle AO_1O_2 = \angle AMB$:
4. $\angle ABM > \angle ABN$:
5. $AB < MB$:
6. $AB \geq \dfrac{MB + BN}{2}$:

30. Դիցուք $ABCD$-ն ուռուցիկ քառանկյուն է և M, N, P, Q կետերը համապատասխանաբար AB, BC, CD, DA կողմերի միջնակետերն են: O կետը MP և NQ հատվածների հատման կետն է:

1. $MNPQ$-ն զուգահեռագիծ է:
2. Եթե $NO = OP$, ապա $S_{ABCD} = \dfrac{AC \cdot BD}{2}$:
3. $MP^2 + NQ^2 = \dfrac{AC^2 + BD^2}{4}$:
4. $S_{AMQ} + S_{NCP} = S_{MBN} + S_{QPD}$:
5. Եթե $\angle A + \angle B = 180^0$, ապա $NQ > \dfrac{AB + CD}{2}$:
6. Եթե $S_{BNOM} < S_{NOPC}$, ապա $S_{AMOQ} > S_{QOPD}$:

www.atc.am

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ա/Հ	Ենթաառաջադրանքի համարը					
	1	2	3	4	5	6
1	սխալ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է
2	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է
3	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	սխալ է
4	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է
5	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է
6	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է
7	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է
8	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է
9	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է
10	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է
11	սխալէ	սխալէ	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է
12	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է
13	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	սխալ է
14	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է
15	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	սխալ է	ճիշտ է
16	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է
17	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է
18	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	սխալ է
19	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է
20	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է
21	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է
22	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է
23	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է
24	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	սխալ է	ճիշտ է
25	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է
26	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է
27	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է
28	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է
29	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է
30	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	սխալ է

www.stc.am

ԲԱԺԻՆ 6. ՏԱՐԱԾԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ

1. $ABCD$ շեղանկյան AB կողմի շարունակությունը հատում է C գագաթով անցնող α հարթությունը E կետում: BD ուղիղը զուգահեռ է α հարթությանը: AA_1-ը և DD_1-ը α հարթության ուղղահայացներն են ($ABCD$ հարթությունն ուղղահայաց չէ α հարթությանը):

1. $BD \parallel CE$:
2. $CB > BE$:
3. $DD_1 = \frac{1}{3} AA_1$:
4. A_1BE հարթությունն ուղղահայաց է α հարթությանը:
5. $\angle A_1CE = 90^0$:
6. $BD \perp A_1C$:

2. Տրված է $ABCDA_1B_1C_1D_1$ խորանարդը, որի կողը 2 սմ է:

1. Խորանարդի կողմնային մակերևույթի մակերեսը 16 սմ^2 է:
2. ABC_1D_1 հատույթն ուղղանկյուն է:
3. A_1B_1CD հատույթի մակերեսը 8 սմ^2 է:
4. $B_1C \perp AB$:
5. DA_1B_1 և AD_1C_1 հարթությունների հատման գիծը զուգահեռ է AB կողին:
6. $ADCB_1$ երկնիստ անկյան գծային անկյունը 60^0 է:

3. $ABCDA_1B_1C_1D_1$ պրիզմայի հիմքը շեղանկյուն է և $\angle A_1AD = \angle A_1AB = \alpha$:

1. Եթե $\alpha \neq 90^0$, ապա պրիզման թեք է:
2. Եթե $\angle DAB = 120^0$, ապա $\alpha > 120^0$:
3. A_1 գագաթի պրոյեկցիան ABC հարթության վրա գտնվում է AC ուղղի վրա:
4. α-ի ցանկացած արժեքի դեպքում AB_1C եռանկյունը հավասարասրուն է:
5. Եթե $\alpha = 60^0$, ապա AA_1 կողին առընթեր երկնիստ անկյունը փոքր է $\angle BAD$-ից:
6. CC_1 և BD ուղիղների կազմած անկյունը մեծ է 120^0-ից:

www.atc.am

4. **$ABCA_1B_1C_1$ թեք եռանկյուն պրիզմայի հիմքը ABC հավասարասրուն եռանկյունն է՝ $AB = AC$ և $AB \neq BC$: A_1 գագաթի պրոյեկցիան հիմքի հարթության վրա ABC եռանկյան միջնագծերի հատման O կետն է, D-ն՝ AC կողմի միջնակետը:**

1. A_1D-ն ուղղահայաց է AC-ին:
2. $AO \perp BB_1$:
3. AC_1B_1-ը հավասարասրուն եռանկյուն է:
4. B_1A_1AC երկնիստ անկյան գծային անկյունը մեծ է $\angle BAC$-ից:
5. A_1 կետը հավասարահեռ է ABC եռանկյան գագաթներից:
6. A_1ABD քառանիստի ծավալը հավասար է պրիզմայի ծավալի կեսին:

5. **Տրված է $SABC$ բուրգը: $AB = 4$, $BC = 5$, $AC = SA = 3$, $\angle SAC = \angle SAB = 90^0$, E-ն AC կողի միջակետն է:**

1. SA-ն և BC-ն խաչվող ուղիղներ են:
2. BA-ն ուղղահայաց է ASC հարթությանը:
3. $CSAB$ երկնիստ անկյունը 90^0 է:
4. SBC և ABC հարթությունների կազմած անկյունը 45^0 է:
5. $SABE$ քառանիստի ծավալը հավասար է $SEBC$ քառանիստի ծավալին:
6. Բուրգին արտագծած գնդային մակերևույթի շառավղի երկարությունը մեծ է 3-ից:

6. **$DABC$ բուրգի հիմքը BC ներքնաձիգով ABC ուղղանկյուն եռանկյունն է: Կողմնային կողերը միմյանց հավասար են:**

1. Բուրգի բարձրության հիմքը ABC եռանկյանը ներգծած շրջանագծի կենտրոնն է:
2. AD-ն և BC-ն խաչվող ուղիղներ են:
3. Բուրգի գագաթից տարված նիստերի բարձրությունները հավասար են:
4. Բուրգին հնարավոր է ներգծել գնդային մակերևույթ:
5. $DABC$ երկնիստ անկյունը փոքր է $DBCA$ երկնիստ անկյունից:
6. Բուրգին արտագծած գնդային մակերևույթի շառավիղը հավասար է DBC եռանկյանը արտագծած շրջանագծի շառավղին:

www.atc.am

7. $DABC$ **բուրգի հիմքը** $3\sqrt{3}$ **կողմով կանոնավոր եռանկյուն է,** $DA=3\sqrt{3}$**:** DAB **և** DAC **նիստերն ուղղահայաց են** ABC **հիմքի հարթությանը:** ABC **հիմքի** O **կենտրոնով տարված է** AC **և** DA **կողերին զուգահեռ հատույթ:**

1. $DACB$ երկնիստ անկյունը 90^0 է:
2. Հատույթն ուղղանկյուն եռանկյուն է:
3. $DBCA$ երկնիստ անկյունը փոքր է 45^0-ից:
4. Հատույթը հավասարասրուն եռանկյուն է:
5. $BDAC$ երկնիստ անկյունը 90^0 է:
6. $DABC$ բուրգին արտագծած գնդային մակերևույթի կենտրոնը հատույթին պատկանող կետ է:

8. $SABC$ **եռանկյուն բուրգի կողմնային կողերը զույգ առ զույգ փոխ–ուղղահայաց են և ունեն** $SA=a$, $SB=b$, $SC=c$ **երկարություններ:**

1. $SABC$ բուրգի կողմնային մակերևույթի մակերեսը հավասար է $\frac{1}{2}\left(ab+bc+ca\right)$:
2. CB-ն ուղղահայաց չէ ASB հարթությանը:
3. $SC\perp AB$:
4. $ASCB$ երկնիստ անկյունը սուր է:
5. Բուրգի ծավալը հավասար է $\frac{abc}{2}$:
6. Բուրգի S գագաթից տարված բարձրության հիմքը ABC եռանկյան բարձրությունների հատման կետն է:

9. Տրված է SB **բարձրությամբ բուրգ, որի հիմքը** $ABCD$ **շեղանկյունն է,** $\angle A<90^0$**:**

1. SBD-ն բութանկյուն եռանկյուն է:
2. AC և SD ուղիղները հատվում են:
3. Բուրգի բոլոր կողմնային նիստերը ուղղանկյուն եռանկյուններ են:
4. ASC հարթությունը ուղղահայաց է SBD հարթությանը:
5. $SACD$ երկնիստ անկյան գծային անկյունը մեծ է 90^0-ից:
6. SBC և SAD հարթությունների հատման գծի և AD ուղղի հեռավորությունը հավասար է SD հատվածի երկարությանը:

www.atc.am

10. $SABCD$**-ն կանոնավոր քառանկյուն բուրգ է, որի կողմնային կողը հավասար է հիմքի կողմին:** SO**-ն բուրգի բարձրությունն է:**

1. CD-ն զուգահեռ է SAB հարթությանը:
2. O-ն հիմքի կենտրոնն է:
3. Բուրգի կողմնային կողը հիմքի հարթության հետ կազմում է 45^0 անկյուն:
4. Բուրգի կից կողմնային նիստերի կազմած երկնիստ անկյունը փոքր է հանդիպակաց կողմնային նիստերի կազմած երկնիստ անկյունից:
5. Բուրգի հիմքի կից կողմերի միջնակետերով և դրանց հետ չհատվող կողմնային կողի միջնակետով անցնող հարթությամբ հատույթը եռանկյուն է:
6. O կետը հավասարահեռ է բուրգի գագաթներից:

11. $SABCD$ **բուրգի հիմքը** $ABCD$ **զուգահեռագիծն է:** M **կետը** SA **կողի այնպիսի կետ է, որ** $SM:MA=1:3$**:**

1. AM և SC ուղիղները հատվում են:
2. M կետով բուրգի հիմքին զուգահեռ հարթությամբ հատույթը զուգահեռագիծ է:
3. M կետով SDC նիստին տարված զուգահեռ հարթությամբ բուրգի հատույթն ուղղանկյուն է:
4. SAB և SCD հարթությունների հատման գիծն ուղղահայաց է քառանկյուն բուրգի բարձրությանը:
5. Եթե Q-ն AB կողի միջնակետն է, իսկ E-ն՝ AD կողի միջնակետը, ապա $MAEQ$ բուրգի ծավալը $SABCD$ բուրգի ծավալի $\frac{1}{16}$ մասն է:
6. Եթե $SA=SB$, $SC=SD$ և $SA\neq SD$, ապա բուրգի բարձրությունն անցնում է հիմքի անկյունագծերի հատման կետով:

www.atc.am

12. $SABCD$ **բուրգի հիմքը հավասարասրուն սեղան է, ընդ որում** $AB = CD$: SO**-ն բուրգի բարձրությունն է:**

1. Բուրգի հիմքին զուգահեռ հատույթը զուգահեռագիծ է:
2. A և D կետերը SBC հարթությունից ունեն միևնույն հեռավորությունը:
3. SO և CD ուղիղները միշտ խաչվող են:
4. SAB և SCD նիստերը չեն կարող միաժամանակ ուղղահայաց լինել հիմքի հարթությանը:
5. Եթե բուրգի S գագաթը հավասարահեռ է հիմքի գագաթներից, ապա O կետը կգտնվի սեղանի միջին գծի վրա:
6. Եթե $BC = \frac{1}{2} AD$, ապա $SABC$ բուրգի ծավալը հավասար է $SACD$ բուրգի ծավալի կեսին:

13. O **կետից տարված են** OA, OM, ON **ճառագայթներն այնպես, որ** $\angle MON = 90^0$, $\angle AON = \angle AOM = 60^0$: A **կետից** MON **անկյան կիսորդին տարված է ուղղահայաց հարթություն, որը** OM **և** ON **ճառագայթները հատում է համապատասխանաբար** C **և** B **կետերում:** H **-ը** BC **-ի միջնակետն է:**

1. OHB եռանկյունը հավասարասրուն է:
2. OAB եռանկյունը կանոնավոր է:
3. $AH > OH$:
4. ABC -ն կանոնավոր եռանկյուն է:
5. $AOBC$ երկնիստ անկյունը 45^0 է:
6. H -ը $OABC$ բուրգին արտագծած գնդային մակերևույթի կենտրոնն է:

14. $SABCD$ **բուրգի հիմքը** $ABCD$ **քառակուսին է:** SB **կողն ուղղահայաց է հիմքի հարթությանը: Կողմնային նիստերից երկուսը հիմքի հարթության հետ կազմում են** 45^0**-ի անկյուն:**

1. SDC հարթությունն ուղղահայաց է SBC հարթությանը:
2. SD կողը հիմքի հարթության հետ կազմում է 60^0-ի անկյուն:
3. AC ուղիղն ուղղահայաց է SD ուղղին:
4. D կետի հեռավորությունը SBC նիստի հարթությունից փոքր է DC կողի երկարությունից:
5. A կետի հեռավորությունը SCD հարթությունից փոքր է SD կողի երկարության կեսից:
6. AD կողով անցնող կամայական հարթությամբ հատույթն ուղղանկյուն է:

www.atc.am

15. $SABCD$ **բուրգի հիմքն անհավասար կից կողմերով ուղղանկյուն է,** SB **կողմնային կողն ուղղահայաց է հիմքի հարթությանը:**

1. SCD անկյունը փոքր է 90^0-ից:
2. AC և SD ուղիղները փոխուղղահայաց են:
3. AC և SD ուղիղները խաչվող են:
4. SAB հարթությունն ուղղահայաց է SAD հարթությանը:
5. Բուրգին արտագծած գնդային մակերևույթի կենտրոնը SD-ի միջնակետն է:
6. $SABCD$ բուրգին հնարավոր է ներգծել գունդ:

16. $ABCDA_1B_1C_1D_1$ **զուգահեռանիստի յուրաքանչյուր նիստը** a **և** b **անկյունագծերով շեղանկյուն է, իսկ** A **գագաթի բոլոր հարթ անկյունները սուր են:**

1. Զուգահեռանիստի կողմնային մակերևույթի մակերեսը հավասար է $3ab$:
2. C_1 գագաթից $ABCD$ հարթությանը տարված ուղղահայացի հիմքը գտնվում է AC անկյունագծի վրա:
3. Զուգահեռանիստին հնարավոր չէ արտագծել գնդային մակերևույթ:
4. BD-ն ուղղահայաց է AA_1C_1 հարթությանը:
5. Կողմնային կողերին ուղղահայաց հատույթը կարող է լինել քառակուսի:
6. $B_1D > BD_1$:

17. $ABCA_1B_1C_1$ **ուղիղ եռանկյուն պրիզմայի հիմքը ուղղանկյուն եռանկյուն է, որի ներքնաձիգը՝** $AB = 2$**, և** $\angle B = 15^0$**: Պրիզմայի ամենամեծ մակերես ունեցող կողմնային նիստը քառակուսի է:**

1. Պրիզմայի ծավալը 1 է:
2. B_1ACB երկնիստ անկյան մեծությունը փոքր է 45^0-ից:
3. Պրիզմայի կողմնային մակերևույթի մակերեսը փոքր է 8-ից:
4. Պրիզմային արտագծած գնդային մակերևույթի կենտրոնը գտնվում է AA_1B_1B նիստի վրա:
5. Պրիզմային արտագծած գնդային մակերևույթի շառավիղը $2\sqrt{2}$ է:
6. Պրիզմային հնարավոր չէ ներգծել գնդային մակերևույթ:

www.atc.am

18. $ABCDA_1B_1C_1D_1$ **կանոնավոր քառանկյուն պրիզմայի** AC_1 **անկյունագիծը հիմքի հարթության հետ կազմում է** 45^0 **անկյուն: Պրիզմայի անկյունագծերը հատվում են** O **կետում:**

1. Պրիզմայի անկյունագիծը 2 անգամ մեծ է հիմքի կողմից:
2. B_1D և A_1C անկյունագծերը փոխուղղահայաց են:
3. Պրիզմայի անկյունագծի և կողմնային նիստի հարթության կազմած անկյունը 60^0 է:
4. AOB-ն հավասարակողմ եռանկյուն է:
5. AA_1, AD և DC կողերի միջնակետերով տարվածհարթությանն պրիզմայի հիմքի հարթության կազմած անկյունը հավասար է $arctg2$:
6. Պրիզմային արտագծված գնդային մակերևույթի շառավիղը հավասար է հիմքի անկյունագծին:

19. $ABCDA_1B_1C_1D_1$ **թեք զուգահեռանիստի հիմքը շեղանկյուն է:** AA_1 **կողմնային կողը հիմքի** AB **և** AD **կողմերի հետ կազմում է հավասար անկյուններ:**

1. Զուգահեռանիստի անկյունագծերը հավասար են:
2. $V=\frac{1}{2}BD\cdot AC\cdot h$, որտեղ h-ը զուգահեռանիստի բարձրությունն է, V-ն՝ ծավալը:
3. $CC_1\perp BD$:
4. Զուգահեռանիստին կարելի է արտագծել գնդային մակերևույթ:
5. BB_1D_1D հարթությունն ուղղահայաց է ABC հարթությանը:
6. Զուգահեռանիստի կողմնային մակերևույթի մակերեսը փոքր է հիմքի պարագծի և կողմնային կողի արտադրյալից:

20. $DABC$ **բուրգի հիմքը** C **ուղիղ անկյունով** ABC **եռանկյունն է:** DA **կողմնային կողն ուղղահայաց է հիմքի հարթությանը, իսկ** DC **կողմնային կողի վրա վերցված է** E **կետն այնպես, որ** $AE\perp DC$**:**

1. DC-ն ուղղահայաց է AB-ին:
2. $ADCB$ երկնիստ անկյանն 90^0 է:
3. AE-ն ուղղահայաց է DBC հարթությանը:
4. $EABD$ բուրգին արտագծած գնդային մակերևույթի կենտրոնն ընկած է EDB նիստն ընդգրկող հարթության մեջ:
5. DC-ն $DABC$ բուրգին արտագծած գնդային մակերևույթի տրամագիծ է:
6. $DABC$ և $EABD$ բուրգերի ծավալների հարաբերությունը հավասար է $\frac{DC}{DE}$:

www.atc.am

21. $SABC$ **բուրգի հիմքը** C **ուղիղ անկյունով** ABC **հավասարասրուն ուղղանկյուն եռանկյունն է: Բուրգի** SAB **և** CAB **նիստերը փոխուղղահայաց են:** S **և** C **գագաթներից համապատասխանաբար** ABC **և** SAB **նիստերին տարված ուղղահայացները հատվում են և հավասար են:**

1. S գագաթից տարված SAB եռանկյան բարձրությունը և բուրգի բարձրությունը համընկնում են:
2. Բուրգին արտագծած գնդային մակերևույթի կենտրոնը գտնվում է բուրգի մակերևույթից դուրս:
3. SB և AC ուղիղների կազմած անկյունը 60^0 է:
4. Բուրգի հիմքի էջերի միջնակետերով և S գագաթով տարված հարթությամբ առաջացած հատույթի գագաթի S անկյունը 60^0-ից մեծ է:
5. Բուրգի բոլոր նիստերը հավասարամեծ են:
6. $ACSB$ երկնիստ անկյունը սուր է:

22. $ABCDA_1B_1C_1D_1$ **թեք պրիզմայի հիմքը ուռուցիկ քառանկյուն է, ընդ որում** $AB=AD$, $CD=CB$: AA_1 **կողմնային կողը հիմքի** AB **և** AD **կողմերի հետ կազմում է հավասար անկյուններ:**

1. Պրիզմայի հիմքի անկյունագծերը փոխուղղահայաց են:
2. $V=BD\cdot AC\cdot h$, որտեղ h-ը պրիզմայի բարձրությունն է, V-ն՝ ծավալը:
3. $CC_1\perp BD$:
4. ACC_1 հարթությունն ուղղահայաց է ABC հարթությանը:
5. Պրիզմայի հնարավոր չէ արտագծել գնդային մակերևույթ:
6. Պրիզմայի կողմնային մակերևույթի մակերեսը մեծ է հիմքի պարագծի և կողմնային կողի արտադրյալից:

23. $EABC$ **բուրգի** EA **և** EB **կողմնային կողերը հավասար են և կազմում են** 60^0 **անկյուն:** EC **կողմնային կողը ուղղահայաց է** EA **և** EB **կողերին և հավասար է** EA **կողի կեսին:**

1. $ACEB$ երկնիստ անկյունը 60^0 է:
2. AE և BC կողերը փոխուղղահայաց են:
3. EB կողի և բուրգի ABC հիմքի հարթության կազմած անկյունը 30^0 է:
4. AE, AC կողերի միջնակետերով և B գագաթով տարված հարթությամբ բուրգի հատույթն ուղղանկյուն եռանկյուն է:
5. AB և CE ուղիղների հեռավորությունը հավասար է BE հատվածի երկարությանը:
6. Բուրգին արտագծած գնդային մակերևույթի կենտրոնը գտնվում է բուրգից դուրս:

www.atc.am

24. Կանոնավոր քառանկյուն բուրգի հիմքի կողմը $\sqrt{3}$ է, իսկ հիմքին առընթեր երկնիստ անկյունը՝ 60^0:

1. Բուրգի հարթագիծը մեծ է $\sqrt{3}$-ից:
2. Բուրգի ծավալը 3 է:
3. Բուրգի հիմքի մակերեսը 2 անգամ փոքր է կողմնային մակերևույթի մակերեսից:
4. Բուրգի հանդիպակաց կողմնային նիստերով կազմված երկնիստ անկյունը 60^0 է:
5. Բուրգի կողմնային նիստերը կանոնավոր եռանկյուններ են:
6. Բուրգի հիմքի կենտրոնի և կողմնային նիստի հարթության հեռավորությունը $\frac{3}{4}$ է:

25. AM-ը և DK-ն $ABCD$ բուրգի ADB նիստի միջնագծերն են, որոնք հատվում են E կետում, իսկ DN-ը և AP-ն՝ ACD նիստի միջնագծերը, որոնք հատվում են F կետում:

1. MN և KP ուղիղները խաչվող են:
2. EF և BC ուղիղները զուգահեռ են:
3. $EF:BC=1:3$:
4. Գոյություն ունի BC ուղղին զուգահեռ և AM, DN հատվածները հատող միայն մեկ ուղիղ:
5. E կետով անցնող և ABC հարթությանը զուգահեռ հարթությամբ բուրգի հատույթի մակերեսը հավասար է ABC նիստի մակերեսի $\frac{2}{3}$-ին:
6. $KANF$ բուրգի ծավալը հավասար է $FAED$ բուրգի ծավալին:

26. Կոնի առանցքային հատույթը AC հիմքով ABC հավասարասրուն եռանկյուն է: Կոնի բարձրությունը 4 սմ է, իսկ ծնորդը՝ 8 սմ:

1. Կոնի ծնորդը հիմքի հարթության հետ կազմում է 30^0 անկյուն:
2. Կոնի կողմնային մակերևույթի փռվածքը 8 սմ շառավղով սեկտոր է:
3. Կոնի ծավալը 64 սմ^3 է:
4. Կոնին արտագծած գնդային մակերևույթի շառավիղը փոքր է կոնի բարձրությունից:
5. Կոնի B գագաթով անցնող հատույթներից B գագաթում մեծագույն անկյունն ունի առանցքային հատույթը:
6. Կոնի գագաթով անցնող հատույթների մակերեսներից ամենամեծը 32 սմ^2 է:

www.atc.am

27. ABC-ն ուղղանկյուն եռանկյուն է ($\angle C = 90^0$), և AMC եռանկյան հետ ունի ընդհանուր AC կողմը: Այդ եռանկյունների հարթությունները փոխուղղահայաց են, $MC = MA$ և D-ն AC կողմի միջնակետն է:

1. MD-ն $MABC$ բուրգի բարձրությունն է:
2. $\angle MBD > \angle MBA$:
3. MBC-ն ուղղանկյուն եռանկյուն է:
4. MBA և MBC հարթությունները փոխուղղահայաց են:
5. MC-ն $BMCD$ բուրգին արտագծած գնդային մակերևույթի տրամագիծն է:
6. AB հատվածի միջնակետի հեռավորությունը MBC հարթությունից հավասար է MDC եռանկյան փոքր բարձրությանը:

28. AB հատվածի ծայրակետերը գտնվում են 120^0-ի հավասար երկնիստ անկյան տարբեր նիստերում A և B կետերից երկնիստ անկյան կողին տարված են AC և BD ուղղահայացները, ընդ որում $AC = m$, $CD = n$, $BD = k$:

1. AB և CD ուղիղները խաչվող են:
2. AC և BD ուղիղները զուգահեռ են:
3. $\angle ACB > 120^0$:
4. $AB = \sqrt{m^2 + n^2 + k^2 - mk}$:
5. Երկնիստ անկյան նիստերը շոշափող գնդային մակերևույթի կենտրոնը գտնվում է երկնիստ անկյունը կիսող հարթությունում:
6. $ABCD$ բուրգին արտագծած գնդային մակերևույթի կենտրոնը գտնվում է AD, CD և BC հատվածների միջնակետերով անցնող հարթությունում:

www.atc.am

29. *SABCD* **բուրգի հիմքը քառակուսի է և** *SAB* **նիստը ուղղահայաց է** *ABCD* **հարթությանը:** *SAB* **եռանկյունը կանոնավոր է, իսկ** *E* **և** *F* **կետերը համապատասխանաբար** *AB* **և** *CD* **կողերի միջնակետերն են:**

1. *SE* -ն բուրգի բարձրությունն է:
2. *SC* -ի և *ABCD* -ի կազմած անկյունը մեծ է *SCB* անկյունից:
3. *SCDE* երկնիստ անկյանը մեծ է *SAB* և *SCD* հարթությունների կազմած անկյունից:
4. *AC* և *SD* ուղիղները փոխուղղահայց են:
5. *SABCD* բուրգին կարելի է արտագծել գնդային մակերևույթ:
6. *AB* և *SC* ուղիղների հեռավորությունը հավասար է *SEF* եռանկյան փոքր բարձրությանը:

30. *SABCD* **-ն կանոնավոր քառակյուն բուրգ է:** A_1, B_1, C_1, D_1 **և** *E* **կետերը համապատասխանաբար** *SA*, *SB*, *SC*, *SD* **և** *CD* **կողերի միջնակետերն են:** *O* **կետը** *ABCD* **հիմքի կենտրոնն է:**

1. OA_1B_1 հարթությունը զուգահեռ է *SDC* հարթությանը:
2. ED_1 ուղիղը հատում է AA_1C հարթությունը:
3. $ABCDA_1B_1C_1D_1$ հատած բուրգի ծավալը 7 անգամ մեծ է $SA_1B_1C_1D_1$ բուրգի ծավալից:
4. AB_1D_1 հարթությամբ հատույթը *SC* կողը տրոհում է 1:4 հարաբերությամբ՝ հաշված *S* գագաթից:
5. $ABCDA_1B_1C_1D_1$ հատած բուրգին կարելի է ներգծել գնդային մակերևույթ, եթե $\angle SDC = \arccos\frac{1}{3}$:
6. *AC* -ի և *SE* -ի հեռավորությունը մեծ է *SOD* եռանկյան փոքր բարձրության կեսից:

www.aic.am

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ա/Հ	Ենթաառաջադրանքի համարը					
	1	2	3	4	5	6
1	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է
2	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է
3	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	սխալ է
4	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է
5	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է
6	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է
7	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	սխալ է
8	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է
9	սխալ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է
10	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է
11	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	սխալ է
12	սխալ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	սխալ է	ճիշտ է
13	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	սխալ է	ճիշտ է
14	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է
15	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է
16	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է
17	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է
18	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է
19	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է
20	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է
21	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	սխալ է
22	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է
23	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է
24	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է
25	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է
26	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է
27	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է
28	ճիշտ է	սխալ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է
29	ճիշտ է	սխալ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է
30	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է

www.atc.am

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ

թեստային առաջադրանքների

ԾՏԵՄԱՐԱՆ

www.atc.am

Տպագրված է «ԱՍՏՂԻԿ ԳՐԱՏՈՒՆ»
հրատարակչության տպարանում
Պատվեր՝ 195

«Րաբունի» հրատարակչություն
Երևան, Կորյունի 19 Ա